

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն



- Յ. ԿԱՐԱՊԵՆՑ Հաղորդութիւն
- Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ Վերընծայում
- » Ներահայեաց սեւեռում
- Ա. ԱՐԷԼԵԱՆ Զինադուլ 27...
- Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ Իլիաս Տէյրի՝
Երկու ժամանակներու միջեւ
- Ի. ՏԵՅՐԻ Սպաննուած ասպետը ոտքը կը դնէ հողին
- Փ. ՃԵՐԱՆԵԱՆ Անդրադարձ...
- » Երբ ես չըլլամ այլեւս...
- Լ. ՄԿՐՏՁԵԱՆ «Հայութեան» ու «մարդկային»ի
առընչութիւնը կեանքում
եւ գրականութեան մէջ
- Հ. ՍԱՀԵԱՆ Տողը, բառը, տառը
- * * * Վիրատրական
վերհրատրականներ...
- Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ Արդի բանաստեղծութեան
բառուղիին դիմաց
- * * * Մշակութային լուրեր

Բնագրի

ԱՄՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

ԺՀ. ՌԱԿՐԻ. ԹԻՒՂ

ՍՈՒՆԻԿ

1979

ԳԵՐԱԹԻՐ

Յ. ԿԱՐԱՊԵՆՑ

Հ Ա Ղ Ո Ր Դ Ո Ւ Թ Ի Ի Ն

Գնացքի պատուհանից կուլ էր զնում հիւսիս-արեւելտան ցամաքը՝ մերթ րնդ մերթ կտրատելով մերձ-ձմեռային դորշ համայնապատկերը, այս ու այն կողմ սունկի պէս բուսած տնակներ ու մեկուսի դաւառային կայաններ, որոնց պատերի վրայ տակաւին երզում էին Բրողուէյի անցեալ տարւայ երաժշտութատերգութիւնների դունատ զովաղղները: Աթոռակից կնոջ զլիւ վրայ պղնձադոյն արեւ էր իջել, սղիւնձը թափուել էր նրա այտերին՝ շրջափակելով նրա խոշոր թաւիչ աչքերը, սակայն ճենապակեայ դիմատուօրի ֆոնում նա միայն տեսնում էր, զդում էր Նոնայի հատուն շրթունքները այնքան խոտուտներով յաղեցած ու այնքան անմաւչլի, որ նրան թւում էր, թէ յաւիանհանութիւն պիտի անցնել հասնելու նրանց: Սակայն այդպէս չէր երէկ զիշեր, երբ Բոլոմբիա համալսարանի Գեղարուեստից դասչիւճի վերացապալանների անկիւնում հանդիպման հենց առաջին վայրկեանին ուղեց Բէյրութից ժամանած այդ նկարչուհու զլուխն ստնել իր արերի մէջ եւ ծնել նրա բերանի նեկտարը, մինչեւ որ աննիւթանար նուս հիւթը: Երէկ զիշեր նա համարձակ էր: Որպէս մայրաքաղաքից ժամանած կառավարական ճարտարապետի, նրա շուրջն էին դառնում Նիւ Եորքի րնկերային վերնախաւը մաղլլած ու մաղլլել վորձող տնդահարները՝ անարիւն ու չքրտնած ձեռքերով, իւրաքանչիւրի զլխում ելեւմտական կարիանդակի մի խոշոր պատառի հիւթեղ հետանկար-նորելուկ ճարտարապետներ, լլլրձուն շինարարներ եւ ինքնութեան հետամուտ սենեկայարդարներ — ամբողջ Ըոկալը Ամերիկայի Նոր Քաղաքաշինութեան, Հեղասահ մթնոլորտում սակայն առկայ էր շտոմբարումս վայմանադրերի թանաքը, շահաւէտ աճուրդը, կանայք՝ մշակուած

կիսադէմերով, սպիտակ մխերով, Թանկադին Թափուող շղարչներով, դուստր անդորուրութեամբ: Նորածնութիւններէ տօնահանդէս: «Ահ, այդ դո՞ւք էք, պարոն Աղամեան, այս ի՞նչ սքանչելի անակնկալ»: Հապա ո՞վ: Նոնան ու իր պատասաները: Մոռացել էին Նոնային: Արուեստադէտը պատրուակ էր: Վերձինի բանաստեղծ, ցեղի տաւիղահար, ակերումի վկայ, սեւի վրայ արին, գոյններէ շառագ, բնուած դժերի աղաղակ, հառաչանքը ձեւերէ, հնդդինը մեննող քաղաքի եւ այնքա՛ն մատղաշ, հազիւ քսանեօթ տարեկան: Իր դուստրը կարող էր լինել: Նոնայի մարմինը հոսում էր տօնահանդէսում, անգաղտնիք, համակ նուիրում, միայն նրա աչքերն էին, որ իրենց մէջ արտացոլում էին Լիբանանի ողբերգութիւնը: Մի տեղ քարացել էին լճերը: Բուրումնաւէտ Ժխորի մէջ նա մօտեցաւ իր արեւնակցին, առաւ արեւը իր արեւրում, սեղմեց ու ուզեց, որ քանդուէր պատմութիւնը, որ տարբեր կառոյց ստացած լինէր տիեզերքը, որ յաւերժանար պահը եւ պահէ մէջ անէանար իր կեանքը Նոնայի կեանքում: Իր լուռ տառապանքում այնքան ցանկալարոյց էր կինը: Եւ յանկարծ ձերբակ չեղքի պէս երկնքից իջաւ իր սիրած բանաստեղծի խօսքը — Ծաղիկները մնացին հեռում, հեռուն հեռացաւ, դարձաւ անհող խինդ ու արեւատ Կիրակի ու նաեւ առուտ ու տնչերի ջրվէժ, դգալ ծաղիկների հեռաւոր ցուրտը եւ իր կեանքի մօտալուռ աշունը, երբ անտառը նօսրանում է եւ ծառերը լուռ են յաւիտեան: Չսիրեց Նոնայի չափազանց քաղաքավար վերարեմունքը, այդ անտանելի «Դուք»երն ու «Ձեր»երը, որոնք կարծէք պարկայներ էին շարում աշխարհի բոլոր ծաղիկների վրայ: Այրուհանդերձ, Նոնան ընդունեց իր հրաւերը, ի՞նչ հող, թէ՛ մակոյկները վաղուց քանդել են իրենց առագաստները եւ մերկացած կայանքը աւում են իրենց սպիտակ հեւքերի հեաղհեաղ մարող շունչը:

Երկաթադձերը կառչել են համանման մեծ ու փոքր քաղաքների փշտերին, այնքան մօտ, որ դնացքը երբեմն թւում է, թէ բնակարանների միջով է անցնում, քերում գործարանների պատերը եւ մըցալաղբի մէջ մտնում հեռաւոր բլուրների սփոփիչ կորութիւնների հետ: Ամբերիկայի արդիւնարեւրական արեւները, յողմած մետաղների ձովնչը եւ ակշորե արտադրանքների հեղեղը, որը սրբատօրէ քանդում է բնութեան կշռոյթը՝ տարածութիւն ցանելով մարդկանց դէմքին: Նոնան տակաւին ապրում է Լիբանանի արհաւիրքը: Հաղորդակցութեան թելերը պատշաճի սահմաններից դուրս չեն դալիս: Չապանձուել է Աղամեանը: Ի՞նչ սակ մի կնոջ, որը մի ամբողջ կեանք Միջերկրականի արին թողած, եկել ու իր անդուհանքի պատասաններ է ցանել Նիւ Եորքի պերճ ցուցադրարահներում: Այդպիսով կը փրկուի՞ կացութիւնը: Արդեօք մարդիկ կը հասկանա՞ն աղէտի խորութիւնը: Ինչպէ՞ս սկսել, ո՞ր մէկը պատել, երբ ամէն մի կեանք մի անվերջանալի ողբասական է, երբ ամէն մի քայլ անակնկալ մի ժամադրութիւն է մահուան հետ, դրուե՞լ է Հայոց եղեռնի պատմութիւնը, վերապրողները ինքնակամ լուել են, քարացել գրիչները, երբ մարդկային ընկալումից դուրս է եղելութիւնը, հողեվարքը քաղաքի, ինքնասպանութիւնը հայրերի ու եղբայրների, խոչառնողումը հարազատ գաւակների ու ապակիացած ողբը Լիբանանի ջուրերի ու աղբիկների: Լիբանանի դուատրը հիմա իր կողքին՝ բոլոր աշխարհների վերջն է կուտակել իր սրտում եւ լուռ արասուում է, նոր վիշտերը հնանում են, արմատանում, դառնում փրկութիւն, եթէ նոյնիսկ սառոյցէ ծաղիկներ դոյնանան սպասուող ձմեռից: Հայտացքը կիսաթեք՝ Նոնան լուռ էր Աղամեանի կիսաարտ նախադասութիւնները եւ զարմանում, որ մարդիկ տակաւին զգալ դիտեն: Չափազանցուած բաներ էր լսել նրա մասին եւ հիմա ներքուստ դո՛հ էր, որ

նա այն չէր՝ ինչ պատկերացրել էր, մոխրացած դուռն, աստապանքի ակօսներ եւ ամերիկայնացած կենցաղի արեւելեան մի ինքնասախ պարբերակ, մազոտ ու անհանդիստ, երբ արտաքննապէս ամէն ինչ խաղաղ է: Ի դուր չէ, որ նրա ճարտարապետական կառոյցներում ինչ-որ զսպուած խենթութիւն կայ, կրքի մըրիկ ու ձեւերի սեռայնութիւն: Առանց Արեւելքի լիճ պիտի լինէր աշխարհի վիճակը: Ուրախ էր նրա հետ, երբեմն առանց խօսելու հասկանում էր նրան: Ադամեանը ոչինչ էր հասկանում: Աստ, յղուած մարմարները քառակուսի տուփի էին վերածել նրա ներաշխարհը, այլեւ շինում էր ինքնաբերաբար՝ ըստ նիւթի ու դրամական վարձատրութեան, օրինակում էր նախկին օրինակը եւ հռչակի ջերմութեան տակ յղինում էր նրա մարմինը, այնքան բթացել էր նրա անցեալը, որ ներկան սալալատակի պէս ողորկ էր, ամէն քայլ կրկնութիւնը նախորդ քայլերի, անդիմադրի՞ծ ու անվրդով:

Մի տեղ կանդ առաւ դնացքը: Շատ կայարաններում էր կանդ առել դնացքը, սակայն այստեղ մեծ եռուղեռ կար: Ճիւղաբլիթիան իր զուակնեքին օտարութիւն էր ուղարկում: Ամբողջ մի սերունդ արշաւում էր մայրաքաղաքի վրայ: Ադամեանը զղաց, որ խօսելիս չնշահեղձ է լինում: Նա չընշահեղձ չէր եղել Փարիզում, Լոնդոնում, Մադրիդում ու ժընեւում, ուր օտարած շապիկով կանանց դիրկն էր մտել, անասելի յիմարութիւններ մըմընջացել եւ առանց հրաժեշտի դիմաւորել առաւօտը: Հիմա նա վախենում էր խօսքից, խուսափում էր Նոնայի հայեացքից, որ դարուն էր, ամբարտաւորէն հմայելն ու տրտում, ինչպէս տրտմութիւնը ասլիլեան մանուշակի, լայն, խեղացի ճակատ եւ թաւիշները մշտայոյղ սչգքերի, երբ իր կենցեղի վրայ աշան առաջին տերեւներն էին իջել՝ մի վիթխարի շանաղունումից յետոյ: Օ՛, որքան անխիղճ են դարունն ու աշունը, սերմերի լուռ խլըրտումը, որ չդիտես ինչու ճշում են հողի ընդերքում՝ ընդմիշտ ձերբադատւելու վաղահաս աքսորից: Ադամեանը տեսնում էր նրա մարմնի երդը, տեսնէր դարձնող բազմաթիւ երդերի, երբեմն նառառկ ու անամօթ, սակայն Նոնան տարբեր էր: Նա չէր պարտադրում: Տալիք ու ստանալիք չունէր: Նա այնքան հարուստ էր, որ աշխարհը իրն էր, այլապէս ինչպէ՞ս բացատրել իր պատաստների խորքը, իր ասլումների տարածքն ու խորհուրդը, ինչպէ՞ս տեղաւորել այդքան փորձառութիւն ու իմաստ մի քանի տասնեակ դարուններէ մէջ: Թառամում են ծաղիկները, չորանում, մեռնում. Նոնան կը մնայ մշտաճաղիկ, թէկուղ բլուր արուններ անցնեն դաշտերի վրայից: Ադամեանը ականատես էր լինում իր ներքին կերպարանափոխման: Մէկը բըրիչն առել ու քանդում էր նրա ներսում կուտակուած սառոյցը: Նա միշտ նախանցեալ շարթ հիւրանոցի տասնեօթերորդ յարկում անցկացրած դիշերը իր մի բարեկամի բարեկամուհու հետ, որը բացարձակապէս բռնաբարեց իրեն, երբ ոչինչ ստացաւ եւ ոչինչ մատուցեց, թէեւ բաժանուցելն բարեկամների պէս. մի՞թէ աւելի լաւ չէր լինի, եթէ բաժանուէին ոտոտների պէս. այդ դէպքում մի բան պատահած կը լինէր: Հիմա անձրեւը ծեծում էր դընացքի պատուհանը: Նոնան խօսում էր իր յախճապակեայ ձայնով, հայտնութիւն, Հայաստան, տաղնասպումի պակաս սիւլոռքահայ կենաքում, Արշիլ Գորկի ու նիւ եորքեան շարժում, Դը Կունինդ ու Մալլերուէլ, ընկերային յեղափոխութիւն ու արուեստի ազատագրում, ինչպէս ազատագրումը սեւերի, ծնողներ ու ընտանիք, ընկերների կարօտ, կարօտ՝ անկատար սէրերի, կարօտ՝ ծննդալալլի, Լիբանան, Լիբանան, Լիբանան, խորտակուած կեանքների պատգամախօս: Ինչո՞ւ այսքան ուշ է ծնուել այս աղլիկը, ան-

ցաւ Աղամեանի մտքով, ներդրութիւն խնդրեց, անցաւ յաջորդ դնացքարա-
փինը, մի գլանիկ վառեց եւ զգաց իր ամեհի մենութիւնը:

Միջօրէն մնացել էր Նիւ Եորք: Անձրեւը դադարել էր: Խոնավ, երկար
ստուերները արեւմուտքեց հասել էին արեւելք՝ նստելով Նոնայի ալտերի
վրայ: Գնացքը պտուղը վերցրած՝ մտել էր Մերիլանդի դաշտերը եւ կայ-
տառ բուսակի պէս թաւալուում էր տակաւին կանաչ թաւուտներում: Նոնան
դո՛հ էր ի տես հետզհետէ ծաւալուող տարածութիւնների, որոնց վրայ մէջը
անժամանակ նինջ էր մտել: Նա դո՛հ էր շարժումից, դնացքի սրնթաց վազ-
քից, որ ապաւէն էր, անսկնկալ վայրերի խոստում եւ նոր կլոռոթներէ հե-
ռանկար: Նա դո՛հ էր, որ Աղամեանը կար իր կողքին, Արեւմտեան Կիսադնդի
այս կէտում՝ որպէս շաղկապ աշխարհամասերի, հնի ու նորի, մարդ ու հո-
վանի, յատկապէս մարդ, երբ հաւատքը կորցրել էր մարդկութեան նկատ-
մամբ: Ու սակայն նա այնքան մեկուսի էր, ինքնամոտիք, նոյնիսկ անհա-
ղորդ, որ իրենց միջև շարունակ ներկայ էր Աղամեանի կառոյցների հռչա-
կը: Գոնէ նրա փողկապի հանդոյցը մի քիչ տրորուած լինէր, լինէր հպումը
ձեռքերի, դաշնը լինէր հողիների, որ աւա՞ղ, բանտարկուած են հազար ու
մի պայմանականութիւնների անհաս ծիրում, լինէր Բէյրութի տօնական ա-
ռօրեան ու Փարիզի անփոյթ joie de vivre-ն ու դեռ քաղաքները Միջերկրա-
կանի վզնոցի, ուր թողել էր մի-մի բեկոր իր բոսոր օրերից, թերեւս բեկ-
ւած սրտեր, Երեւանի շունչն ու երեսնցիների լազուր ձայնը, թող մինչեւ
յաւիտենականութիւն սուրայ դնացքը, միայն թէ՛ անպակաս լինի Յակոբ
Յակոբեանի երանդապանակի ներկը եւ բարձրագոյն հնչի: Հրանա Մաթեւոսեա-
նի ձայնը, ես ի՞նչ դործ ունեմ այս անանուն ճանապարհներում, երբ իմ բո-
ւոր հիւլէները ցրել եմ Արեւելքի յուրթի ալիքների վրայ: Այդուհանդերձ,
նա ուրաբ էր, որ կամ Աղամեանը, որ մի տեղ մի բուռ խելառներ տակաւին
պայքարում էին յանուն ճմարտութեան: Յոգնել էր Նոնան: Քանի՛-քանի՛
դիշերներ անբուն էր լուսացրել: Անցեալը կառչել էր նրա ջրանցքեց: Այս-
թան սէր ինչպէ՞ս պարկաւել այս մի բուռ սրտում: Ուզեց գլուխը յենել Ա-
ղամեանի ուսին եւ մի պահ մոռանալ ու սակայն դոյները հրմշտում էին ի-
բար, տարածուած ու կէտկիտուած, ապա հնչիւնների փոխուելով՝ թափուած
նրա հողու աւազանում, ինչպէս չերդուած երգերը անյայտ բանաստեղծների:
Նա լսում էր Աղամեանի դազը, հանդարտ ձայնը եւ մտովին շօշափում նրա
կեանքի գծերը, որոնք զուգահեռականները թողնելով յանկարծ մի անկղկնե-
լի կէտում պայթել էին նորաստեղծ աստղի պէս՝ ասուպներ ցրելով անբոր-
պետում: Նա այլեւս չէր լսում Աղամեանին, դիտէր նրան, դիտէր նրա սէ-
րը, տեսել էր վարդի սպառնալից գծերը մթին անտառում եւ ուղում էր զգալ
ժանիքների կրակը իր մտերում: Նոնան դոցեց աչքերը չլսելու միւս ձայնե-
րը, հեռուոր խաչմերուկներում քարացած սպասումները: Նա տառապեց
այնպէս՝ ինչպէս երբեք չէր տառապել:

Այս անգամ հաստատապէս կանդ առաւ դնացքը:

Ի՞նչ մատուցէր Նոնային, երբ քաղաքը մատուցելիք ոչինչ ունէր: Դէ-
սից-դէսից հասաւել էին ոճ ու մարմար, խառնել դասականն ու բարոկը,
ներմուծել Անգլիայի դոթականը եւ անունը դրել մայրաքաղաք, ապա մտել
էին Եւրոպայի հինաւուրց կենտրոնները, դնել արուեստից լաւագոյն դոր-
ծերը եւ ճաշակով դասաւորել անհամար ցուցասրահներում: Ամէն տեղ էլ
Մաթիւը իրեն որք էր դրում: Քաղաքը ծանր նստել էր՝ տեղից բնա չչարժ-
ւելու վճռականութեամբ: «Շատ անդորր է ձեր քաղաքը», ասաց Նոնան, «այս
կարգ ու կանոնը ուղղակի հեղձուցիչ է, ինչպէ՞ս էք ապրում այս կանոնա-

ւորութեան մէջ»։ Վէճերը լուի վէճն են, պատմութիւնն չունեն։ Ամերիկացին դեռ նոր է կռահում, որ քարերը իրենց ուրոյն լեզուն ունեն, իրենց իւրա-
 յատուկ կանչն ու հոտը, հող չէ, թէ անցորդը միզել է վրան։ Նոր Աթէնքը
 այնքան մաքուր է, որ մարդիկ շշուկով են խօսում, չլինի, թէ աստուած-
 ներ արթնանան։ Զեֆըրսոնը հիմքն է Ամերիկայի, Արնքոնը՝ Խիզճը, մը-
 նացեալը հենց այնպէս, միջանկեալ որպէս զարդ ու պարտականութիւն։ Նո-
 նան յիշեց Զուարթնոցի աստուածատաշ քարերը ու կարօտը գրաց Հայաս-
 տանի քարերի, հողեւին մտաւ Գեղարդ ու մէկիկ-մէկիկ համբուրեց արցուն-
 քտ սեւ պատերը։ Երբ դարձաւ Ադամեանին, նա այլեւս նոյն մարդը չէր,
 երիտասարդացել էր, դարձել զրեթէ պատանի՝ աչքերում երազը չապրած
 օրերի։ Յետոյ կատարուեց անբացատրելին։ Վայրկեանները ձուլուեցին դէ-
 պի անհասութիւն եւ օրերը դարձան վայրկեան, կուշ եկաւ մոլորակը՝ մըա-
 նելով մի նոր ուղեծիր, քանդուեց օրէնք ու հասկացողութիւն եւ այդ քառ-
 սից զոյացաւ մի նոր ուրիշ, այս անգամ միանգամայն խնեթ ու արագըն-
 թաց։ Ազամեանը տեսաւ կիզակէտը, կառչեց հրոյ սլաքին եւ այրուած մատ-
 ներով ջրափեց Նոնայի դէմքը։ Նա հաւատում էր Big Bangի տեսութեան։
 Բազմիցս ակնատես էր եղել տիեզերքի ստեղծման Մեծ Պայթիւնին եւ ա-
 րեւները չալակած սուրբացել էր դէպի անհունը՝ ամէն զոյականի սկզբնա-
 պատճառը վերագրելով աստղերին։ Հիմա, Նոնայի առջեւ կանգնած՝ նա ա-
 նիծում էր աստղերին։ Եթէ աստղերը մի սենթ արժէին, հապա ինչու իրենց
 կենսագծերը այսքան ուշ պիտի հանդիպէին իրար, երբ այնտեղ տարիները
 բացել էին իրենց խրամատը եւ մարսել լաւադոյն ծաղիկների թոյրը, ես չղի-
 տեմ, ես չղիտեմ, ես չղիտեմ, ես կարող էի ամբողջ կեսնքս կիսել քեզ հետ,
 եթէ այնքան յիմար ու անողոք չլինէին աստղերը։ Տեսարժան վայրեր։ Հա-
 յատանեան զեղեցիկ դիւտ։ Երբ այդ նոյնը տեղափոխում ենք այստեղ,
 դառնում է քաղաքավարի առեւտուր, նոյնիսկ Քենեդիի դերեղման դարձել
 է տեսարժան։ Բաղաձար ասլրում է իր նահատակ որդու աճիւնի տոկոսներով։
 Առանց հերոսների ի՞նչ պիտի անէր մարդկութիւնը։ Ես ուղում եմ տեսնել
 քո կառոյցները, ասաց Նոնան, երբ նրանց ձեռքերը ինքնաքերաքար հասել
 էին իրար։ Տեսնելիք բան չեն, պատասխանեց Ազամեանը։ Ինչու։ Որովհե-
 տեւ այն՝ ինչ պիտի կառուցեմ աւելի լաւ պիտի լինի, քան այն՝ ինչ կառու-
 ցել եմ։ Այդուհանդերձ, ես ուղում եմ տեսնել, պնդեց Նոնան։ Եթէ տեսնես,
 պիտի հիասթափուես։ Այդուհանդերձ, ես ուղում եմ տեսնել, պնդեց Նա-
 նան։ Մի՞թէ աւելի լաւ չէ պատրանքը։ Ես ինքս պատրանքի ծնունդ եմ,
 սակայն այսօր ուղում եմ տեսնել իրականութիւնը, յարեց Նոնան՝ աչքերից
 հեռացնելով վառուող մազերի ալիքը։ Ազամեանը թողեց կնոջ ձեռքը ու զղաց
 իր արեան թաւալումը կաթնածիրի երկայնքում։ Նա ուղեց, որ իր սերմը
 ժայթքի Նոնայի արդանդում, նովայի պէս խառնի նրա էութեան արմատնե-
 րը եւ ոչնչից ծնունդ տայ մի նոր աշխարհի։ Մենք, ասաց նա, դառնում ենք
 իմ շինութիւններից մէկի առջեւ։ Ես դիտէի, ասաց Նոնան, ես զղացի քո
 ներկայութիւնը վէճերի երակներում։ Ես դիտէի, որ քեզ պիտի հանդիպեմ։

Բարձրացան վեր։ Ազամեանի աշխատանոցում Նոնան ճանաչեց նրան։
 Այստեղ կորութիւններն ու անկիւնները միանում էին միմեանց, անաղմուկ
 համարում՝ ստեղծելով մարդկայնութիւն։ Կիրառական դժերի հետ կար
 նաեւ զաւելչտակներ, եթէ ոչ՝ անհեթեթը — ասպիկպատ առաստաղ, դու-
 նաւոր սիւներ, շլեղական կահոյք ու մսադոյն պարսկական զորդ։ Պատերի
 վրայ իշխում էին զերման արտայայտչապաշտների զործերը՝ զղաստ ու կո-
 պիտ։ Մեծագիր պատուհաններից քաղաքը ծփում էր խճանկարի պէս։ Այս

ու այն կողմ մեկուսի թեք դժասեղաններ՝ բարձուած շինարարական դժադրութիւններով, յասակազծերով ու հասցճեկ արձանագրուած զաղափարներով: Յարակից սրահներում աշխատում էին ճարտարապետները:

— Այն՝ ինչ արդիական է նկարչութեան մէջ, — խօսեց Աղամեանը ծխամորճի ծուխի միջից, — այլեւս հնացած է ճարտարապետութեան մէջ, որովհետեւ ճարտարապետութիւնը հիմնականում ընկերային ու հասարակական արուեստ է, կարող եմ ասել՝ ամենաորոշող յեղափոխութիւնների մէջ: Դեռ նախքան քաղաքական յեղաշրջումը, ճարտարապետն արդէն դժել է ուղին, այսպէս ասած՝ կանխատեսել ապագան: Ճիշդ է, մենք դանդաղ ենք շարժուում, սակայն երբ հիմքերը դնում ենք, այլեւս բարձրանում է շինութիւնը՝ իր հետ տանելով ընկերային հասկացողութիւններն ու կենցաղը: Շատ է խօսուում վաղ կառուցապաշտնների, քերբիստների, դադալականների ու ամէն տեսակի դոյապաշտների մասին, երբ իրականում մեր դարի վրայ ամէնից մեծ ազդեցութիւնը թողել են Փրանք Լոյզ Բայթի, Վալթեր Գրոպիուսի եւ Լը Գրորիւսիէլի նման նախակարապետներ: Ես չեմ ասում, թէ այսօր ամբողջովին բաժանում եմ Արդիապաշտ ճարտարապետութեան հանդանակները, սակայն չեմ կարող ժխտել, որ Միջազգային Ոճը իր խոշոր ազդեցութիւնը չի թողել իմ սերունդի վրայ: Պիտի չմոռանալ, որ Ասաջին Համաշխարհային պատերազմից յետոյ, ինչպէս նաեւ Երկրորդի աւարտին, աշխարհը կանգնած էր վերակառուցման շրջանին: Անհրաժեշտ էր բնակարան՝ զանդուածների համար, կիրառական կառոյցներ՝ արդիւնաբերութեան համար: Իսկ ամէնից կարեւորը՝ մտաչելի, նւթական տեսակէտից: Յատկանշականն այն է, որ երբ Եւրոպան իր դարերի փորձառութիւնից ելնելով դարակներում պահեց Լուզվիլի Մայց Վան Դեր Ռոհէի ու Լը Գրորիւսիէլի նոր քաղաքների դործնապաշտ ծրարները, Ամերիկան իր սովորական անհամբերութեամբ տենդահար դործի անցաւ եւ Նիւ Եորքից մինչեւ Լոս Անջելոս բարձրացրեց երկնաքեր քառակուսի տուփերի շարանը, մէկը միւսից անհաղորդ՝ իրենց սպառիկ պարզութեան մէջ, մէկը միւսից անմարդկային՝ իրենց պողպատի ու ապակու անանձնականութեան մէջ:

— Իսկ ինչպէ՞ս էր բնութագրէիք ձեր ոճը, ձեր տեղը արդի ճարտարապետութեան մէջ, — ասաց Նոնան՝ մտովին նմանութիւն գտնելով Էդոն Շիլէի ու Աղամեանի միջեւ:

— Ես ու իմ դործընկերները կանգնած ենք եթէ ոչ անորոշի, սպա նոր աշխիռութիւնների առջեւ, ուր յեղափոխութիւններով յղի են մեր դեացողութիւնները ու յաղափարները: Մենք շարժուում ենք շնայատեսուած ու չզձուած ուղիով, որը թէ՛ սարսփելի է եւ թէ՛ միաժամանակ սքանչելի, որովհետեւ մեր ճամբան լի է արկածախնդրութիւնով: Չգիտեմ որ պիտի հասնենք, սակայն գիտեմ, որ բնակարանը կամ դրասենեակը լոկ քար, պատ ու աղիւս չէ, ինչպէս սնդուում են արդիականները, այլ նաեւ կեանք, միջավայր ու հաճոյք: Ուզում եմ ասել, որ կեանքը պէտք չէ զատել արուեստից, որ արուեստը կեանքի անբաժանելի մասն է կազմում, որ ճարտարապետութիւնը կրօն չէ, այլ՝ մարդկութեան սպասարկող կոթող: Չգիտեմ, թէ կարողացա՞յ բաւարարել քեզ, Նոնա, սակայն իմ կառոյցներում ջանում եմ պսակել դասական ու արդիականը, կիրառական ու անդործնականը, փորձելով տանելի դարձնել անհողի շինանիւթերը, որոնք ոչ այլ ինչ են, եթէ ոչ քար, պողպատ ու փայտ:

Պերճաշուք կառոյցների համայնքը իրենց յետին թողած՝ մտել էին քաղաքի որովայնը, ուր ոչ մի կոթող չկար. դորը ու սրճադոյն տնաշարերի

անվերջանալի ցանց, միմեանց կպած հառաչող բնակարաններ ու խանութներ, որոնց ընդերքում գոյատևում էր բանակը սեւամորթների, կուբացիների, պորտո-նուգալիների, վահլիստանցիների, հնդիկների, վիեթնամցիների, աֆրիկացիների եւ Երրորդ Աշխարհի բաղմազան այլ ներկայացուցիչները: Այստեղ՝ կեղա ու անկանոնութեան մէջ, շարժում կար, անդ ու կիրք: Մարդիկ աւելի բնական էին, նուազ քաղաքակրթուած, ուղղակի նայում էին բիբերիդ եւ հաղորակցում արեան կանչերով ու կցկոտր բացահաննութիւններով: Մեծ ընտանիքի աղքատ դաւակները: Ինձ այստեղ աւելի հարազատ եմ դրում, ասաց Նոնան դեկտեմբերեան առաւօտի միջից, այստեղ ես կարող եմ ձուլուել ամբոխին ու յարատեւել: Մի ահադին երիտասարդ, ձեռքերը տարատի դրպանները խոթած եւ ծխախոտը հաստ պոռչներում տնկած՝ վայր-կեանքապէս մերկացրեց Նոնային: Նրա աչքերում դեղին ցաւ կար: Կանանց քայլուածքում հեռաւոր ջուկիւնների ճիւղ կար: Նրանց յարաշարժ յետոյքները սպառնում էին քանդել ամէն կար ու կարկատան: Մայթերի վրայ, այս ու այն կողմ լեռնացած աղբակոյտերը կծու հոտով էին յաղեցրել միջոցը: Նոնան նայեց առաւօտին եւ յիշեց միւս առաւօտները, բաղում այլ քաղաքները այլ առաւօտները եւ բոլոր առաւօտների կարաւանի մէջ յիշեց Երեւանի առաւօտը, որը առաւօտ չէր, այլ՝ պատարադ, երկնառաք սաղմոս ու լոյսի մի վիթխարի սաւան, որի կապոյտ հովանու տակ արթնանում էին Հայոց Աշխարհի հին ու նոր բոլոր աստուածները՝ հրաթեւ ու ոսկեբերան, դոփելու հայրենի հողը եւ հողի տնքոցի հանդոյն՝ կերտելու նորն ու յաւերժականը: Երեւանի առաւօտը դիցերդութիւն է, խաղաղութեան օժիտ, թէ՛ Կապի բոյր, նորահարսի ժպիտ ու բեռնատար ինքնաշարժերի վաղահաս խելագարութիւն: Բարի լոյս: Ունենք չունենք մի Հայաստան ունենք: Եղիցի լոյս: Եւ այն՝ որ է, լաւ է, մերն է, տուն է, օջախ է, աղը ու միութիւն է: Փառք Աստծոյ: Թող ով ինչ ուզում է ասի, հայն այսօր ապահով է: Նախ ճեղքուած երանդապար է, բիւրաւոր դանդերի ղօղանջ եւ լոյսերի անասելի դուպար: Արարատը բռնում է արեւի առաջին շողը եւ ցանում աշխարհի վրայ: Կոտորներից ծուխ է բարձրանում: Դռների ձայնը, առաջին անցորդների քայլերի առակկառօն, հայկական սյուրտանների իւրայատուկ բուրմուռները, պատերի ու դարպասների յօրանջը, նոր ջրուած հողի համը, շաւարտուած վէճի շարունակութիւնը, խաչմերուկներում հետզհետէ խտացող հայերի հոսանքը, ինքնաշարժերի սլիւի առշաւը, դրքի հոտը, ոստիկանի սուլիչի ճիւղը, մեծ համերգի նախերգանքը: Երեւանի առաւօտը:

Ռուս բանաստեղծը մտել է Ամիթոսեան հաստատութեան հնամենի ամրոց-մատենադարանը եւ աջ ձեռքով շարունակ միջոցն է ծեծում: Ունկընդիրները մեծ մասամբ սպիտակ ոտներ են կամ դրանց դաւակները: Նա ասում է, թէ՛ մենք ձեզ պարուհիներ ենք տալիս, իսկ դուք մեզ՝ փեխիսի թուլ: Հասարակութիւնը ծափահարում է: Աբամիտ է Վոդնեսենսիին ու նաեւ տաղանդաւոր: Հայեացքը անորոշ մի կէտի յառած՝ նա արտասանում է իր երդերը, ձայնում՝ երանդ ու բեմականութիւն: Առաջին կտորից յետոյ, վարժուում ես: Գիտես, թէ՛ երբ է սկսում անդամքէն եւ երբ վրայ հասնում Բրեսլէկոն: «Վայրի կարապ, վայրի կարապ»: Թէ՛ն թարգմանելու կարիք չկայ, սակայն ամերիկացի բանաստեղծը ուղղակի պաղ ջուր է լցնում ուսի դիւնին՝ իր քարոզիչի մեկնարանութեամբ քնացնելով ներկաներին: Տիեզերական ժամացոյցը դառնում է դրպանի ժամացոյց: Աղամեանը լսում էր բանաստեղծին, սակայն իր էութեան բոլոր թելերով Նոնայի հետ էր, ունկընդիր նրա շնչին, նրա կեանքի բանաստեղծութեան, որը հաղար ու մի աղբիւրնե-

րով հոսում էր իր կեանքի մէջ՝ խառնելով յատակի վաղուց մոռացուած չերտերը: Թախիծ չէր, այլ՝ ուրախ տրոմութիւն, ինչպէս Վիվալդիի երամուտութիւնը, զարթօնը մրափի մտած ծիւրի: Նոնայի սնունն անգամ չընջալին նա շնչակտուր էր լինում զերթ նորաբողոք պատանի, ուղու՜մ էր առնէր նա ափը, խալտով կանաչաւէտ հանդերում եւ աւետել իր աճրը քարին, ծառին, ծաղիկին ու մացառին: Այդուհանդերձ, կաշկանդուած էր Ազամեանը: Տանը նրան սպասում էին իր կինն ու չորս հասուն զաւակները, իսկ ընկերութիւնը ժանիքները սրած սպասում էր յօշոտման ժամին: Նա չէր կարողանում հաւատալ, որ յիսունին է մօտենում. տարիները լոկ խորկանք են, որոնց վրայ յենուելով հասարակութիւնը իր օրէնքներն է պարտադրում, մի՞թէ հնարաւոր է սահմանել զգացումը, ասել, թէ ով ի՞նչ է ստանում, ով ի՞նչ կարող է ստանալ, երբ հիմնականում ստացողներն են պատասխանատու իրենց ստանալիքի համար: Ազամեանը յանկարծ անդրադարձաւ, որ իր ճարտարապետական բոլոր գործերում էլ բանաստեղծութիւն է գրել, նոյնիակ այնպիսի՝ շինութիւններում, որոնք կոչուած են լոկ իրաւական նպատակաների ծառայելու, մի տեղ զուգահեռ դժեր, մի այլ տեղ միմեանց կառածաւոր կամարներ, երբեմն զէպի անհունը ձգողոյ սյացիկ վիմասիւններ՝ միշտ դործնականը համադրելով էսթետիքի հետ՝ որպէս նպաստ ու մատուցում, որպէս ինքնադիտակցութեան խարխիս: Որպէս փրկութիւն: Այդ դադափարը աւելի տարածեց շաղկապը իր եւ Նոնայի միջեւ: Ուրեմն շօշափելիից զատ կար յանել հոգեկան մերձեցումը: Ասմունքի հանդէսից յետոյ, Ազամեանը դըտաւ յունական մի ճաշարան: Սանդուխներով վեր բարձրացան եւ կիսամութ սրահի մի անկիւնում միմեանց նայեցին: Նա առաջին անգամն էր զէմ յանդիման նստում Նոնային, որի դէմքը մոմերի լոյսի տակ յարատեւ ծփում էր, մերթ դառնալով ջրամոյն: Յիշեց Աթէնքը, տարիներ առաջ, ապրիլեան անձրեւային մի գիշեր, երբ էվանդելինայի հետ Ատլանտեանը պիտի կտրէին, երկու երկչոտ ուսանողներ՝ ապաւինելով Փրանսերէնին: Ո՛րք մնաց էվանդելինան: Ամբողջ մի կեանքից մնաց մի մանրանկար: Նա չլիւտեց ինչ ասել Նոնային, արդէն նրանց խօսակցութիւնը միշտ դառնում էր արտաքին երկուոյթների շուրջ, այսպէս ասած՝ լուսանցքային, երբ խորքում նրանց հոգիները մի շնախարհիկ բազին էին կառուցում՝ նրա առջեւ փռելու իրենց անցեալ սէրերի ցաւն ու բերկրանքը, շիկացած աղօթքներն ու մխացող մատեանները: Ծաղարանի նեղլիկ պատուհանից դուրս ստունածանիք էր: Ներսը մի բեկոր էր Յունաստանից, յունական բուրմունքներով: Այն՝ ինչ դոյութիւն ունի, իր եւ Նոնայի միջև զոյութիւն է, մտածեց Ազամեանը, որեւէ աորնչութիւն ունի արտաքին իրերի ու երեւոյթների հետ, որովհետեւ արտաքին իրերն ու երեւոյթները որեւէ աորնչութիւն ունեն իրենց դոյութեան հետ: Ասուպները հանդիպել են: Նա չհամարձակուեց հասնել Նոնայի ձեռքին, որը որբացած սպասում էր: Նա նորից դժուարանում էր շնչել, կարծես նոր էր կանոնել արբունքի սեմին: Ծաշարանը հետզհետէ կենդանանում էր: Ազամեանը մի պահ հայեացքը բեւեռեց Նոնայի աչքերին ու կիսամութի մէջ հեղուկացաւ միջոցը, ծորացին սպիտակ սեղաններն ու պատերը եւ անշունչ աւարկաները սկսեցին խօսել, տարրալուծուել ու կերպարանափոխուել, մերթ դառնալով ծովաստղ ու ոտորէ, ապա Փոսֆորէ աչքեր բաղմազան, վանդակներին մէջ՝ դերութեան թոյնը իրենց ոսկորներում: Նա զգաց իր դոյութեան սահունոր մոլորակների մէջ, իր փախճանն ու աննիշխացումը ախերբային փոշիների փոթորիկներում եւ յանկարծ ուզեց մեկնել անփերադարձ, ջանի դեռ իբրբը չէին վերադարձնել իրենց սկզբնակերպարին: Ինչպիսի՞ զինի էք

ուզում, հարցրեց ապողոնակներս սպասեակը, կարմիր թէ սպիտակ, երկունս էլ, պատասխանեց Աղամեանը, մէկը անցեալ սէրերի, միւսը ապագայ սիրոյ համար: Բազմաթիւ առիթներով նա մենակ էր եղել Նոնայի հետ, անանուն դահլիճներում ու սենեակներում, մեկուսի պուրակներում ու ամայի փողոցներում, սակայն երբեք չէր հպել նրան. այժմ նրան համակել էր անզուսպ ցանկութիւնը՝ անծանօթների ներկայութեան քակելու նրա կրծքի կապերը, ափերում առնելու նրա ստինքները եւ մէկիկ-մէկիկ համբուրելու նրա կաթնաղբիւրները:

Նոնա նկարչուհին, Նոնա կինը: Աղամեանը ընկել էր այդ երկուսի արանքում, չդիտէր ե՞րբ է ներկայ նկարչուհին, ե՞րբ՝ կինը, եւ արուեստից թանդարաններում նախանձում էր Ռեմբրանդին, Ռէնուային, Քասսօթին ու Սեզանին, որ դրաւում էին նրա ուշադրութիւնը: Ինքը ոչինչ ունէր թողնելիք Նոնային: Արուեստադէտները դիտեն ինչպէս լուծել իրենց վրէժը: Վաղը կը քանդուեն իր կառույցները, հների տեղ նոր կառույցներ կը բարձրանան, սակայն կը յարատեւեն Ռեմբոն, Փիքասոն, Ռոդէնն ու Ջիակոմոթթին: Եթէ մարդկային ողբերգութիւնն չէ այս, հապա ի՞նչ է: Ինչպէ՞ս իմաստաւորել այս վաղանցիկ երթը, երբ անմահութիւնը վերապահուած է մի բուռ լնորեակների, թէկուզ եւ հասնումի ճանապարհին լինեն խաչ ու տատակ: Գրասենեակ ու ծրագրեր մի կողմ թողած՝ Աղամեանը դարձել էր ցուցասրահների մի ջերմեռանդ այցելու: Առաւօտեան Նոնայի հետ մտնում էր թանգարան, երեկոյան՝ յոգնած զգայարաններով վերադառնում տուն: Սրահներում կորում էր Նոնան, մեկուսանում, անէանում, իսկ նա Հէնրի Մուրի քանդակների առջեւ կարօտում էր Նոնային: Ինձ աւելի հետաքրքրում է ամերիկեան արդի նկարչական դպրոցը, ասաց Նոնան, ուզում եմ տեսնել, թէ ի՞նչ բովից է անցել նիւ եորքեան շարժումը: Տպաւորութիւնների տեղատարափի տակ սպառում էր Աղամեանը եւ ո՛րքան սպառում, ա՛յնքան բիւրեղանում էին նրա զգայնութիւնները՝ դառնալով չեղբ ու լարում: Նա դիտեր, որ Նոնան այլեւս ամբողջովին իրեն չի կարող պատկանել: Արդի թանգարանի երկրորդ յարկը յատկացուած էր քաներորդ դարի արուեստադէտներին — Մադըրուէլ, Գէյլիդ Սմիթ, Գը Գունինգ, Գորկի, Նիւմըն, Ռաթկո և անխախտ ջոկատը եւրոպացի յառաջապահների՝ մեծագոյն դիրքը վերապահելով Փիքասոյին: Նոնան շարունակ վերադառնում էր Արչիլ Գորկիին, ըստ երեւոյթիւն, նրա մօտ դտնելով արեան կապն ու իր սեփական պատաստների յարակցութիւնը: Ոչ, ասաց նա, Գորկին ամէնից յեղաշրջիչ ուժն է ամերիկեան արդի արուեստի, ամէնից խիզախ ոահվարան: Վաղը նոյնը պիտի պատահի Նոնայի հետ, պիտի քանդի Նիւ Եորքի արուեստի բարձրաբերձ պարիսպը եւ իր անհուն զայրոյթը թափի աշխարհի գլխին, թող այլոք ծաղիկ ու ծիտ նկարեն, թող այլոք տաքուկ սենեակներում նստած կառուցապաշտական մարդանքներ կատարեն, նա պիտի իջնի Նիւ Եորքի վրայ որպէս ուրական եւ իր գոյների շառաչի տակ արթնացնի մարդկութեան խիղճը: Նոնային դեռ չհամբուրած՝ նա դիտակցեց, որ նա պատկանում է ամէնքին, որ նա չի կարող կենտրոնացնել իր սէրը մէկ անձի վրայ, որ յարաշարժ սէրը ամէնից կենսատու տարրն է արուեստի ու ստեղծագործութեան: Աղամեանը տեսաւ անջրպետը եւ հոգեւէին մէկ դար ծերացաւ: Նա ուզեց, որ Նոնան մնայ կին ու սիրուհի, մայր ու ընկերուհի, թող ճերմակ պատաստների անդհանքը այլոք ապրեն. եթէ արուեստի նպատակը հոգիների ազնուացումն է, ապա առաջին հերթին օգնիր ինձ, Նոնա, քանի որ ազնուութեան կարիքն ունեմ, այնքան անազնու դիչներնք եմ ապրել, որ հոգիս դարձել է կեղծ ա-

ուսուցիչի մաշուած արահետ: Երբ նրանք հասել էին քաղաքակենտրոն, Ազամեանը առու Նոնայի աջը եւ մատունքի պէս շրթերին մօտեցրեց: Նոնան հեկեկաց: Մեծադիր էկրանի վրայ մի խիզախ մարդ թեւեր հագած ճախրում է լեռնային բարձրունքներում, դերեղմանները առջև պահակի հսկում՝ հայեացքը մարտիրոսներին, իդուարդ Մունքը զիտակից խելադարութեան մէջ քարացրել է սարսափը, Քայլերը երկնքից կախուած ժպտում է միամտնեւրին, նիւ եորքեան ճաշարանում կաղամբի վրայ պանիր են եփել, Միրոն միշտ նախնական ու սիրովիչ, Օ՛նիւր կատակերդութիւն է փորձել ու յաջողել, տիեզերանաւերը լուռ յորանջում են, Նաքեանը զիցուհիների վիթխարի ազդրն է շօշափում, վայրկեանները խուճապահար դարուում են իրար վրայ, դատնում միջարար, ո՛չ միայն հացիւ, այլեւ՝ բանիւ, որտե՞ղ է կարդացել այդ տողը:

Կարճ օրեր էին, սակայն լաւ օրեր: Ցերեկը դարուն էր, դիշերը՝ ձըմեռ: Մտաւերը չձմեռ, չզրկէին իրենց անելիքը: Նոնան զարմանում էր, թէ այդքան կուռ կոտոյցների ճարտարապետը ինչպէս կարող է այդքան մանկունակ լինել, հետաքրքրուել ամէն մի բանով, մտնել ամենաչնչին մանրամասնութիւնների մէջ: Անժամանակ հասունացած մանուկ լինէր կարծես, որ տակաւին երազում է բզէզների պարը ամբան դազը դիշերներին: Այդ ներքին հինսուրբախութիւնը նրան բերկրանք էր պատճառում, ինչպէս կախարական սփոր, որը շարունակ լեցում է անդտանելի նեկտարով, բաժանելու, բաշխելու, սպառուելու եւ կրկին լեցուելու: Նոնան սիրում էր Ազամեանի այդ անվերջ երիտասարդութիւնը, նրան թուում էր, թէ նա իրեն առաջին անգամ է հանդիպում, երբ մի վայրկեան առաջ արդէն հանդիպել էին. նոյնը նաեւ առարկաների հետ, երբ բազում անգամ շօշափել էր կաւի կեանքը, մանկան առաջին դիտը՝ զոյների հետ, տաճարի լուսապակիների հրաշք՝ արտացոլումը միջոցում, ջրայի անկրկնելի հնչիւնը՝ ստեղնաշարի վրայ, նարինջի քաղցրութիւնը համը եւ պաղ լոյսը աստղերի, երբ տիեզերքը ունէր իր կապոյտ կափարիչը: Նոնան կողմնակի նայեց Ազամեանի կիսադէմին եւ համոզուեց, որ մինչեւ արշալոյս կարող է քայլել նրա հետ, ձեռք ձեռքի, անդադանիք՝ ծմակների խորհրդաւոր խորքը յայտնաբերել ցանկացող ինքնակորոյս պատանիների պէս: Պատահում էին պահեր, երբ ինքնաշարժի մէջ Նոնան աչքերը փակում եւ ուզում էր, որ երթը լինի անվախճան, որպէսզի Ազամեանի ձայնը շարունակ հոսի իր երակներում, որ նրա ձեռքերը միշտ կառչած մընան զեկին՝ որպէս երաշխիք ու տեւականութիւն: Ու լինում էին պահեր, երբ երէկն ու անթիւ երէկները քանդում էին բազմատամ ամբարտակները եւ վարարած դետերը ծառանում ու սպառում էին խեղդել նորարողութիւնը բոլոր թուփերը: Այդ պահերին Նոնան ուզում էր փարուել նրան, իր ափերում առնել նրա զուլում եւ իր համբոյրների շուշանների տակ ամոքել նրա ու իր վիշտը: Անցեալը չի ահաբեկում ինձ, սասց Նոնան, ներկան է, որ մղձաւանջ է պատճառում: Եթէ դիմացել ես անցեալին, ապա ներկան միայն երջանութիւն կարող է բերել քեզ, պատասխանեց Ազամեանը, երբ իրականում ուզում էր սանկ օրերը ծաղիկներ պլտի բերեն քեզ: Այս անորոշութիւնը ուղղակի սպանիչ է, շարունակեց Նոնան, չզիտեմ ո՞ւր եմ հասել եւ ո՞ւր եմ դնում: Ազամեանը ուղղում էր սանկ, միայն դու չես, որ չզիտես ուր ես հասել եւ ուր ես դնում, սակայն փոխարէն հայրացաւ Նոնայի հանդէպ եւ սասց՝ դու դեռ շատ երիտասարդ ես եւ ապագան քեզ է պատկանում: Նոնան մտքում սասց քիչէ: Կէսօրից յետոյ նրանք քայլեցին ծառուղիներով, այլեւս թանգարան չէր մնացել: Քաղաքը աւելի էր սպիտակել, սակայն Նոնան կարօտել էր նիւ եորքի ժխորը, «ուր կարող ես յանձնուել յորձանքին երբեք չզանուելու յոյ-

սով՝ նա ուզում էր զնալ զէպի փոթորիկի տաքը, երբ իրականում ընկել էր փոթորիկի աչքի մէջ, նա դիտէր այդ, նա տեսել էր Աղամեանի աչքերի խրոտիւքը եւ սիրել էր այդ խոտիւքը, որը իրն էր, թաքուն դանակների գիշերապին փայլը, հողիներէ հասուն ողկոյնն ու ճերմակ սաւանների կարմիր աղաղակը, որն այնքան աղաղակ չէր, որքան ուխտ ու ժամերգութիւն, հրկիզումը շարմաւարուած պաստառների եւ ծարար չարաանունած սրբոյ խօսքերի: Նոնան աւելի անկեղծ էր: Օրուայ վերջին ճառագայթները արեւ-մուտքից եկել-հրդեհնել էին նրա դուռը: Արեւելքում կանդնած՝ Աղամեանը միայն լուսէ բոսոր մի փունջ էր տեսնում: Նա այնքա՛ն ասելիք ունէր Նոնային, սակայն սարսափեց, որ բառերը կարող են արիւնաքամել իմաստը:

Այդ գիշեր Նոնան խօսեց Լիբանանի մասին, արիւնոտ թեւերով պատմեց եղբորութիւնը, որը սեւ վարպոյրի պէս եկաւ ու նստեց նրա եւ Աղամեանի միջեւ, իրերամեծ դրուանքեր, արմատախիլ կեանքեր ու դեռ աղէտը, որ շարունակուում է մարդկանց հողիներում: Միախոտին կառչած՝ Աղամեանը լսում էր Լիբանանի այս տրտում դատեր պատմութիւնը, աւերի ու աւերակների վկայ, որ իր ներաշխարհի ցաւոտ երանդապանկին ապաւինած՝ մի ամբողջ Ժողովուրդի խելադար խաչելու թիւնն էր վրձինում՝ անարցունք ու աներդիք: այլեւս արցունք չէր մնացել, բոլոր արցունքները շողիացել էին արիւնոտ մայթերի վրայ, երբ կեանքը նոյնիսկ մի տուփ մարլբորոյի արժէք չունի: Աղամեանը չմիջամտեց, թողեց, որ Նոնան իր վշտերի պղտոր գետերը թափի պերճ քաղաքների քառուղիներում: Նա սիրեց նրա վիշաք, եթէ միայն կարողանար դոյնը չափով ամոքել նրա տառապանքը: Ինչպէ՞ս անոքել, ո՞վ կարող է հասաքել բեկորները ցիրուցան երազներին: ամէն մի տուն խորտակուած մի յուշ, ամէն մի յուշ մահուան առադաստ, ծամածռուած կրկններևոյթ: Ի՞նչ ասել Լիբանանին, երբ միթարանքի խօսք անդամ չի դառնում ասելու Նոնային: Ինչո՞ւ այդպէս եղաւ, ինչո՞ւ եղբայր եղբոր սպանեց, ինչո՞ւ այսքան անտարբեր դառնեց մարդկութիւնը: շարժապատկեր լինէր կարծես: Երբ վարպոյրը իջաւ, հանդիսականները, միմեանց թեւ մը-տած՝ տուն վերադարձան, երբ խաչմերուկի ճիշդ կենտրոնում իր վերջին հոնդիւնն էր արձակել լիբանանցի մանուկը: Աղամեանը լսում էր Նոնայի կերկերուն ձայնը, նրա խօսքերի ասեղները եւ ուզում էր մեղանչել նրա առջև, մի կերպ բաժանել նրա ողբը, փարել նրա հիւսերին ու փարատել նրա սրտի գիշերը, որն աղէն դիշերն էր իր մնացեալ օրերի, սակայն Նոնան այնքան անմատչելի էր այլեւս, այնքան մաքուր իր սքանչելի անդունաքի մէջ, որ գերադասեց լռել եւ չխանգարել մոխիրների նինջը: Լիբանանցի մի աղջիկ, որ իր հետ երբեմնի գեղածիծաղ ծննդավայրի մասունքները բերել եւ ինքն էլ մասունք է դարձել, անկաշառ ու անպահանջ, անծանոթների մէջ, լայն տարածութիւններում որպէս ուխտիս մարդկային խղճի, ցաւի բուժարան, ողբի նկարիչ, լիբանանցի մի աղջիկ: Աղամեանը քունքերը ափերում տաած՝ ունկնդրում էր նրան, սակայն իր հայեացքը չէր կարողանում հեռացնել նրա բերանից, ուր հայերէնը դառնում էր առուակի չնկնկոց, մերթ-տարաշխարհիկ դոյների անձրեւ, իսկ յաճախ աներույթ թեւերի ճարտարապետութիւն: Նա ուզում էր, որ գիշերը երկարի եւ անվերջ գիշերի հետ շարունակ հնչի Նոնայի ձայնը, որ նա պատմի պատմութիւնը բոլոր կեանքերի, մի դուցէ այդպիսով հասնի այն կեանքին, որ Նոնան է:

Վաղ առաւօտեան Աղամեանը արագ սափրուում, հազաւ ամխաղոյն հազուստը, կապեց իր նախընտրած մուգ կարմիր փողկապը, առաւ օրուայ թարմ ճնիւ Եսրէ Թայմզըը եւ ծունկը ծունկին զցած՝ սպասեց Նոնային, որը շու-

տով էջաւ իր յարկարաժնից արեւածաղիկի պէս վառ ու թեթեւ: Բարի լոյս ասաց Նոնային, երբ փաստօրէն տակաւին մուտք էր, ծառերը դեռ աննիւթացել էին զիշերում, երէկուայ զիշերը շարունակուում էր այսօրուայ մէջ, այդուհանդերձ, նոր օր էր: Նոյն ընտանի մտերմութիւնը նստեց ինքնաշարժում, նա մի քանի մետաղեայ լեզուակներ շարժեց եւ դաղջ Էրմուտթիւնը տանելի դարձրեց երթը ծանօթ պողոտաներով: Նրանք չխօսեցին: Աղամեանը իր ազատ ձեռքի մէջ էր առել Նոնայի ձեռքերը, որոնք այլեւ հարազատ էին, նա չուում էր ափերի տաք ձեւերը, օղակում մատները եւ ճգում ողորկ մսերի կորութիւնները, որոնք րացուում էին նունուֆարների պէս, կրկին մեկուսանալու արշալոյսի մէջ: Ինքնաշարժը իր ճամբան դիտէր, դառնում էր, ճոխն է արձակում անկիւնադարձային կէտերում, ապա վերստին փարում ասֆալտի սեւ երակին՝ վազըը կայտառ ու ինքնավստահ: Բացուեց մի բոլորուն հրապարակ, մեքենան կանգ առաւ զծերի միջեւ, նրանք դուրս եկան լոյս չէխարհ, քայլեցին այնպիսի վճռականութեամբ, որ կարծես աշխատանքի էին դնում՝ երեկոյեան նորից հանդիպելու մտադրութեամբ: Կայարանը նըմանում էր թանգարանի՝ սիւների դիտում դիցարանական կերպարներ, դրեթէ ամայի, նստած փոշու հոտը աւազադոյն յատակին, պղտոր լոյսեր բազմազան դարպասներին: Նրանք դահլիճից անցան մի այլ դահլիճ, որը ամբարիկեան յեղափոխութիւնն էր պատկերում, բոլոր հերոսներն էլ ննջել էին պատերին կպած. անցան մի կեռ նախագաւիթ, ապակեայ դռները ինքնաբերաբար բացուեցին եւ հիւանդ նէոնեան լոյսերի տակ դոյացաւ մի այլ դահլիճ, որը ըստ երեւոյթին գործող կայարանն էր՝ երբեմնի իր չեքուութիւնը դիւած լինելով բանուկ օդակայաններին: Այսպիսայ պատուհանի անցքից մի տարիքտ, հիւծուած կին մի երկար տոմսակ երկպարեց՝ շարունակ կերկնելով «Խարպաս 12»: Աղամեանը աչքով դտաւ դարպասը եւ Նոնային ասաց, որ լաւ կը լինի, եթէ միասին նախաճաշեն, սակայն ճաշարանը փակ էր, փոխարէն սրահի անկիւնում ինքնամատոյց մի խղճուկ քաֆէթէրիա կար, ուր մի խումբ սեւամորթներ խնձորի կարկանդակ էին ուտում, Նոնան կարկանդակ չուզեց, Աղամեանը պոչ բռնեց եւ երկու դաւաթ սուրճ լցրեց, սեւը իր համար, իսկ կաթովը Նոնայի համար: Նրանք պարապ երկու աթոռ դտան, Աղամեանը մի դաւանի վառեց, իսկ Նոնան իր դրպանի տետրակի մէջ բաներ գրեց, պատերի կլոր ժամացոյցները պիչ-պիչ միմեանց նայեցին. մերթ ընդ մերթ մետաղեայ մի ձայն ճեղքում էր թմրած միջոցը եւ քնատ ճամբորդներին ոտքի հանում, լինում էր ժամանակաւոր իրարանցում եւ դարպասներից մէկն ու մէկը, երաբը բացած՝ կուլ էր տալիս մարդկանց: Մի գեղջկուհի, մանկանը կրծքին սեղմած՝ առաստաղին էր նայում. կային նաեւ այլ սպասողներ, որոնք կուչ էին եկել սեւ բաղկաթոռներում, ոմանք ճեմում էին աննպատակ: Աղամեանը իր թեւի ժամացոյցին նայեց, ապա Նոնային նայեց: Նոնան ինչոր բան ասաց, նա լսեց Նոնայի ձայնը, բայց չհասկացաւ: Նոնան ժպտաց: Նա մօտեցաւ, Նոնայի մազերի փունջը հեռացրեց այտերից: Նորից իրարանցում, Նիւ Եորք, ճամբրուկներ խուճապ, բարձրախօսային ծեծուած ծանուցում, Դարպաս 12, Աղամեանը վերցրեց Նոնայի ճամբորդական պայուսակը, նրանք շփոթահար մի պահ իրար բախուեցին, մտան դարպաս, քայլեցին մուտք դնացքամատոյցի երկայնքով, բարձրացան դնացք, փնտնեցին այս ու այն կողմ, դտան լաւադոյն նստարանը, Աղամեանը ծայլեց Նոնայի վերարկուն, տեղաւորեց վերի դարակակալում, պայուսակը դրեց կից նստարանի վրայ, գրկեց Նոնային, ամուր սեղմեց կրծքին, դէմքը դէմքին, Նոնան խուսափեց համբոյրից, երբ իր ողջ էութիւնը համբոյր էր կանչում, Աղամ-

եանը հապճեպ հեռացաւ, վար իջաւ դնացելց, մի քանի քայլ արաւ, յեա դարձաւ եւ զդաց ցուրտ խոնաւութիւնը իր դէմքին, մենակ, գորշ մետաղների ցանցերի մէջ, սեւ անուախւղերի ծխախառն հոտը ուռնդերին: Նոնան մնացել էր դնացքի հանդիպակաց նստարանում: Մի քանի քայլ եւս առաջացաւ: Գոնէ մի վերջին հաղորդութիւն: Գնացքը շարժուեց, կարուեց զանդաժը, նեղացաւ, փոքրացաւ, մնաց միայն մէջքի կարմիր աչքը, որը հետըզհետէ խոտացաւ անթափանցելի խաւարում՝ դառնալով ըստը կէտ ու, յանկարծ, Ադամեանը լսեց հազարերախ ոռնոցը վիրաւոր դազանների: Գնացքը կլանում էր խաւարը եւ դեռ փապուղուց գուրս չեկած՝ մահազանգում էր իր խրոխտ երթը: Ծչակների ճիչը արձագանգում էր այլանդակ կամարների անդուտանելի խոռոչներում, բազմապատկում եւ գազազած վիշապի պէս դալարում էր, տնջում, անասելի հոնդիւնների փոխում, քանդում, խորտակում եւ իր ժանդոտ ատամների տակ խարտոցում ամէն ինչ: Ադամեանը դիւատարի նման դլուխն առաւ ձեռքերում՝ չլսելու համար այլեւս կաղկանձի փոխումած դազանի ողբը, որը սակայն կայարանն ու կայարանի հետ ամբողջ քաղաքը լեցրել էր իր անձեւ սարսափով: Որդեկորոյս մայրերի աղիողորմ լացը, հեռացող զինուորի մոխրացած հայեացքը, սիրող թեւերի յուսահատ աղերսը, ծառերի անասելի մերկութիւնը, դաւակների անհաս անմեղութիւնը, ընտանի պատուհանների լուռ մրմունջը, չզրուած նամակների թէ՛ս կարօտը, սպիտակ ճանապարհների մենութիւնը, սրտերի անձերը, հեռուների ցաւը, սիրոյ ցաւը, ապրելու ցաւը, սպասումի ցաւը: Ադամեանին թուաւ, թէ բոլոր քաղաքների բոլոր կայարաններում զնաքնելու միաբերան Նոնան կանչում եւ որ ո՛ր որ է՝ Նոնան պիտի ձերբազատուի վերադարձի ընթացքից ու իր դիրկն ընկնի հեւսսպառ՝ ինչպէս պատահում է շարժանկարներում, վերջին մեքսաձի ժամանակ: Նա կարօտել էր Նոնային: Նա զիտէր, որ Նոնան անբաժան էր, որ սիրում էր Նոնային եւ որ Նոնան պիտի չվերադառնայ: Եթէ զլուխը վերցնի ու քայլի, անպատճառ մի օր կը հասնի Նոնային, եթէ երկու հորիզոնականները լոյսի արագութեամբ սուրան, մի օր տիեզերքի բեկման կէտում անպատճառ կը հանդիպեն իրար, այդ մասին ժամանակին մի ուսումնասիրութիւն էր պատրաստել՝ հիմնուելով Այնշտայնի յարաբերականութեան տեսութեան վրայ. նա զիտէր նաեւ, որ սուրջի փոխարէն իր հողին էր, որ սովահար դայլի պէս կանչում էր Նոնային, բզկտելու նրա մարմինը եւ մասունքները մատուցելու հեթանոս աստուածներին, որոյ՛հետեւ ինքն այլեւս դարձել էր անաստուած. ինչպէ՞ս չդառնար, երբ բոլոր չաստուածները մի օր խօսք մէկ արած հանել էին իր սիրտը, չներին նկտել: Մի պահ նա յենուեց պողպատեայ ժանդոտ սիւնին եւ իր թիկունքում զլաց մետաղի սիոփիչ պաղը. հիմա դազանը եկել, մտել էր իր ներսը եւ անդադար քերում էր պատերը, հիմա կաղկանձը խառնուել էր իր արեան ձայնին, դարձել հողեվարքի աղաղակ, խամրումը չճաղկած սէրերի, չարեւացած օրերի, ծաղիկները մնացին այլուր, ծաղիկները մնցեցին խորումնկ — առաջին համբոյրի մեղրի պէս անխարդախ ու փխրուն, ծաղիկները, ծաղիկները — այրուցք, երբ վաղուց ոչինչ չի պատահում, ապա ժամանակը յղի է պատահումներով, աղեղները այնքան պրկում են, որ այլեւս յաւելուել յարումի տեղ չի մնում. ի՞նչ երկախօսութեան մասին է խօսքը, երբ ամբողջ մի կեանք մնախօսութեան սառցարանում է սառուցուել. ես հարուստ էի թապաւորի պէս, մինչեւ որ դու եկար եւ ցոյց տուեցիր իմ սնանկութիւնը, փաստօղէն այս ճշմարտագոյն աշխարհն է աշխարհների մէջ, մենք ենք, որ սխալ ենք հասկանում իրար, չենք հասկանում իրար, չենք կարող հաս-

կանալ իրար, որովհետեւ չենք ուղում հասկանալ իրար, այլապէս բոլոր մարդարէնները եկել ու դնացել են, իսկ մենք դեռ սպասում ենք երկար ճանապարհները փոշում, երբ խորքում դիտենք, որ ոչ մի ճանապարհ չի մնացել, մնացել է դոյուլթիւնը աւաղները, որոնք սպասումից քարացած՝ տակաւին սպասում են ծովերի կանաչին, երբ իրականում ձանձրոյթն է նստել մարդկանց աչքերին, ո՛չ, ո՛չ, խօսքը լինելու կամ չլինելու մասին չէ, այլ ա՛յն մասին, թէ ո՞վ պիտի ասի առաջին խօսքը, ո՞վ պիտի իմաստ տայ վաղանցիկ երթին, ո՞վ պիտի փարի հողեղէն աստղին, ո՞վ պիտի ձուլուի լուսէ սլաքում. այլեւս ուշ է, մարդիկ այլեւս երջանկութիւն են քարոզում, այլեւս շատ ուշ է, պատահարները վաղուց են պատահել. երբ ոչինչ է պատահում, ապա ժամանակը յղի է պատահումներով, իրերը հրմշտում են իրար ու մի բան է պատահում: Աղամեանը քայլեց դնացքամատոյցի եզրըքով, նա նոյնիսկ չլսեց իր ոտնաձայնը ամայի սալայտակի վրայ: Գայլերը յօշոտել, լսփեկ էին նրա ներքին անդամները, մնացել էր կեղեւը: Նա անդամ չլսեց դնացքի աղիողորմ վերջին սուրցը:

Երբ քաղաք իջաւ, քաղաքը սառել էր անչարժութեան մէջ: Նա վեր քաշեց վերարկուի օձիքը, ամրացրեց դօտին եւ յանկարծ աշխարհի բոլոր կողմերից վրայ հասաւ ալիքը՝ հորիզոնական ու մոլեգին, կապոյտ վիթխարի ժապաւէնի պէս: Մի վայրկեան նա ընկրկեց: Զիմացաւ: Ուզեց փախչել, սակայն այլեւս ուշ էր, ապաստան չէր մնացել: Համատարած աւերի մէջ մնացել էր միայն Նոնան:

Ե. ԿԱՐԱՊԵՆՏ

Դեկտեմբեր, 1978
Ուաշինկլթըն

Յ. Մ Ա Ն Ո Ի Կ Ե Ա Ն

Վ Ե Ր Ը Ն Ծ Ա Յ Ո Ի Մ

Գուցէ շնանշնաս զիս երբ քովդ զամ
ագատագրուած երգի պէս-
վերապրած ուղիւորն եմ
երուզիդ կորուսեալ ուղիւորութեան :

Կու զամ լեզի՝
նման Մեհիւզի ճամբորդի մը նուարեկ,
որում աշխրուն կը թեւածէ օրհառ
ծովերու անդնդայայց եղերերգութեան :

Կու զամ՝
մկրտուած արինով,
մկրտուած կեզծ դաշինմներու բերկրութեամբ :

Կու զամ՝
ծամանակի դարեւանդէն անձրեւային,
ուր երգելու իրենց երգը կը բազեն՝
առանց բազմանական խօսի
եւ կ'ալարեն երգ մը հօրը՝
հերձաքաղով կտրելով պորտը իրենց հաւատքին :

Վերապրած հունչն եմ
հեռասայց հնչիւններուց քաղցրութեան-

Վերջին մորմոքը՝
չարտաքերուած պաղատանքիդ :

Ոչ մէկ ընկալազիր պարագրեց զիս
նայուածքիդ վերաբերման խորհուրդով :

Ստանեցայ՝
կիսափուլ պարիսպներուդ յիշատակարանով,
քարերուդ երկարազիր ողբերգութեամբ,
եին բարդայրներուդ նախազուած հասկերով :

Պարզրէ՛ զիս
իբրեւ նոր խորհուրդ արեւազայի՝
պսկուած հաւատքիդ ազօրամատենէն :

Իս խոհերուդ միտքիկ ապրումով՝
ի՛՛ծայարբերէ պահ՛ն սխալիչկազօր
Ջոհաքերման պատարագիդ :

Քուկդ եմ կրկին
Աւանդներուդ ընձիւղը նոր՝
Վերափոխուած
 հողիդ հովուական ֆնարերգութեան :

Դարաւոր երագէդ ախորեալ՝
Թափառական խռովքն եմ կարօտիդ ,
Որ կ'երագէ բնաշխարհը իմաստութեանդ :

Կանգնած եմ կրկին
Անդր-երագային նայուածքիդ դիմաց
Եւ այգարացներուդ կապոյտ երանութեան դէմ՝
Դարաւոր ցառով ,
Դարաւոր իզձով ,
Տառապանքէ տառապանք
 շրջանցող հոգեխառնութեամբ :

Կանգնած եմ կրկին՝
 վայելչութիւնդ հանդիսադրող
 զգեստաւորման արարի պէս .
Եւ Ձայնիդ վերափոխումը օրհնաբանող
 շարակնահիւս ծիսակատարութեամբ :

Անդր-շիրիմեան խոհերով եռուն
 օրհասիդ դիմաց՝
 բաց է հոգիս ազգմադաշտի պէս . . . :

Ն Ե Ր Ա Հ Ա Յ Ե Ա Ց Ս Ե Ի Ե Ռ Ո Ւ Մ

Աչքերուդ արտասուացող գիշերին
 կը տարութերի մտածումս
 հակադիր ներհակումներուդ միջեւ :
Աչքերուդ միգապատ երկնքին
 չեկաւ այցի
 բարեշնորհ ոչ մէկ գիշեր համբարձման ,
 այլակերպելու մեզ
 դարերու ախտավարակ կսկիծէն ,
 որ արգասիքն էր առհաւական
Օտար երգերու ժանտահոս երակին ,
Օտար յղիւմնքի մը գինեշուրք արեցութեան ,
Օտար հանգանակի մը ուժացեալ արմատներուն :

Ես կը պահեմ քու անցեալէդ
 Եօթը պատգամ,
 Եօթը անգիր ճշմարտութիւն,
 Եօթը յուշ:

Ես կը պահեմ կեանքէդ քաղուած
 Եօթը բուրմունք վայելչական,
 Գգայնութիւն Եօթնաշնորհ:

Քեզ կը պահեմ յղացքին մէջ
 սաղմոսերգակ լոռութեան,
 ներահայեաց սեւեռումի՛.

Ես իմացումին մէջ գօրեղ՝
 բազկերակուող յատկութեանց,
 Ըսպանակուող գգայարամքի:

Հոն,
 ուր սէրը հոմանիշն է
 կեանքի բարեխառն գիտակցութեան,
 ուր լոյսը աւետումն է
 մտոցուած յաղթանակներուդ Նաւասարդին:

Ես կը պահեմ քու անունէդ
 Եօթը խորհուրդ,
 Եօթը տեսիլք պայծառակերպ,
 Եօթը իղձ:

Ես կը ձուլուիմ անունիդ Եօթնասրբեան շողերուն,
 Անունդ՝ անծանօթ գգայնութեան տեսական,
 Անունդ՝ պտղաբերման երկունք,
 Անունդ՝ ծածկագրուած իմաստութիւն:

Կը լծարդեմ խորհրդանիշը անունիդ՝
 հեռասոյգ առընչութեանց հմայքին,
 որոնց ձգտական իմացումով
 Ես կը բացուիմ
 Էութեանդ տարաշխարհիկ ձայներուն:

Ես գիտե՛մ,
 մոռացման յորձանուտին ընդմէջէն
 քեզ վերագտնելու շաւիղները խորհրդաւոր:

Ես գիտե՛մ հնարքները ներանձնուղի
 վերափոխելու քեզ
 յիշողութեանս ցուցասրահէն գողցուած
 դիմանկարի մը պէս...:

Ա. Ա Բ Է Լ Ե Ա Ն

Զ Ի Ն Ա Դ ՈՒ Լ 27...

Ամիր Ֆախրէտտին Ջօրանոց :

Ամէն բառի մէջ դոյժ մը :

Ամէն վանկ՝ մահազդ մը :

Ամիր Ֆախրէտտին Ջօրանոց :

Ուրիշ՞ այս սեւ անունը, որ կրցած էր իր մէջ խտացնել այդքան դաւ ու նենգութիւն :

Թերեւս բոլորովին սուտ բլար այդ լուրը, շինծու : Չէ՞ որ ամէն ինչ վերջ դտած էր : Քսանութ, քսանինը, երեսուն...

Երեսուն զինագուցներ բաւարար եղած էին՝ այդ նենգութիւնը բեմադրելու համար : Նոյնիսկ հեռագրատան պաշտօնեան, որ բոթը ծալեր, պահտրանին մէջ դրեր էր, ինծի յանձնելէն առաջ, նոյնիսկ այս սպասեակը, որ դարեջուրի շիշը սեղանին վրայ դնելով հեռացաւ, բոլորն ալ մեղքի իրենց բաժինը ունէին պատահածին մէջ : Բայց ինչու մեղքի, աւելի ճիշդ՝ վիշտի իրենց բաժինը :

Գարեջուրի շիշը քրտնած էր : Ծիշի ճիշդ վիզին խոշոր կաթիլ մը ջուր խտացաւ, յետոյ՝ դանդաղօրէն սահեցաւ շիշին կողմ ի վար, դալարուող դիժ մը ձգելով ետին : Ներծոր դեղձերու խոժոժմը երակներու մէջ, եւ երակներուն պրկումը, համատարած ու դալարուող վիշտը, մարմինի հիւսկէններուն մէջ, արեան բոլոր գնդկնեւրուն վրայ փորագրուող ու պայթող վիշալը, բոլոր անոնց, որոնք ճանչցեր էին Վահագնը : Ա՛լ չեմ մտածեր անոնց մասին, որոնք ծներ էին զինք, խնամեր էին ու լաւ երազներ հիւսեր էին իր հաշտոյն, ապագային համար . այլ՝ միայն անոնց մասին, որոնք վերջին անգամ տեսեր էին զինք, երկրորդականի աւարտական դատարանէն ելլելու պահուն, զինուորական համազգեստով, միանալու համար բանակին, իրբեւ պահեստի զինուոր : Երակներուն մէջ ընդլայնող արիւնը, եւ երակները պրկող վիշտը համատարած :

Ամիր Ֆախրէտտին Ջօրանոց :

Այդպէս՞ դաւաճան ու սեւ գիշեր մը քսանիններորդ կամ երեսուններորդ զինագուցին նախորդող, կամ՝ անոր յաջորդող գիշերը : Ջօրանոցի մուտքին՝ պարտականութեան ճամբուն վրայ, նոր արդուկուած համազգեստին մէջ, ուր թիկունքէն...

Ահա՛ թէ ինչ կ'ըսէին մատներու միջեւ դողացող տողերը եւ այդ անհեթեթ ու անբարոյ ոճիրը կը դառնար իրողութիւն : Յետոյ, կ'ըսէին տողերը, պատանքեցին դրօշակով, տարին քաղաքէն դուրս, խումբ մը զինուորներով յանձնեցին հողին՝ առանց փամփուռտ մը արձակելու : «Ինկաւ պարտականութեան ճամբուն վրայ» գրեցին, վերադարձան :

Նման մահազուներ դրուեցան դրեթէ ամէն տեղ :
 Փամփուշտներով՝ մարդոց ննջասենեակի պատերուն վրայ,
 Ռումբերով՝ տան երդիքին վրայ,
 Վրիպած փամփուշտով՝ դպրոցի ճամբուն վրայ,
 Խաղաղ թաղերու անասպահով մուտքերուն՝ աւաղէ պարկե-
 րուն վրայ :

Եւ այդպէս՝ դրեթէ ամէն տեղ, շարքը երկարեցաւ, եւ ամէն
 անգամուն ալ, պատանքեցին դրօշակով, տարին քաղաքէն դուրս,
 խումբ մը զինեակներով, յանձնեցին հողին՝ առանց փամփուշտ մը
 արձակելու : «Ինկաւ պարտականութեան ճամբուն վրայ» գրեցին,
 վերադարձան :

Քալեցի աննպատակ ու կրաւորական շարժումներով :

Մեր տան ճամբուն վրայ էի : Ճամբան հին էր, որքան հողը :
 Քարքարոտ էր նաեւ : Յից քարերը, ժամանակի ընթացքին, մաշեր
 էին . միակ հետքը, զոր մարդիկ կրցեր էին թողուլ այդ խրոխտ լեռ-
 ներուն կողին : Աջ կողմս՝ մեր պարտէզն էր : Արձակ ու առանց ցան-
 կապատի : Մեր դիւղի բոլոր պարտէզներն ալ առանց ցանկապատի
 են : Այդ պատճառով ալ մեր դիւղը ոստիկանատուն չունի, ոչ ալ ոս-
 տիկան : Երբեմն միայն, ծոյլ ոստիկաններ, իրենց հերթական հըս-
 կողութեան ընթացքին՝ կ'անցնին մեր դիւղէն, եւ իրենց խորջին-
 ները կը լեցնեն մեր պարտէզներուն բարիքներով ու կ'երթան : Իսկ
 ձմրան, երբ խնձոր ու սալոր չկայ, անոնք պարզապէս կը դադրին
 մեր դիւղէն անցնելէ :

Եւ որովհետեւ մեր պարտէզը ցանկապատ չունէր, ես, հոփ
 ցատկեցի ցածկեկ պատէն ու մտայ ներս : Մութին մէջ, ծառերուն
 շարքերը ձուլուած էին, եւ ինչ որ յստակ էր ու անժխտելի՝ հողն
 էր միայն : Ողորկ, արեւուն տակ հասունցած, ու իրիկուան ցօղէն
 փափկացած հողը : Ուրքերս կը թաղուէին մշակուած հողին մէջ, եւ
 հողը ձայն ունէր ոտքերուս տակ : Իրական, շնչող, կենդանի : Հայրս
 մշակած էր դայն եւ անոր մատներն ու այլը կոշտացեր էին ու ճեղք-
 ճեղք վիրաւորուեր : Բայց այդ կոշտացած ու յաճախ ալ յամառ քա-
 րերուն դէմ արինւած ձեռքերը սրտի մը չափ փափուկ էին : Անոր
 ձեռքերը կոշտացեր էին եւ հողը փափկացեր էր : Անոր քրտինքը
 խառնուեր էր հողին եւ ծառերը աւելի լաշն տարածեր էին իրենց
 ճիւղերը : Իրապէս դժուար էր ոտքս դուրս հանել, ամէն անգամ որ
 անիկա թաղուէր հողին մէջ : Մեծ հայրս դեռ պարտէզն էր եւ փը-
 լած պատ կը նորոգէր : Ան միշտ այդպէս էր . երբ իրիկուան մութը
 կոխէր եւ ընթրիքի համար զինք տուն կանչէինք՝ ան փլած պատ նո-
 րոգելէն կու դար . երբ քարը կոփելէն դադրէր, մուրճը վար դնէր
 ու շտկուէր, ան՝ խրոխտ եւ ուղիղ հասակով կը կանգնէր մութին
 մէջ : Բայց օր մը, երբ իր արինէն նմոյշ մը տարրալուծարան տա-
 րին, բժիշկը հաստատեց այտաճանաչուած, եւ մեծ հայրս, ամէն
 առաւօտ, նախաճաշէն առաջ, իմուլլիմի ներծոր գեղձը աշխուժա-
 ցընող դեղահատ սկսաւ առնել : Այն օրէն ի վեր, ամէն առտու, մեծ

Հայրս ղեկահատ կ'աննէ, եւ երբ ընթրիքի համար զինք առն կանչելու ըլլանք, անպայման որ փրած պատ մը նորոգելէն կու դայ: Ու այդպէս, ամէն ամիս, իր արիւնէն, փոքր սրուակ մը արիւն տարալուծարան կը տանին:

Հայրս ալ ղեռ պարտէզն էր՝ հողը մշակելով տարուած: Ան, պարզապէս, կը տարուէր գործով եւ այնքան ատեն, որ մեծ հօրս մուրճին ձայնը լսէր, ժամացոյցի ճօճանակին պէս կանոնաւոր ու հատու, չէր զգար, թէ մութ է արդէն: Ու երբ զինք ընթրիքի համար տուն կանչելու ըլլայինք, ուշ երեկոյեան հողը մշակելէն կու դար: Բայց այս վերջին օրերուն, երբ կուրծքին տակ սուր ցաւ զգացեր էր, cardiogramը ուսումնասիրելէն ետք, բժիշկը հաստատեր էր ախտաճանաչումը եւ երակախցման դարմանումի յատուկ ղեկահատ թեղադրեր էր: Անշուշտ, բոլորն ալ զարմացեր էին, թէ ինչպէս այդքան մեծ ու զուրգուրտ սիրտ մը կրնար այդպէս անկում արձանագրել cardiogramին վրայ: Բայց տակաւին, երբ ուշ երեկոյեան ընթրիքի համար տուն կանչելու ըլլանք, ան, անպայման, հողը մշակելէն կու դայ:

Իրօք, ղժուար էր ինծի համար ոտքս հանել հողէն, երբ անիկա թաղուէր հողին մէջ:

Ահաւասիկ եւ դիւղը, որ ամառնային անզորը իրիկուն մը կը դիմաւորէր: Փողոցի լոյսերէն միայն քանի մը հատը վառ էին: Միւսներուն լամբերը մարեր էին, եւ չէին փոխարինուեր նորերով: Ի՞նչ փոյթ, ատենին ընա՛ւ լոյս դոյութիւն չունէր: Ելեկտրական ցանց չկար: Ճամբան ալ ասֆալթապատ չէր, խիճերով, փոշիով, ծերտով ու հաւերով խճողուած, ուր թոնիր դացող կիները, իրենց շաւիղ տեղ մը կոթնեցնելու, հանդէպնելու յենարան մը չունէին: Ամբան փոշին կը բարձրանար սուրացող բեռնակառքերուն եւ թրաք-թէօրներուն ետեւէն. եւ հիմա խաղաղ, խաղաղ, խաղաղ էր դիւղը, ի՞նչ փոյթ, թէ ճամբան ասֆալթապատ էր այլեւս, ղեռ թոնիրներէն թարմ հացի բոլոր կը ծաւալէր, աշխատանքը չէր դադարած ըրնաւ, ղեռ պատշգամներէն ու երգիքներէն կիները ձայն կու տային տղամարդոց, ընթրիքի ժամը յայտարարելով, ղեռ մանուկները երեկոյեան ուշ կու դային խաղէն:

Իեռ պահ մը ատաջ տարին իր ընկերը: Նոյն այդ պատնէշին ետեւ ճանչցած էր այդ տղան: Չէր կրցած սիրել զայն: Բայց հիմա, երբ ան այլ չկար, եւ անոր ղեռ տաք արիւնը, բարկ անձրեւին հետ ձուլուելով, կը խառնուէր պատնէշին պարկերէն հոսած աւազին, տեսակ մը դուժ կը զգար իր սպաննուած ընկերոջ հանդէպ: Գու՛թ: Որքա՛ն աղուոր էր այդ բառը...

— Գո՛ւթ, — բացազանչեց բարձրաձայն:

Քրիստոսի պատնէչի ետին դտնուող զինուորը չլսեց: Ան եւս ցում-ցամատը սեղմած էր բլթակին եւ, աննպատակ ու մոլեղին՝ կապար-ները կը խուժէին պարկերուն միջեւ բաց ձուլեցին՝ հոգեւոր: Այդ օր, նախորդ բոլոր օրերէն աւելի հրթիռ արձակուած էր իրենց դիրքերուն վրայ: Իր պատնէչին մէջ դտնուող տղան, որ դեռ մտա-ղաշ դէմք մը ունէր, սեւ նորելուկ պէխերով, քիչ տառաջ դարնուած էր ճիշդ կողէն: Դեռ պայթումին զղրղոցը կը յամենար լսողութեան մէջ, անպատկառ յամառութեամբ մը: Թմբկաթաղանդը կը ցաւէր այլեւս: «Գու՞թ», որքա՞ն ճիշդ էր այդ բառը, եւ հիմա, ինք, ամէն բանէ աւելի եւ ամէն բանէ առաջ, պէտք ունէր դու՞թի: Ձղջաց, որ չէր կրցած սիրել այդ անփորձ ու դեռատի տղան, որ մեռած էր, առանց իսկ բառ մը կարենալ արտասանելու...

Անդրադարձաւ, թէ տխուր, շատ տխուր էր այդ պահուն:

Իր պատնէջը ղետեղուած էր երկու փողոցներու խաչաձևուծին հսկող անկիւնի մը վրայ: Այն պատը, որուն կը կոթնէր ծանր զնդա-ցիլը դործածելու պահուն, զպրոցի մը պատն էր, որուն վրայ կի-սատ նախադասութիւններ դրուած էին, նշանաբաններ, եւ իրմէ ա-ռաջ այդտեղ կրուող զինեալներուն անունները: Անոնք զուցէ մեռած էին արդէն: Հազար անգամ կարդացեր էր այդ դիրքը, եւ հիմա, տեսալ մը մտերմութիւն կը զգար անոնց հետ:

Աղբանշանը լսուեցաւ: Նոր պարեն կը հասնէր իրենց դիրքին: Այդքա՞ն կարեւոր էր այդ դիրքը, թէ առատ էր զինամթերքը: Ձու-ղեց աւելի վերլուծել: Շատ սովորական էր այդ գործողութիւնը: Հիմա ինք զիմակով պիտի ծածկէր դէմքը եւ դուրս պիտի դար պատ-նէչէն: Դրացի դիրքէն իր պաշտպանութիւնը պիտի ասահուուէր, եւ ինք, զնդակներու հովանոցին ասպատանած՝ վաղելով պիտի կրտ-րէր քովի նեղ փողոցը, որ կը բացուէր թշնամի դիրքերուն վրայ: Հանդիպակաց մայթի դիրքերէն պիտի ստանար զինամթերք:

Ամիսներ շարունակ, նոյն դիրքէն կը կուռէին: Ջերմի բռնը-ւած հիւանդի մը զառանցանքին կը նմանէր այդ մղձաւանջը, որ յա-մառօրէն կ'երկարէր: Յարձակումի որեւէ փորձ չէին կատարեր ի-րենք: Ոչ ալ անոնք կը յարձակէին: Ձինամթերք կու դար, դիմակով կ'անցընէր դայն այս կողմ, կը կրակէր, կը սպառէին փամփուշտնե-րը... զինամթերքը կու դար... եւ այդպէս, աննպատակ: Թէեւ շատ բան կը դրէին այդ օրերուն, շատ բան նաեւ կը խօսուէր պատկե-րասփուռէն եւ ձայնասփուռէն:

Սակայն այդ բոլորին մէջ, ամենածիժաղելին դուցէ, սա դի-մակն էր: Կ'ատէր այդ սեւ լաթէ երկը, որ աչքերուն համար զոյգ բացուածքներով վամփիլի շնական տեսք մը կու տար իր զինտիկը ընկերներուն: Անկասկած, որ ինք եւս անոնցմէ տարբեր մէկը չէր: Ա՛յդ աստիճան կը վախճային այն միւսներէն, ինչո՞ւ որեւէ առիթով չէին կրցած դրո՞ւ տալ, խոյանալ թշնամի դիրքերուն վրայ, բաց-բաց դէմքերով, ուռուանքով... Այնքան սարսափելի թուացեր էր իրենց անոնցմէ ճանչցուելու դաղափարը. վերջապէս, քաղաքացիա-կան պատերազմ էր...

...Քիթը, ստիտրականին պէս, դուրս մնաց դիմակէն: Կապար-ները կը շաչէին՝ անկիւնաքարերուն զարնուելով: Թեթեւ զնդացիլը սեղմեց կողին, քիչ մը դէպի առաջ կղեցաւ, ամբողջ մարմնով դըն-

դաջիբրին հակած՝ ցատկեց պատնէչէն դուրս: Կտրեց փողոցը, անընդհատ կրակելով թշնամի դիրքերուն ուղղութեամբ: Հիմա աւելի սպահով էր: Դադրեցուց կրակելը եւ, պատին քսուելով՝ յառաջացաւ դիուշութեամբ:

Առաջին պատնէչը դեռ հեռու էր: Ճամբան կ'երկարէր: Կ'երկարէր նաեւ իր խորհրդածութիւններու շղթան: Բայց ինչո՞ւ այդ տեղատուութիւնը յանկարծ. ինչո՞ւ այդ անբացատրելի թուլացումը իր կորովին: Հիմա հաշուեյարդարի պահ չէր. ինչ որ եղաւ՝ եղաւ... եւ այդ էր լաւադոյնը: Շարունակեց յառաջանալ...: Ինքզինք, ահամայ, դրած էր խուժանի մը շարքերուն մէջ, ամբոխավարութեան մը քմայքին ձղուած, ճիշդ այդ ծանր դնդաջիբրին ետին, որուն ինքնադոծ սարքերուն միջոցէն երեւցող շարք-շարք փամփուշտները իր առնականութեան մեծադոյն հաւաստիքը խորհրդանշած էին անցող ամիսներուն: Սա շնացող քաղաքը, որ հիմա երկաթով ու վառօդով ճեղքուած էր երկուքի, իր փառքի եւ դեղեցկութեան օրերուն ա՛յնքան վաւաշոտ ու մեղաւոր էր եղած, ա՛յնքան ցանկութիւններ էր ներշնչած իր եսին, նոյն ատեն այնքան ժուլատ, որ զինք փոթորկող բնադրական այդ ցանկութիւններէն եւ ոչ մէկը վարձատրած էր: Եւ ինք ստիպուած էր զանոնք բանտել իր ենթադիտակիցին մէջ, ամէնէն անցիկող կապանքներուն տակ: Հիմա այդ շահատակութիւններով այնքան վարձատրուած ու թեթեւցած կը դնար: Կարեք չկար զղջալու, նոյնիսկ այն բոլոր արարքներուն համար, զորս կատարած էր մօտիկ անցեալին:

Եւ մինչ դիուշութեամբ, միշտ պատին քսուելով, դեռ կը յառաջանար, յիշեց, թէ ինչպէս, նոյն այդ փողոցի մուտքին զետեղուած անցարդելին վրայ, բոլորովին անմեղ անցորդներ սպաննած էր անտարբերութեամբ: Հիմա յստակօրէն կը պատկերանային իր յիշողութեան մէջ անոնց աղաչող, անոնց սարսափահար, անոնց սուրբ երեսները, որոնց արցունքոտ ու պաղատող, լայնարաց բերաններուն ուղղած էր իր զնդաջիբրին փողը, եւ մատը չէր վեցոցուցած բըլթակէն, մինչեւ վերջին փամփուշտին արձակուիլը: Իր մէջ կուտակուած զրկանքներուն բոլոր դառնութիւնը, իր ատելութիւններն ու ոխերը, զնդաջիբրէն դուրս ժայթքած էին, արձակուող իւրաքանչիւր փամփուշտին հետ...

...Տարօրինակ կերպով կը սիրէր կեանքը հիմա: Ոչինչ պիտի ինայէր՝ զայն պաշտպանելու եւ սպահով պահելու համար: Որքան բախտաւոր կը զգար ինքզինք հիմա, որ ստացած էր վէրք, եւ իրեն վիճակուած էր ներքին թաղերու դիրքերէն մէկուն մէջ մնալ: Այստեղ կեանքը տարբեր էր, ունէր իր հրապուրիչ կողմերը: Հիւանդանոցի մէկ շարթուան կեանքը իր մէջ շեշտած էր եսամոլութեան տրամաբարութիւն մը, եւ այդ զիտանալու ինքնաճանաչում նրկատած ու իր կեանքը աւելի իմաստաւորուած դտած էր: Ճակատի առաջին դիժներուն վրայ ամիսներ ամբողջ կուռելէ ետք, այս տեղափոխումը հոյակապ էր: Պատրաստ էր հրաժարելու բոլոր այն կարգախօսներէն եւ նշանաբաններէն, որոնք իբր տեսլական եւ դադափարբասութիւն ներկայացած էին իրեն հանապաղօրեայ հացի պէս, առօրեայ պարենաւորումին իսկ հետ: Հոգ չէ, թէ տեսակ մը վատութիւն կար իր այդ պայքարին մէջ: Դասակութիւնն ալ ունէր

իր դրաւիչ կողմերը: Հիմա ոչինչով կը տարբերէր սա մանուկէն, որ, երկու փոքոց անդին պայթած հրթիռին սարափը իր վտրքիկ ներաշարճին, տուն փութացող մօր ջղանցքին կառչած՝ կ'աճապարէր: Ընդհակառակն, ինք աւելի ապահով էր իր դիրքին մէջ, պատնէչի ետին: Հրթիռները վայելով կ'անցնէին եւ իր համոզումը աւելի եւս արդարացած կը դռնէր:

Դեռ նոր էր տեղափոխուած, երբ քովի տունէն դադաղ մը հանեցին: Լեռներու ճակատին վրայ զարնուած էր մեռեալը: Թէեւ օրինաւոր բանակի զինուոր եղած էր, բայց կռուած էր իրենց կուսակցութեան շարքերուն մէջ, եւ հիմա, մարտիկներու խումբ մը, դնդացիւններու համազարկով, կ'ընկերակցէր անոր դադաղին: Առաջին անդամն էր, որ ինք ականատես կ'ըլլար մէկ ամսուան նորահարսի մը այրիացումին, որուն դեռ կոյս որովայնը կը ցնցուէր, երբ ան կու լար իր ամուսնոյն դադաղին ետեւէն:

Քիչ ետք ճաշի ժամն էր, իրենց կը հասնէր ուտելիք եւ առատ հաց: Ատով իսկ առանձնաշորհեալ կը զլար ինքզինք: Քիչ առաջ, իր մօտէն անցնող կիրն՝ առանց հացի վերադարձած էր փուռէն: Ռումբերը կը շարունակէին տեղալ անպաշտպան տուներուն վրայ եւ ինք աւելի եւս կը համոզուէր, թէ այդպէս, իր դիրքին մէջ, ապահով էր իր կեանքը: Իր պահակութեան երեք ժամը վերջանալու մօտ էր: Վաճառականական կեդրոն դացող ընկերները դեռ չէին վերադարձած: Սովորականէն աւելի էր այդ ուշացումը: Կա՛մ աւարը շատ էր, եւ կա՛մ՝ այլ աւաղակախումբի մը հետ ընդհարում մը տեղի ունեցած էր: Հետզհետէ անհամբեր կը դառնար: Թող շուտ դային. պահակութեան ծոյլ պարտականութիւնը ձանձրացուցիչ չէր, ընդհակառակն, կրնար ինքզինք զբաղ պահել՝ կարգալով ու դիտելով պատերուն վրայ փակցուած մահադռներն ու ճակատին վրայ զարնուած կռուողներուն նկարները, որոնց անխուսափելիօրէն կըրցուած կ'ըլլային միլիոն անդամ կրկնուած ու մաշած լողուղներ: Անհամբեր էր, ո'չ թէ աւարին համար, զոր պիտի բերէին ընկերները, այլ պարզապէս անհամբեր էր եւ անտրամադիր եւ չէր կրնար բացատրել իր անհամբերութեան պատճառը: Ձեռքը զրպանը տարաւ: Քանի մը անպաշտ իրերու կողքին կար նաեւ amphetamineի սրուակը: Որոշ դուրդուրանքով մը սրուակը ամին մէջ սեղմեց պահ մը: Կռուի առաջին օրերուն այնքան բարերար դեր խաղացեր էին այդ դեղահատերը: Յետոյ՝ մատները յամեցան նոր հասած պարբերաթերթին վրայ: Տակաւին չէր կըրցած ամբողջութեամբ սպառել բոլոր հմայքներն ու մեղկութիւնը ատոր, թէեւ ա'լ դոց դիտէր, իւրաքանչիւր էջը զբաւող ցնծուհիին դիրքն ու շեշտուած մասը: Ռումբերը աւելի մօտ կը պայթէին այլեւս:

Amphetamineի սրուակը զրպանին մէջ, պարբերաթերթը շապիկի դօտիին անցուցած, փամփուտակալ կողէն կախ եւ զնդացիբը ձեռքին՝ ինքզինք անապահով զղաց յանկարծ: Ճակատ երթալու հարկաւոր ամէն ինչը կատարեալ էր, ի՞նչ բան կ'արդիւնէր հրամանատարութիւնը, քիչ ետք իսկ, զինք ճակատ ուղարկելէ: Անկասկած, որ կ'ընդդիմանար, փախուստ կու տար, կ'երթար զոգութեան եւ ա'լ բնաւ ճակատ չէր երթար...:

Պայթումները աւելի յաճախակի էին այժմ: Խղճահարութեան

պէս զգացում մը ունեցաւ յանկարծ: Ոչ մէկ ձեւով վարձատրուած կը զգար: Թո՛ւ... այս մէկը շատ մօտ էր: Յաջորդը կրնար չուշանալ, արդէն կը սուլէր... չուշացաւ: Աայթէն փրցուած քարի բեկորներ, աւաղ, փոշի եւ մետաղ: Գանկը պայթելու աստիճան կը խժժար: Ոչ մէկ ցաւ կը զգար, բայց ուժասպառ էր: Անդրադարձաւ, որ զնդացիլը ձեռքէն ինկած էր եւ ինք զետին փռուած: Չախ ձեռքը, որ չէր անդամահատուած, կը զգար իր սեփական արեան ջերմութիւնը: Բերնէն արին կու դար, մարմինը բոլոր ծակծկուած էր մետաղի մանր կտորներով: Թող կարճ տեւէր ճշմարտամբ: Բաւարար ուժն ու միջոցը չունէր՝ անձնասպանութեամբ կրճատելու համար հողեվարքը: Իր մարմինէն միակ առողջ մնացած մասը այդ դիտակցութիւնն ըլլար կարծես, ողջ մնալու եւ տարապելու սարսափեցուցիչ դիտակցութիւնը: Թող քիչ մը եւս ուշանար հիւանդատար կառքը. դուցէ մեռնէր այդպէս: Բայց արդէն կը լսուէր անոր դժոխային սուլոցը, որ, ուրիշ վերաւորներու կարգին՝ զինք եւս վերցնելու համար կը սուրբար խելայեղ:

Անփառունակ անկումներու ալիքը դեռ չէր խորտակած պատկերասփիւռի հաստատութիւնը, երբ Ալին առտու մը հաղորդեց ինծի մեկնելու իրենց որոշումը: Չկրցայ առարկել:

Քաղաքը կիսող գօտին աւելի եւս յստակ գիծեր ստացած էր. արդէն եւ իւրաքանչիւր շրջանի մէջ ստեղծուած էր ստիպողական կարգի ապրելակերպ մը: Եւ այդպէս, սպասումի անհատնում շղթան կրնար երկարիլ տակաւին: Անիմաստ էր մօտալուտ լուծումի մը ակնկալութեամբ օրօրուիլ: Դեռ խօսնակները չէին սպասած յուսատու նախադասութիւններու իրենց մթերքը, որոնց իրենք ալ չէին հաւատար, բայց կրնային օրօրել զանդուածը եւ ուշացնել լուծապը:

Երկիրը կ'ընթանար դէպի անկում: Բայց լուրերու բաժնի ընդհանուր խմբադիրը դեռ կրնար ձեռք ձգել ժողովներու տեղեկադրական ժապաւէններ, կրնար լուծում խոտացող ակնարկութիւններ փնտռել՝ այս կամ այն պետական կամ քաղաքական անձնաւորութեան կատարած յայտարարութիւններուն մէջ, դեռ վերջին ու վերջնական փճիւրը չարտասանած.— «Ամէն քաղաքացի թող իր սեփական պահակը դառնայ»:

Եւ իրօք, իրիկուն մը, լուրերը ընդհատուեցան այդպէս եւ պատկերասփիւռի փոքր պաստառը ծայրէ ծայր գոցեց նոր անիլուած ու խժժու գինուորականի մը դէմքը, եւ որուն կուրծքը խճողուած էր բազմաթիւ կարեւոր ու անկարեւոր նշաններով: Այդ օրերուն, երբ այդպիսի գինուորական մը, քանի մը թիկնապահներով՝ դրաման տակ պահէր ձայնասփիւռն ու պատկերասփիւռի կայանը, այդ չէր նշանակեր, թէ աղէտ մըն էր պատահածը, ոչ ալ, անշուշտ, փրկու-

թիւն մը, այլ, պարզապէս, հասնելի անակնկալ մը, որ միօրինակ ու մտալիկօղ անխիտանութեան քիչ մը գունուորում եւ շարժում կու տար:

Պատկերասփիւռի ընկերութեան մէջ իր պաշտօնը վերջնականապէս չէր կորսնցուցած տակաւին Ալին, երբ մեկնեցաւ Արփիկի հետ: Կարելի չէր մարդոց խորհուրդ տալ այդ օրերուն, ոչ ալ ուղղութեան ստանալ ուրիշ մը, որեւէ արարքի համար: Մարդիկ կ'ընէին այն՝ որ պատահարար իրենց մտքէն կ'անցնէր, եւ պահ մը կը թուէր ըլլալ «լաւագոյն լուծումը»:

Այդպէս ալ, աշնան առտու մը, ձգեցի զիւզը: Շատ բան փոխւած էր արդէն: Ամառնային իրենց պերճանքէն մերկացած հրապարակներն ու փողոցները, ա'լ գրեթէ ամայի, կը պատրաստուէին ձմեռնային ծոյլ ու երկար եղանակին: Պատահական եւ ուշացած բեռնակառքեր պարտէզներուն վերջին բարիքները կը փոխադրէին շուկայ: Թէեւ արեւոտ ու դեռ հաճելի առատոտներ կային ամբան վերջին այդ օրերուն, բայց, իրիկուան՝ հիսփի հոյժ իրեն հետ կը բերէր աշնան տրամադրութիւններով լեցուն մեղմ ցուրտ մը: Շարաթներ առաջ, արդէն մեկնած էին օդափոխութեան համար եկած դրսեցիները, եւ գիւղը, դեռ իր ձմեռնային պատեանին մէջ չբաշտած՝ կը ճամբէր ուսանելու համար մեկնող իր տղաքը: Կեանքը հետզհետէ կը դառնար ամուլ եւ պարտէզներէն ու մայթերէն կը հաւաքէր տղամարդիկ, սրճարաններու մագուիթ վառարաններուն մօտ, բախտախաղի ու բամբասանքներու սեղաններուն շուրջ: Ամառանոց ելլող աղջիկներուն նագանքն ու զիւրեք դարպասող տղոց խումբերը կը լըքէին փողոցներն ու դրօսավայրերը, եւ ինչ որ կը մնար հիմա, անհրապոյր ու լքուած ճամբաներու եզերքին, անոնց ճիչերէն ու ջըրքիչներէն բեկորներ էին միայն, որոնք դեռ կը յամենային ճամբեզրի քարերուն ու ծերպերուն մէջ պահուըտած:

Աշունը սկսած էր: Պատերազմը կը շարունակուէր տակաւին, աւելի հանդ ու մոլեգին թափով մը: Անուի ուշ՝ մեր խումբի տղաքը, մէկիկ-մէկիկ, ձգեցին գիւղը, իւրաքանչիւրը իր գործին կամ ուսման համար, գրաւելու իր բնական անկիւնն ու տեղը: Այդ անորոշութեան մէջ, Հրանդ որոշեց գաղթել: Անցազիրը, որ «անէծքի մը պէս մտաւ իր ծոցը», ինչպէս ինք կը սիրէր ըսել, զինք բաժնեց մեր լեռներու բերտ գերկէն: Յետոյ՝ հեռաւոր ցամաքամասէ մը բացիկ մը հասաւ իրմէ: Այնքան ազդուած էր մեկնելու պահուն, որ չկըրցաւ լեցուն բերնով հայհոյանք մը նետել անցազրի հասցէին, ինչպէս խոստացած էր նախապէս: Ու այդ խոստումը, հիմա, բարեւի մը փոխարէն՝ արձանագրած էր այդ ցամաքամասի «տեսարժան վայրերէն» մէկուն՝ գունազարդ պատկերին ետեւ:

Երբ ամբան թռչուններուն վերջին երամբ կը գաղթէր, կապարագոյն երկնքին վրայ հրաժեշտի ետանկիւններ գծելով՝ ես ձգեցի գիւղը:

Ժամ մը առաջ, հեռաձայնով կանչուած էի: Զակատէն շատ հեռու չէր մեր ակումբը: Նոյնիսկ ճակատ զոլութիւն չունէր մայրաքաղաքին մէջ եւ շրջակայքը: Ռումբերն ու հրթիռները կ'արձակէին կանոնաւորութեամբ մը, որ չունէր չափ ու կշռոյթ: Միակ կըշուութեաւոր ու շարունակական աղմուկը՝ զնդացիներու համազարկն էր: Լոյս չկար: Ձէի կրնար ստուգել ժամը: Գունս չէր տաներ: Ինծի թելազրուած էր քնանալ, մինչեւ առտուան ժամը երեք: Ատկէ ետք իմ հերթս էր պահակութեան: Անքուն ու կարմրած աչքերով երիաստարգ մը, որ իմ համազգեստիս պէս անհամեմատօրէն լայն, զինուորական համազգեստ մը կը կրէր, կողքին ատրճանակ եւ ձեռնառումբ, զիս դիմաւորած էր այդ իրիկուն, եւ յետոյ՝ առաջնորդած էր մ'թերանոց, ինծի յանձնելու համար համազգեստ, փամփռտակալ, փամփուշտ եւ զնդացի: «Գոյքը՝ դործածելու կարգ մը տարրական ցուցմունքներ տալէ ետք՝ «քնաւ վախնալ չկայ, միշտ պատրաստ ու վճռական», թելազրած էր: Յետոյ՝ աւելի՛ փորձառու տղջմէ՛ քանի մը հողիի ընկերակցութեամբ դացած էր որոշ առաքելութեան մը: Այն միւս տղաքն ալ քնաւ իրարմէ չէին տարբերեր: Հին «Լանտ-Ռո-վըր»ով մը անոնք կը կորսուէին մութին մէջ, քանի մը ժամ ետք վերադառնալու համար: Բայց նոյն այդ տղաքը, դաւազիւր գիշեր մը, պատերազմի դժնի օրերուն, չվերադարձան իրենց առաքելութենէն: Ոմանք, վիրաւորուած՝ տարուեցան հիւանդանոց, եւ անոնցմէ մէկը, ան՝ որ զիս արթնցուց, ժամը ճիշդ երեքին «մնկաւ պարտականութեան ճամբուն վրայ»: Այդպէս գրեցին մահազգին մէջ: Պատանքեցին դուռակալով, տարին քաղաքէն դուրս, խումբ մը զինեակներով՝ յանձնեցին հողին, առանց փամփուշտ մը արձակելու...

Այդպէս, իրմէ ետք «Միքոն», «Գոպոն», «Աուրծ Սագոն», եւ դեռ ինծի ծանօթ ու անծանօթ շատ անուններ, բոլորն ալ նոր ու քիչ մը լայն համազգեստի մէջ՝ «մնկան պարտականութեան ճամբուն վրայ»: Այդպէս գրեցին մահազգներուն մէջ, պատանքեցին դուռակալով, տարին քաղաքէն դուրս...

Ռումբերուն տարափը կը շարունակուէր: Ժամանակը կարծես կանգ առած ըլլար դէշ երազի մը կէսին, ու սառած ըլլար այդպէս: — Խոհանոցը բաց է, դնա՛ սուրճ մը առ, — ըսաւ հերթը ինծի փոխնիցող տղան, — կը կազդուրուիս:

Նոր իւղտուած զնդացիի կը ծանրանար աջ ձեռքիս: Զախ կողէս կախուած փամփուշտները զիս կը քաշէին վար, հաւասարակըշուութիւնս խախտելու ջանքով մը կարծես:

Հաւաքականութեան մը պատկանած ըլլալու դիտակցութիւնն է, որ կը շեշտուի մէջդ պատերազմի օրերուն:

Աղէտի օրերուն ճակատադրակից մը կ'ուզես կողքիդ, անպայմանօրէն:

Քեզի պէս խորհող, քեզի պէս հաւատացող, քեզի հետ ժամերը հաշուող: Եթէ մահ է՝ միասին մեռնելու, եթէ դոյաւելում է՝ զիրար խրախուսելով միասին շրջանցելու աղէտը: Ինչո՞ւն չէ, թե՛րեւս չերկարի մղձաւանջը եւ կարելի ըլլայ փրկել ամէն ինչ:

Քաղաքացիական անհեթեթ պատերազմը :

Պատկանելիութեան դիտակցութիւնը՝ անխուսափելի :

Գիտակցութիւն մը, որ իր անունը կը պոռայ լքուած ու ամայի փողոցներուն անկիւններէն : Քանդուած, հրկիզուած շուկաներէն, տուներէն, դպրոցներէն :

Զգացում մը, որ քեզ կը բաժնէ «միւսներէն», ու կը ստեղծէ մեմֆը, մերը :

Մինչև արեւածաղ այդպէս պիտի հսկէի :

Երթեւեկ չկար :

Մտակայ փողոցէն, կոուող կողմերէն մէկուն պատկանող զինեալները կ'անցնէին մերթ ընդ մերթ, դէպի ճակատ զինամթերք տանելու, կամ ճակատէն վերաւորներ հիւանդանոց փոխադրելու համար :

Այն տարբերութիւնները, որոնք խաղաղ օրերուն միայն բարքեր էին, կենցաղ էին, զիրար բարեւելու եւ իրարու որպիսութիւնը հարցնելու եղանակներ էին պարզապէս, հիմա, կրակի ու վառօդի անդոհանքին մէջ, ստացած էին վճռական նշանակութիւն : Այդ չնչին տարբերութիւններուն դումարը հիմա կը ներկայացնէր բաժանումի աւելի խոր, աւելի շեշտուած սահմանադիժ մը : Հիմա ատոնցմէ ամէն մէկը իր մէջ կը խտացնէր հաւաքականութեան մը ամբողջ հոդեւանութիւնը, բարոյականութիւնը, հաւատամքը :

Ժամանակի սլաքը մտածումով դէպի ետ կը տանէի պահ մը : Յիսուն տարի, վախտուն տարի առաջ, երբ մեր հայրերը կը հասնէին այս ափերը արիւնաքամ, յոգնաբեկ կարաւաններու վերջին վերապրողներով, իրենց հետ կը բերէին կեանքին ու մահուան հաւատարու իրենց ինքնուրոյն ոճը : Տառապելու, տառապանքը արհամարհելու իրենց ինքնատիպ փորձառութեամբը կու դային անոնք . եւ հիմա, կէս դար ետք, երբ տեղացին բարեւելու ըլլային տեղացիին իսկ լեզուով, երկրացիի հնչումն ու շեշտն էր, որ իր անխուսափելի դրոշմը կը ղնէր իրենց «բարի լոյսին» վրայ :

Հիմա, խորտակումէն հազիւ վերականգնած, վերստին խորտակումի երթալու ահազանգը կ'որոտար թնդանօթներուն խողովակներէն : Օտարութեան մէջ վերստին օտարանալու սպառնալիքը կը սուլէր կապարներուն հետ :

Ուրիշ ո՞ւր այս աղէտը :

Անհեթեթ պատերազմի մը պատճառով ամէն ինչ կորսնցնելու մղձաւանջը ինչո՞ւ այս օրերուն :

Թերեւս կարելի ըլլայ կանխել աղէտը, տիրապետել կացութեան, դոյտաեւել կրկին :

Թերեւս ամէն սերունդի համար անհրաժեշտ է նոյնիսկ նման զէպք մը : Թաղը, օճախը, խմբադրատունը, աղօթելու եւ պատարագելու, կառուցանելու եւ ստեղծադործելու ինքնուրոյն ոճը պաշտպանելու կարողութիւնը եւ պատրաստակամութիւնը փորձելու համար գուցէ : Մենքը, մերը ճանչնալու իսկ համար :

Առիթ մը՝ ջու ազգային ու հաւաքական արութիւնը փորձելու :

Ինչո՞ւ էջ, թերեւս այն՝ ինչ որ կարելի եղած չէր երկրի գա-
ւտներուն մէջ, աքսորի ճամբաներուն վրայ, զլիւրկոր ու յողնաբեկ
կարաւաններով, հիմա կարելի գառնայ մեր թաղամասերու մուտ-
քերուն:

Անհէթեթին մէջ՝ էականն ու սրբազանը չղոհարերելու համար:

Հանքաիւղի բարկ հոսը կը հասնէր ունդերուս:

Բոյրը ախորժելի թուեցաւ ինձի:

Գնդացիլը մօտեցուցի ջրթիւս ու լայն ներշնչեցի:

Միակ ախորժելի բանը այդ բուրբին մէջ:

Սուրճը լամեցի:

Ժամանակը շաա դանդաղ կ'ընթանար:

Երկինքը մութ էր:

Երբեմն միայն, ումբերու որոպին հեա համաչափ, ամպերը
կը փայլատակէին՝ երկնակամարը լուսաւորելով:

Աշնան առաջին անձրեան էր:

Վերը, սպունդէ ներքնակներու վրայ, տղաքը կը քնանային:

Անոնք վարժ էին քնանալու, մինչեւ իրենց հերթը գար: Աւելի հին
եւ փորձառու էին, եւ միշտ մրցակցութեան մէջ, աւելի արդիական
ու զորաւոր՝ զնդացիի շարիկելու համար:

Իմ քունս չէր ասներ:

Օրուան ընթացքին, քանի մը անգամ փորձեր էի հեռաձայնել
Ալինին: Գիծը խանդարուած ըլլալու էր: Պատասխանող չկար: Որ-
քան ծիծաղելի պիտի թուէի անոր, այդ խոշոր համազղեստին մէջ:
Բայց, անշուտ, ծիծաղելի ոչինչ կար: Այստեղ իր տարիքի եւ իրմէ
փոքր աղջիկներն ալ հազուած էին նոյն համազղեստէն, եւ ոմանք
նոյնիսկ ատրճանակ կը կրէին իրենց կողին: Բոլորն ալ վարժ էին՝
չատ մը տեսակի ղէնքեր դործածելու: Գուցէ նաեւ Ալինն ալ, այդ
պահուն, համազղեստի մէջ էր: Քաղաքի «միւս կողմն» էր իրենց բը-
նակարանը: Ումբակոծուած ծանր էր այդ ղիշեր: Թերեւս ալ, դետ-
նայարկի մը մէջ ապաստանած էր: Քանի՞ օր է ի վեր: Հաց դտա՞ծ
էր ուտելու: Մենք ունէինք բաւարար չափով: Որքան կ'ուզէի, որ ան
ողջ ըլլար եւ՝ ապահով վայրի մը մէջ, ունենար հաց: Որոշեցի առ-
տուն փնտռել զինք: Բայց առաւօտը կրնար բնաւ չլալ: Յաջորդ ղի-
նադուռն էր ամենակարեւորը: Յաջորդ ղինադուռին պէտք էր սպա-
սել: Բայց կրնար ղինադուռը բնաւ չլալ, ոչ ալ հեռաձայնը նորոգուիլ:

Աստու, մթնոլորտը աւելի խաղաղ էր: Արեւածաղէն առաջ
ցուրտ էր քիչ մը: Թանձր բաճկոնը բաւական լաւ կը տաքցնէր: Եր-
կինքը աւելի պայծառ էր: Քաղաքը դրեթէ իր ամբողջութեամբ կ'ե-
րեւէր: Տեղ-տեղ հրդեհներ կային: Ումբակոծուած դադրած էր, բայց
զնդացիներու համադարկը կը շարունակուէր:

Հերթս փոխուեցաւ: Ժամը վեց ըլլալու էր: Երեք ժամ տեսած
էր պահակութիւնս: Անքուն կը դգայի եւ յողնած: Տղոց մեծ մասը
դեռ կը քնանար: Փնտռեցի յարաբերաբար խաղաղ անկիւն մը եւ
սպունդէ ներքնակի մը վրայ ընկողմանեցայ:

Երբ արթնցայ՝ կէսօրուան մօտ էր: Սրահը աղմկոտ էր և ինձնորում: Գուրս Էլայ՝ դարձեալ հեռաձայնելու համար: Հեռաձայնը կը յամառէր լուս մնալ:

Հեռաձայնեցի Արփիկին: Պատասխանեց:

Այնքան ուրախ էի, որ ողջ էր Արփիկ և հիմա ինծի հետ կը խօսէր:

— Հեռաձայնով կարելի չէ խօսիլ, շուտ եկուր, անմիջապէս, — ըսաւ ան:

Արփիկենց բնական թաղը բազմատարար աւելի խաղաղ էր այդ օրերուն, թէև շատ բուռն կռիւներ տեղի ունեցեր էին հոն, թաղէ թաղ և տունէ տուն, բայց հիմա, ամիսներ ետք, բախումները սահմանափակուեր էին ճակատներուն վրայ, և ներքին թաղերը աւելի սպահով էին: Իրենց բնակարանը թէև չէր վնասուած, բայց շէնքը ստացած էր քանի մը հրթիռ և դրացի շէնքերէն ոմանք ամբողջութեամբ հրկիրուած էին:

Արփիկ կորսնցուցած էր իր կենսուրախ ժպիտը, մռայլած էր ու լրջացած:

— Կողոպտած են:

— Ինչպէս կը տեսնես: Երանի թէ միայն կողոպտէին, կտորած ու քանդած են ալ:

— Ալինէն լի՛նչ լուր ունիս, — հարցուցի անհամբեր:

— Ալի՞նը: Գործն ու տունը կորսնցնելէն ետք, շատ դէ՛չ կացութեան մատնուցաւ: Ծնողքը Միացեալ Նահանգներ մեկնեցան, ինք նախընտրեց Ֆրանսա երթալ: Սիրտակուած էր ուղղակի:

— Եւ մենք դեռ կը տոկանք: Իսկ դո՞ւն, վստահ եմ, թէ դուն կրնաս...

Արփիկ չպատասխանեց: Երբ նայեցայ իրեն, դուրսը շարժեց բացասական: Ես ալ այդպէս կը խորհէի, Ալինն ալ այդպէս հաւատացած էր...

Արփիկ ոտքի ելաւ: Աչքերը խոնացեր էին: Նայումքը ուղղեց պատահանէն դուրս: Պատահանին փեղկերէն մէկը կտորած ու կախուած էր ծխնիէն: Պատահանէն կ'երեւէր քովի անխացած շէնքը, հրթիռներու ձգած աստղաձև բացուածքները պատերուն վրայ:

— Շուտո՞վ...

— Այո, շատ շուտով, միայն երկու օր ետք:

— Կիպրո՞ս:

— Ոչ: Դամասկոսէն՝ ուղղակի...

*
**

Այդ իրիկուն, երբ ընթրիք մատակարարող Լրիտասարդուհիները ցրուեցան և պահակութեան հերթացանկը փակցուեցաւ ցուցափեղկին վրայ, ամէն ոք փութաց իմանալու իր հերթը: Իմ հերթս կանուխ էր: Իննէն մինչև կէս դիշեր: Առանձին էի: Միայն նոր լուրտուած դնդացիներ կար քովս, հանքախղի բարկ հոտով, և կողոպ

ի վար ծանրացող փամփշտակալը: Առաջին անգամ ըլլալով՝ ինքզինքս տարազիր ու զաղթական զգացի. մա՛նաւանդ միտակ: Ջերմով բռնուած քաղաքը կը հեւար, բաղմահազար գնդացիներու մահաշունչ կը սոսկայ: Մարդիկ հոն կը կռուէին խեղճի ու մոլեգին: Գուցէ ոնէին այդ բոլորը արդարացնող շարժառիթ եւ նպատակ, գուցէ ճիշդ հակառակն էր, աննպատակ եւ առանց խոհալի: Մակայն իրողութիւնը այն էր, որ անոնք կը կռուէին: Ժամանակը կը դանդաղէր ու կը պարպուէր ամէն իմաստէ: Մեր երկրի բոլոր տարազիր կռուները թառեր էին որտի՞ս վրայ, կը սեղմէին կուրծքս: Միջերկրականեան այդ փերուռն վրայ ոչ մէկ ատեն այդքան պանդուխտ ու օտար զգացեր էի ինքզինքս, լքուած ու առանձին: Առանձին էր նաեւ քաղաքը, իր տուայտանքին եւ հրդեհներուն մէջ: Բոլոր կըրուողներն ալ առանձին էին, աւաղէ պատնէշի մը ետին ապաստանած, կամ շէնքի մը տանիքը գիրք բռնած: Անոնք կը սպաննուէին այդպէս, մութ երկինքին գէմ, բերաննին լայն բացած, փստսանքի հարցականներու պէս:

Միայնակ մեռնիլը նոյնքան եղերական է, որքան միայնակ ապրիլը:

Այդ պահուն կը խորհէի հիւսիսի մասին: Ինձմէ երեք հարիւր հազար մեթր հեռաւորութեան վրայ գտնուող մեր գիւղին մասին:


Դեռ կեանքը խաղաղ էր Միջերկրականի արեւելեան փին գտնուող այդ բարձունքին վրայ: Մարդիկ կրնային լիաթոք խնդալ ու փաղաքշական հայհոյանքներ ուղղել իրարու: Եւ ամէն բանէ առաջ, անոնք գիտէին, թէ բռնութիւնը ոչ մէկ կերպով կը վարձատրէ: Ամբան երկարատեւ աշխատանքէն յոգնած, աւելի երկար կը ներշնչէին ծխախոտին ծուխը: Կը խօսէին որսի եւ նապաստակներու մասին, զոյգ ծնած այծի մը գովքը կ'ընէին, կամ կը փորձէին լուծել ամուլ մնացած կովու մը առեղծուածը:

Ոտքերս հաստատ դպած էին գետնին: Գնդացիներ ամուր բռնած էի ձեռքիս մէջ: Քիչ մը կորով ու քիչ մը վճռակամութիւն ունէի գեռ: Նոյնիսկ լաւատես կրնայի ըլլալ՝ խարուսիկ յոյսով մը: Բայց մարդիկ, բարեկամներ կը մեռնէին, կամ՝ կը մեկնէին: Եւ բոլոր մեռնողներուն եւ հեռացողներուն համար կռունիկ մը կ'աւելնար կուրծքիս տակ:

Տարազիր կռունիկ մը:

ԱՐԱ ԱՔԷԼԵԱՆ

(Շաբ 5 եւ վերջ)



Մնած է 1937ին, Լիբանանի Տատուս գիւղին մէջ Գրեյ սկսած է պատանի տարիքին, ստորգրելով պատմութեանը: Շուրջ քսան տարի է Վեր մաս կը կազմէ Հնանարք Հաստատութեան անձնակազմին եւ ներկայիս կը վարէ Հնանար արարական եւ միջազգային շարժաթերթին խմբարկարպետի պաշտօնը:

Արար եւ լիբանանցի երիտասարդ միջազգայնորէն ամէնէն ուշագրաս ներկայացուցիչներէն մէկը նկատուող Իլիաս Տէյրի Հրատարակած է եօթը Հատորներ, որոնց զլիսաւորներն են Հլաուքեան պատք, «Ճանապարհ դէպի Մարինաս եւ շիր մնաս միայնակ ու կը գոչաս» անուն վէպերը:

Վերջինը լոյս տեսած է նաև Փրանսերէն լեզուով, Հանրամատնօթ Վիպիմարք Հրատարակատունէն:

Ի Լ Ի Ա Ս Տ Ե Յ Ի Ւ Ե Բ Կ Ո Ւ Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ն Ե Ր Ո Ւ Մ Ի Ջ Ե Ւ

«Այս է հարցը: Պէտք է համոզուի: Անոնք իր երեսն ի վեր կը պոռան ու կը մեղադրեն զինք: Եւ ինք հարց կու տայ ինքն իրեն, քէ ինչ՞ն է դուքս չի գար այս մթին փայտալիւն: Կը համոզուի եւ չի համոզուիր: Հարիւր եւ հինգ օրերէ ի վեր, ան կը գտնուի երկուութեան վիճակին մէջ: Կը գտանցէ: Անձնատար կ'ըլլայ: Բայց դուքս չի գար մթին փայտալիւն»:

Աստիք են առաջին տողերը լիբանանցի երիտասարդ արձակագիր Իլիաս Տէյրիի «Սպաննուած ասպետը ոտքը կը դնէ Հողին» անուն վերջին հատորին, որուն գործողութեան հարիւր եւ հինգ օրերու ժամանակաշրջանը եթէ վերածնեմ հարիւր եւ հինգ տարիներու կամ հինգ դարերու, այն ատեն յստակ կը դառնայ ա՛յն ծիրը, որուն մէջ կը քաւալի վէպը, կամ՝ «գիակի ծրագրեր» Աուսա-Տէյրիի այս խոստովանութիւնը:

Տէյրիի վէպը կը շօշափէ պարզ միւթ մը: «Սպաննուած ասպետը ոտքը կը դնէ Հողին» հատորը մեզի կը ներկայացնէ քանի մը տղամարդոց եւ նոյնքան մը կիներու բարեկամական, ընկերային ու մարդկային կապերը՝ ահաւոր պատերազմի մը մեջիչ մթնոլորտին ներքեւ: Կարծես քէ անկա ըլլայ օրագրութիւնը պատերազմի մահափիւռ փոքորիկներէն խուճապահար մարդոց յոգեբուն, վայսերուն, պատրանքափութիւններուն, սիրոյ քայքայման, մահուան զգայնութեան ամէնօրեայ սպառնալիքներուն եւ այս բոլորը ապրող սարսափահար մարդուն մթին հագեցիմակներուն:

Առաջին իսկ վայրկեանէն, այս բոլորը կու գան ու կը խոսանան բոլոր տիպարները մարմնատարող գլխաւոր հերոսին, Աուստի Էութեան մէջ, եւ սպաննուած ասպետը կը սկսի քայլի ու ծաւալի վէպին էջերուն հետ, պայքարելով արտաքին ու ներքին զոյգ պատերազմներու դէմ: Այս է ամբողջ պատմութիւնը: Կայ անդադար տագնապող Աուստը, որ հակառակ մտաւորական մը ըլլալուն, չէ կրցած ձերբազատուիլ իր խոսնուածքին վրայ գիւղական մթնոլորտին դրոշմած անտաշ գիծերէն: Այսպէս եւ նաև քնարա-

կան հերոսին բարեկամները, ո՛ր պլ ծնած ըլլան անոնք: Յեղափոխական կուսակցութեան վր յուսահատած այս գաղափարապաշտները կը շարունակեն պայքարը, բայց աւելի նեղ դաշտի մը վրայ, իրենց հոգիին մէջ: Յերեկը կ'անցընեն «ոչ մէկ պատերազմ ունեցողներու տան մէջ» (սրեարան), գիշերը կը շտապխօսեն բաժակ մը ռիսքին իրենց ձեռքերուն՝ ընկզմած պանդակի հանգստաւէտ բազկաքողներուն վրայ, իսկ մինչեւ արշալոյս երկարող ձանձորայրի ժամերը կը սպառեն Սաֆիլէին կամ հարիւր տղամարդ իր անկողինը ընդունող ռետ «անպաշտօն պոռնիկ»ի հետ:

Այս է վէպին ամբողջ պատմութիւնը, որ կ'երկարի սրճարանէն պանդակ, պանդակէն գնտան, եւ պարզ ճամբարդի մը վերածուած հայրենիքէն մինչեւ օտար ափեր: Դիպաշարային նկարագրութեան աւելի՛ ներքին աշխարհներու անձկութեանց դառն հարցադրումներու ջրվէժ մը կը պայթի «Սպաննուած ասպետը ոտքը կը դնէ հողին» հատորի հողին վրայ:

Այսպէս, պարզ դէպք մը կ'արթնցնէ յուշեր, սպաննուած երազներու անաւարտ ու ներահայեաց ժապաւէն մը, որ մզձաւանջներու եւ մտահալածանք-հարցումներու աշխարհի մը վերածուելով՝ քիչ կը մնայ, որ իր անջըրպետացող տարողութեան մէջ լուծուող աննշան կէտի մը վերածէ դէպք-մեկնակէտը:

Ահա թէ ինչու, դժուար թէ վէպը կարենամք անջատել Աուստէն, որ յովհետեւ անցեալը, ներկայի տագնապները, ուրիշներուն պարտութիւններն ու մտալիկիչ ափսոսանք՝ իր արտաքին ու ներքին ազդակներուն ամէն մէկ մանրամասնութեամբ, սրմտունքն են հերոսին կեանքի ծառին: Եւ Աուստ կը դառնայ ընկալուչ ու բարձրախօսը «ոչ զիակներ»ու խոստովանութիւններուն, պարտութիւններուն, նիշերուն, անկումներուն կամ անգորութեան եղբերգներուն: Ան կ'ապրի այս ամբողջութիւնը եւ հազար ու մէկ բունահաւուր խայրուածքներէ ընդոստ՝ պատերազմ կը մղէ թէ՛ ներքին եւ թէ՛ արտաքին ճակատներու վրայ:

Ներքին ճակատի վրայ, սպաննուած ասպետը պատերազմ կը մղէ Աւստուոյ, սիրուիին, մօր, պոռնիկին եւ մահուան դէմ: Կեանքի բեմին վըրայ, ան ճակատ կը յարդարէ հայրենիքին, յեղափոխութեան եւ ընկերութեան դէմ:

Յետոյ, այս տարրերը ունին իրենց անունները: Երկինքը կրօնքն է, Աստուածը՝ վարկածներու բռնակալութիւնը, Լայան՝ քմայճու սէրը, մայրը՝ իր խառնուածքին մէջ արմատացած այլ բռնակալութիւն մը, պոռնիկը՝ ժամանակաւոր խաղաղութեան յարկանքը, հոգին՝ պայքարի կամ մահուան ահագանգը, հայրենիքը՝ ինք իր վրայ փուլ եկող նոր Բաբելոնը, այսինքն՝ Պէրուքը (թէ եւ ոչ մէկ տեղ կը յիշէ քաղաքին անունը), յեղափոխութիւնը՝ կուսակցութիւնն ու սէրը, իսկ ընկերութիւնը՝ բարեկամները, ծանօթները, հարիւրապետը, զինեալները, եւ այլն:

Այնուամենայնիւ, ասոնք իբրեւ թշնամիներ չեն ներկայանար Աուստին: Խորքին մէջ, այս գոյգ պատերազմները արտաքին թշնամիներ չունին, ընդհակառակն, ճշմարիտ թշնամիները, որոնց դէմ յանդիման կու գայ Աուստ՝ իր եսն է, մահուան եւ սիրոյ գոյգ բեւեռներով, յիշողութեան (անցեալ) եւ փրկութեան ի խնդիր ծաւալող տագնապներէն թափ ստացած բախումներով (ներկայ):

Աւելի՛ն. նպատակը սրբութիւն մըն է այս գաղափարապաշտ տիպարին համար: Նպատակին շուրջ վիճարանութիւն չի կրնար ծագիլ: Սրբութիւն է, որովհետեւ ան, Աուստ, ի սկզբանէ այսպէս դաստիարակուած է, իսկ սկիզբ-

քը ա՛յն բացարձակ ճշմարտութիւնն է, որուն շուրջ ո՛չ մէկ վիճաբանութիւն կ'ընդունի, ի՛նչ ալ ըլլայ արդիւնքը՝ միացում քէ բաժանում: Վերջապէս, Աուստի համագումարով՝ աշխարհը այն նաւն է, որ կ'ա՛մ կը հասնի իր փրկութեան ֆարափը եւ կ'ամ ալ ծովամտոյն կ'ըլլայ:

Այս է Աուստին տագնապը, փրկութեան ի խնդիր մղուող յարասու պայքար մը, որպէսզի ան ազատագրուի ե՛ւ սիրոյ, ե՛ւ մահուան, ե՛ւ մօր, ե՛ւ անուններու, ե՛ւ պատկանելիութեան, ե՛ւ յեղափոխութեան պատուհասներէն, որոնց դէմ անհաւասար մարտեր կը մղէ հարիւր եւ հինգ օրերէ կամ հարիւր եւ հինգ տարիներէ ի վեր:

Աղէտը սկիզբէն է, ծնունդին մէջն իսկ է եւ Աուստի պատերազմը այս աղէտ-մահը շրջանցելու ճիգն է, որովհետեւ ամէն բան փուլ եկաւ, եւ ֆայ-ֆայուելու սահմանուած են նոյնիսկ սէրը, ճայնիսկ հաւատքը, յաղթանակները:

Հետեւաբար, պատերազմին մէջ չկարեանալ մխրճուելու եւ անոր ձգտութեան դաշտուն չկարեանալ դուրս գալու տրամի մը կը վերածուի «Սպաննուած ասպետը ոտքը կը դնէ Հողին» հատորը, կամ, պարզ խօսքով՝ պատերազմը իր ամբողջութեամբ ներգրաւելու անգորութենէն եւ անոր անճանաչու առաջ կարեանալ ըլլալու կացութենէն զսպանակուած ստեղծագործական պատերազմի մը, որ կը մղուի գրառում-յարձակումներով՝ պատերազմը ջնջելու եւ անոր գերակայութենէն ամբողջովին ազատագրուելու ստեղծագործ հրամայականներէն թելադրուած:

Հաւանաբար, Աուստի պատերազմը կարենանք բացատրել նաեւ խաչի խորհրդանիշով, որուն կը դիմէ Իլիաս Տէյրի ամէնէն անյոյս պահերուն: Հակառակ անոր, որ արտաբնական բարեպաշտ մը չէ Աուստ, բայց իր մտածումներով եւ կեանքի օրինակով՝ ան կը պարզէ ջերմեռանդ հաւատացեալի մը ներքին աշխարհէն թելադրուած ըմբռնումները արտաբնացնող դիրքորոշումներ: Մնաց որ, այս «չար աղուն» ըմբռնումով՝ փրկութիւնը կը կայանայ միութեան մէջ, միաձուլումն է նոյնիմէն փրկութիւնը, իսկ մեղքը անոր առաջնորդող ճամբուն սեմն է: Եւ եթէ կրօնի մէջ փրկութիւնը կը կատարուի երկրորդ ծնունդով կամ գիտակից գոհաբերութեամբ, Աուստ այդ փրկութիւնը կը սեսնէ հոգեկան ու ֆիզիքական միութեան մէջ, որուն միակ խորհրդանիշը խաչն է, ուր իրարու մէջ կը ձուլուին կեանքի հորիզոնական եւ ուղղահայեաց հակադիր բեւեռները, իսկ հանդիպման կէտը կը դառնայ գոյութեան բալորակին կորիզը, ընթացքը պայմանաւորող կենսաբաշխ սիրտը:



Ինչպէս իր նախորդ վէպերուն մէջ, «Սպաննուած ասպետը ոտքը կը դնէ Հողին» հատորի էջերուն եւս Իլիաս Տէյրի յուսահատութեան դիմաց կը դնէ *սէր* բառը, որ կը ստանայ *գոյութիւն* հասկացողութեան տարողութիւնը: Առանց սիրոյ կեանքը անհեթեթ լուծ մըն է անոր ըմբռնումով եւ, այդ իսկ պատճառով, հոս սէրը կարելի չէ մասնատել: Ընդհակառակն, սէրը ամբողջութիւն մըն է, իր մանկութիւնն է, մայրն ու սիրուինն, որոնք ընդելուզուած են ի սկզբանէ: Մանկութիւնը, մայրը եւ սիրուինն գլխաւոր խորհրդանիշներն են անոր գրականութեան, որ միշտ այս մեկնակէտերէն ճամբայ կ'ելլէ եւ իր վախճանը կը գտնէ փրկութեան այս ֆարաիներուն մէջ:

Այս մղձաւանջային մթնոլորտին մէջ, արձակագիրը կը դիմէ «չար տղան» բացատրութեան: «Չար տղան» ապահով ապաստանարան մըն է, որովհետեւ Իլիաս Տէյրի չ'ուզեր բաժնուիլ իր մանկութեան, մանկութեան անառկութիւններէն, այլ խօսումը՝ քակարդ-կեանքի րոնակալ ժամանակը կանխած ազատութեան ժամանակէն:

Մանուկ սիրահար մը կը տագնապի «Սպաննուած ասպետը ոտքը կը դնէ հողին»ի էջերուն, սպաննուած ասպետ մը, որ լուռ համերկութեամբ կը սպասէ խաչէն վար առնուելու ակնթարթին: Եւ որովհետեւ «իւրաքանչիւրը իր դժոխքը ունի», Աուստ կը փորձէ անցնիլ դժոխքին միւս ափը, որուն տանող փրկութեան ապահով միակ կամուրջը իր սիրունիկն է, որ միայն մայր եւ ապաստանարան չէ, այլ նաեւ անխարդախ փրկիչը, նոյնիմօն դժոխքին միւս ափը:

Եւ եթէ Աուստ, հատորին վերջին էջերուն մէջ, վար կ'իջնէ ձիւն, այսինքն՝ կեանքի խաչէն, անոր համար, որ «ինչ-որ տեղ մը, մտրոյ մը ցատուճ դարձաւ եւ դահիճի սիրտը պատռեց՝ «չեկա՞ւ այս ասպետին ոտքը հողին դընելու ժամանակը» պողթկումով»: Աուստ լսեց այս խելակորոշող ազդակը, «եղջանկութիւնն ու հրացումը իրարու խառնուեցան, գուրգուրանքէն վճիտակ մը պայթեցաւ» եւ, «ահաւասիկ, ան կը ծնրադռէ շնորհակալութեամբ ու վերացումով... ո՛չ, կ'ըսէ, թէ մեռաւ եօթը անգամ ու յարութիւն առաւ շնորհիւ իր աղերսանքին»:

Վերջապէս, խաչեալը սուլմանաբերով անոր մահը ստուգելու ժամանակը նա'ն գերեզմանին քարը հրելու ժամանակն է, այսինքն՝ յարութիւն առնելու անխուսափելի պահը, որովհետեւ «կան մարդիկ, որ երբ կը ծնին, անոնց ընտանիքներէն կը պահանջուի գոհել իրենց երեխաները, իսկ Սատուած կը պահանջէ խաչել զանոնք, երբ մեծնան: Եւ մի՞թէ ինք այն տղան չէր, որուն մայրը իրմէ պահանջեց դառնալ սիրոյ ցաւին մատաղը, պահանջեց, որ ան մնայ խաչուած՝ առատօրէն միջնէ գիշեր, չճանչնալ հանգիստ, չճանչնալ անդորրութիւն եւ մնայ խաչուած խաչափայտին վրայ՝ առաւօտէն միջնէ գիշեր»:

Նոր վէպի գոյութեանապաշտ աշխարհահայեացքով, Իլիաս Տէյրի անցեալը, ներկան ու ապագան կը ձուլէ կեանքի փորձառութիւն-հայրցքին մէջ, որ վիպագիրին հերոսներուն համար ուրիշ բան չէ, եթէ ոչ յիշողութեան եւ տագնապներու խաւերէն մաքրագտուելով՝ փորձութիւն – մղձաւանջէն դուրս գալու ակնթարթը, բարդ ու անկաշկանդ ակնթարթ-արոշումին ժամանակը:

Այս պահը անկախ աշխարհ մը կառուցելու ազատութեան ժամն է ամեն րանէ առջ, ժամը ա՛յն ազատութեան, որ շատ հաւանաբար ընթանար պապարիւն կշռոյթով, եթէ վէպի ցանապարհին վրայ ցանուած չլլայիկն արտաքին ու ներքին ականքեր: Արտաքինին եւ ներքինին յարատեւ բախումներէն թափ մը ստանայ տրամը, որ կը վերածուի ներաշխարհային ու կարագրական զոյգ ժամանակներու: Տեղ-տեղ, եթէ այս երկու ժամանակները երբեմն իրարմէ կ'անջատուին, կ'որդեգրեն նոյնիսկ հակադիր շարժումներ, ասիկա անոր համար, որ այս դիրքորոշումները իրարու բախող բեւեռներուն միջեւ մղուող պատերազմին, «անհաշտ տնորմութեան» վայրկեաններն են, առաւել ուժով իրարու փարելու նպատակով կատարուած գիտակից հեռացման հաշտեցումները:

Իլիաս Տէյրի ծանօթ է կառուցողական արուեստի գաղտնիքներուն եւ «Սպաննուած ասպետը ոտքը կը դնէ հողին» հատորը մեզի կը ներկայացնէ

յիռողութեան, ներկայի եւ անկատար տենչերու պայծառ քելերով բանուած բարդ, կենսունակ ու ներգրաւող կառայց մը :

Ինչպէս ըսինք, պարզ դէպք մը կ'արթնցնէ յուշեր, յուշերը աւելի կ'արագացնեն մղձաւանջներու, դառն հարցումներու խոյանքը եւ մենք կը սկըսինք հաղորդակցիլ վէպի կեդրոնական հերոսի ներքին աշխարհին բոլոր ժամանակներուն հետ : Օրինակ, Սարկոնի առաւօտուն վիրաւորաւիր Առատը կ'արձակէ յիռողութեան հեռու հորիզոններ . ան կը յիշէ ա'յն առաւօտը, որուն ընթացքին իր հայրը հրաժեշտ տուաւ կեանքին : Այդ իսկ պատճառով՝ *«Մահը միշտ կու գայ առաւօտուն»* զգայնութեան օղակները անդադար կը ծաւալին՝ հերոսը վերածելով բազմահանգոյց տագնապի մը :

Տագնապ մըն է հերոսը իլիաս Տէյրի արձակագիրին համար, երգներու, յուսաբեկումներու, ձգտումներու եւ փայփայումներու բազմբանց Բարեւոն մը, որ կը ջնջէ խրամատներու ետին սասկեացող պատերազմը՝ Առատի ներաշխարհը խոշտանգող պատերազմները ստեղծագործութեան անխախտ վէմերուն վրայ բարձրացնելու յստակ առաջարկումով :

Եւ այս ճամբուն վրայ, Տէյրի գործի կը լծէ բոլոր ազգակները, խորհրդանիշներ, մեմախօսութիւն, գառանցանք եւ, մա'նաւանդ՝ լեզուն, որ հոս արտայայտութեան միջոց մը չէ միայն, այլ՝ յարաբերութիւնները մերկացնող, ստուեցնող, տաք ու բարախուն զգայնութիւնները քեւաւորող ներքին կրակը, նո'յնիմֆն արտայայտութիւնը, հակառակ անոր, որ *«պատերազմը քանզեց բառերը»* նաեւ :

Հոգեբանական ու ռեալիստ բարեմասնութիւններով հարուստ լեզու մըն է իլիաս Տէյրիի արձակը, բանաստեղծական քելադրականութեամբ, մանկութեան ըմբոստ նկարագիրով, տագնապներուն տաքութեամբ, խորհրդանիշներուն գրաւչութեամբ եւ ամբողջական ճշմարտութեան ու փրկութեան ի խնդիր քրքրացող գաղափարապաշտ գրագէտի ջիղերուն կենդանութեամբ քեւաւորուած ընթացք մը :

«Լեռանանան վկայգրութեան բանաստեղծը» հուշակուած իլիաս Տէյրիի վերջին գործը պատերազմ մըն է այս մակարդակին վրայ՝ իրենց ներքին ժամանակները ստեղծել փորձող ասպետներուն պայփարները լրտեսելու համար : Եւ, ինչպէս միշտ, իլիաս Տէյրի *«կը մնայ միայնակ»* . . . բայց չի զղջար, կ'արձանագրէ *«աղտոտ պատերազմ»*ին զոհերուն ներաշխարհային շարժերը եւ, առանց սակարկութեան՝ քեւերը լայն կը բանայ ամէն տեսակի վնասներու դիմաց :

Որովհետեւ՝

«Անոնք, որ կը պարտուին, անոնց կը մնայ միայն ձորերու մէջ տնջացող յանդուզն զգայնութիւններ» :



Ի. Տ Է Յ Ր Ի

ՍՊԱՆՆՈՒԱԾ ԱՍՊԵՏԸ ՈՅՔԸ ԿԸ ԴՆԵ ՀՈՂԻՆ

«Այս է խոստումին ակնթարթը... : Խոստացայ քեզի եւ յարգեցի ուխտս , պիտի ըսէր Լայային : Ահաւասիկ ես կու դամ Հոռոմի աւերակներուն տակէն , որպէսզի յորդիմ չաստուածուհիներու չաստուածուհիին մեհեանին շուրջ , հնչեցնեմ զանգակները , շողշողուն գեղեցկութիւնը վերադարձնեմ արարչազորութեան ու աղքատներուն եւ օտարականներուն համար գրեմ սիրոյ ու երջանկութեան քերթուածներ» : Սակայն ուռած կտպերով զինեալը արշալոյսը կը դնէ իր գորշագոյն բաճկոնին գրպանը , յետոյ՝ կը յորանջէ եւ իր թոքերէն կ'արձակէ գարշահոտ շունչը , որ Առւատի դէմքին կը տարածուի գէյգէֆուսի բոյրին պէս . յետոյ , «Ժիթան»ի տուփէն սիկարէթ մը հանելով՝ կը դնէ շրթունքին ծայրը . յետոյ , կը քննէ գնդացիբը՝ ստուգելով պահուստին ու ըլթակը , ապա , բարձրաձայն կ'արտասանէ ամբաստանագիրը . «Դուն վտանգաւոր մարդ մըն ես : Մեր տեղեկութիւնները կ'ըսեն , որ դուն կուսակցական ես , եւ թղթածրարդ՝ հարուստ : Այս հեռագիրը գաղտնիք մը կը բովանդակէ : Կարտինիան որոշ բան մը կը խորհրդանշէ , անպայման պէտք է խոստովանիս , պիտի խոստովանիս ճշմարտութիւնը . կա՛մ կը խոստովանիս , կամ ալ կը սպաննենք քեզ» :

«Պիտի սպաննուիմ», ըսաւ ինքն իրեն :

«Պիտի տեսնես», կ'ըսէր Քամալ իրեն :

Զինեալը կը շարունակէր գննել զընդացիբը , մինչ հարցաքննութիւնը արձանագրող ուրուականը կը պատրաստուէր արտասանելու իր վերջին խօսքը . «Կարտինիայի ծաղիկը տխուր է եւ դժբախտ : Հեռաւորութիւնը յոգնասպառ ըրաւ սիրուհին եւ ան թօշնեցաւ : Կու գաս իրեն

եւ կամ ալ կարօտը կը սպաննէ զայն : Եկո՛ւր իրեն : Եկո՛ւր ինծի : Կը սիրեմ քեզ : Լայայ» :

— Այս ծածկագիր հեռագիրին իւրաքանչիւր բառը գաղտնիք մը կը պարունակէ : Ասիկա խորհրդանշաններ բովանդակող հեռագիր մըն է , որ քեզ կ'առաջնորդէ որոշ կէտի մը : Դէպի ո՛ւր , որո՞ւ հետ պիտի տեսակցիս : Նախընտրելի է , որ լաւութեամբ խոստովանիս եւ բարեկամներ դառնանք . մի՛ ըսեր , որ անմեղ ես : Դուն վտանգաւոր առաքելութեան մը կոչուած ես : Հերքել մի՛ փորձեր : Ամէն բան զիտենք քու մասիդ . գիտենք , որ մեր հակառակորդներէն ես եւ աւելի քան քաջ զիտենք , որ ծայրայեղական մըն ես :

Կապուտցած վէրքերով եւ մտրակի հետքերով ծածկուած իր մարմինին կէսը Առւատ կը շարտէ ջարդուհիւրը աթոռին վրայ : Կ'ունկնդրէ եւ չ'ունկնդրեր : Բընուութեան ճամբորդութեան մէկ ուրիշ կայանն է ասիկա : Թերեւս ա՛յս ըլլայ իր վերջին կայանը :

— Ես անմեղ եմ , անմեղ՝ թափուած արիւնէն , անմեղ՝ գործադրուած ոճիրներէն , անմեղ՝ ամէն բանէ , ես ո՛չ մէկ կապ ունիմ այս բոլորին հետ եւ սիրուհիս քով կ'երթայի , — կ'ըսէ զինեալին :

Կը հերքէ եւ կ'ընդդրմանայ : Եւ ամէն անգամ , երբ ան մարմինը կը շարժէ՝ հանդէպ ջաւերու լիճ մը ալեկոծիլ կը սկսի :

Կը փորձէ համոզել , որ հեռագիրը Լայայէն է , թէ՛ Լայան իր սիրուհին է , եւ թէ՛ ան երկար ժամանակէ ի վեր կը սպասէ իրեն եւ քիչ կը մնար , որ յուսահատութենէն մահանար՝ իր ժամանումէն առաջ . «Մա՛րդ , ի՛նչ առաքելութիւն եւ ի՛նչ խորհրդանիշ . Սարկունը չե՞ս զիտեր , Քամալին մասին լսած չե՞ս , ուսանողներ

բու յեղափոխութեան մասին չէ՞ս կարգացած եւ օրաթերթերու մէջ երբե՞ք չես տեսած նկարս՝ ուսանողներու ուսերուն վրայ, ուսմարտն Անիրալին պէս, երբ քաղաքը կը նուսճէի եւ կը յայտարարէի ստալին հաղորդագրութիւնը: Մա՛րդ, ես հրաժարած մըն եմ, վախկոտ, պարտուած եւ հիմա կ'երթամ սիրուհիիս քով: Ինչպէ՞ս համոզեմ քեզ, ինչպէ՞ս հաւաքեմ վիաներն ու փաստերը, ինչպէ՞ս պատմեմ քեզի, թէ ուրիշ բերած եմ այս ափ մը թղթոսկիները, որոնք հիմա զիմացել կը կուտակես եւ կը դիտես ճիշդ այնպէս, կարծես թէ Գարունի ոսկիներն են. ես ինչպէս հասնիմ հո՛ն, երբ դուն ինձի կ'ըսես, թէ սէրը արտադին երևոյթ է, յետադիմութիւն է, թէ՛ մարդիկ հարիւրներով կը մեռնին, եւ Լայան, օղակայանի բակին մէջ կեցած՝ ձեռքով նշան կ'ընէ արեւըլէն եկող իւրաքանչիւր օդանաւի:

Զինեալը խոստումի ակնթարթը կը վերածէ անդենականի բոլորէի: Հարցը տարերեւ է հոս: Խնայը շուտ հասունցաւ: Ոչ անցկուսեմ ճանչցուած է եւ ոչ ալ ներկան սեղ ունի: Տարիքը հասունցաւ եւ տղան այլեւս տղայ չէ: Անկէ կը պահանջուի լեցնել սպիտակ էջը՝ իր վտանգաւոր առաքելութեան շուրջ ուղղուած հարցումներուն պատասխանելով:

Ան իր հայեացքը կ'ուղղէ դինեային, ճիշդ այնպէս, կարծես թէ զիմացիներն կ'ըսէ. «Ձե՞ս յսեր, չէ՞ս տեսներ ա՛յն՝ ինչ որ դոյութիւն ունի աշքերուն եւ սիրտին մէջ»:

Լայան ըսած էր իրեն. «Մի՛ մեծնար, կը մնաս գանդրահեր պատանին, տաքարին, ծարաւի, բաց կուրծք ու վայրենի»:

Իսկ դինեալը կը հրահանդէ մեծնալ ութսուն տարեով, ութսուն կեանքով, ութսուն դարով: Զինք կը խէ Ըմ Առատի զիրիկէն, կը խէ Լայանի կուրծքէն, կը խէ մանկութեան յիշատակներէն, կը խէ իր մէջ թափ ստացող անհեթեթի վաղքին քառասուն տարիներէն, եւ կը խէ ծոմապահութեան ու աղօթքի քառասուն օրերէն:

Լայան ըսաւ իրեն. «Մի՛ հասուննար: Կը մնաս այսպէս, խե՛նթ, աւելի եւ աւելի թափանցելով զստանցանքին եւ զիշերային տխրութիւններու ոլորտներուն մէջ: Կը սիրեմ քեզ ստապանքով ու զժուարտութեամբ՝ չհերկուած եւ անկարելի դաշտի մը պէս. կը սիրեմ քեզ թեւարեկ, պարտուած, կը սիրեմ քեզ հրակայ, յամառ, ճառագայթող պահերուդ. հրապարակին կեղրոնը աշտարակացած կերպարը կը սիրեմ: Մի՛ հասուննար»:

Եւ զինեալը կը հրահանդէ հասուննալ, ամբողջանալ, եւ ան կը պատասխանէ հարցումներուն, կը ստորագրէ հարցաքննութեան թուղթը ու կը վերագառնայ գնտան: Հարցը տարերեւ է հոս, ուր չկան ո՛չ Սուպչին, ո՛չ Նաուսար եւ ոչ ալ Սաֆիէն: Հոս դոյութիւն ունի զինեալ մը, որ չի ժպտիր, սէրը չի ճանչնար, քիւի մը տակ կախուած թռչուններով չի հետաքրքրուիր, եւ իրեն համար ոչինչ կը նշանակեն իր սիրուհիին մեկնող քառասնամեայ պատանիին երթն ու կարտինիայի ծաղիկը, որ կարօտայար է եւ մտրակը՝ երկաթեայ, եւ ամբաստանադիրը ի յառաջագունէ լրացուցած է մահովճիտին պայմանները:

Կ'ընտրէ հակառակ ուղղութիւնը: Դուրս կու գայ հարցաքննութեան նիւթէն եւ կը փորձէ յառաջանալ մտերմութեան նեղ ճեղքէ մը. թերեւս յաջողին բարեկամութիւն մը հաստատել զինեային հետ, որ բանաստղագիտութիւն ալ կը կարդայ, ինչպէս ըսաւ իրեն:

— Մա՛րդ, օղնութիւն, — կ'աղաղակէ Առատ յուսահատութեան անդունդէն:

Մարդը կը յօրանջէ՝ նեղութեան ու զժուհուսութեան նշաններ ցոյց տալով, անտարերեւ Առատի զլիտուն մէջ յորդող մտածումներուն հանդէպ:

— Մա՛րդ, — Առատ կը փորձէ, որ ան ունկնդրէ զինք, հասկնայ եւ պահ մը ըլլայ արդար, — բնա՛ւ սէր չես ճանչցած, կեանքիդ մէջ կ'ին մը չէ՞ս ունեցած, որուն համար աշխարհը տակնուվրայ կ'ընես, անկարելին կ'իրականացընես, պատերազմ կը յայտարարես, պա-

տերազմը կը դադարեցնես, եւ անոր սիրոյն կը կտորես ծովեր, անտառներ ու անապատներ :

— Մա՛րդ... .

Մարդը կը յօրանջէ, սիկարէթի կըճասը կը նետէ դետին եւ կը դժգոհի «Ժիթան-Փիթը»ի չդոյութեանէն . «Այս է վատ ժամանակը» :

Առևատ կը կարօտնայ ծխախոտին : Զտարիւններն ու ջղախիւնները շատոնց պարտուեցան եւ Արբաճմի դարերը ահաւասիկ կ'անհետին ասպետութեան եւ անյիշահարութեան սերունդներուն ետին : Անոնք սերունդներն են «Ժիթան»ի, դորձադոյն համազգեստներու, խառնափնթոր մօրուքի եւ քիւրու տակ կախուած սարսափահար թռչուններու :

Բայց զինեալը կը հրահանգէ արգելափակեալը փոխադրել զնոսն : Գարշահոտ նկուղը նեխած եւ խոնա աւերակ մըն է, ուր կ'աճին մթեղներ ու միջատներ, ճեղքերէն դուրս սպրդող ջուրը կը հաւաքուի սալաքարին վրայ, խիկ մութ անկիւնները կը խճողուին ստեւանդեալներ, զորս զինեալը արգելափակեալներ կը կոչէ : Անկիւններուն մէջ արձանացած են դիակներ, որոնցմէ հառաջանքներ ու ձայներ կը բարձրանան : Անկիւններուն մէջ մտրակը կը փայլի հրեղէն ասուպի պէս : Ամէն անգամ, երբ հարցաքննութիւնը կ'աւարտի եւ կը մօտենայ զընտան վերադարձի պահը, Առևատի ողջ էութիւնը կ'ողողէ սեւ զգայնութիւն մը : Այն ատեն, ան չի տատամսի՝ իր կեցութիւնը եւ հարցաքննութիւնը երկարող պատճառներ յօրինելու : Հակառակ երկարատեւ յօրանջումին եւ զնդագիրի փողին ու երկաթեայ մտրակին ուղղութեամբ կատարուած մատնանշումներուն, հարցաքննութեան ներկայանալը Առևատի համար կ'ըլլար հանդիստի պահին նմանող բան մը, որ իր հողիին կը վերադարձնէր ինքնապատահութեան եւ ապահովութեան զգացումը : Նկուղին մէջ, արտաքին ու ներքին ըլլոր երեւոյթները կը վերածուէին միջձաւանջներու, ուրուականներու, դիակներու եւ հիւթերիք պոռչտուքներու : Այն ատեն, ահաւոր սարսափ մը կը

թափանցէր անոր ջիղերէն ներս, եւ ան կը կորսուէր մահուան նկատմամբ ունեցած իր վախին եւ խենթանալու մտահալածանքէն առաջացող սարսափին միջեւ : Ան ո՛չ կ'ուզէր մեռնիլ եւ ո՛չ ալ խենթանալ : Ամենայն նախանձախնդրութեամբ կը փորձէր տէր կանգնիլ իր հաւասարակը շուրթեան՝ առաւելադոյնս իմաստաւորելով իր կամքն ու գիտակցութիւնը :

Եւ ամէն անգամ, որ զնտան կը վերադառնար, անկիւնէն արձակուած ձայն մը կը զիմաւորէր զինք . «Լսեցի՞ր ինչ պատահեցաւ : Այցելու, ի՞նչը քեզ հոս բերաւ : Զեր շրջանի մեռելներէն ի՞նչ լուր» :

Առևատ հարցումը չլսել կը ձեւացրէր, մարմինը կը կուտակէր դրան մօտ եւ շունչը կը բանտարկէր թոքերուն մէջ : Տակաւին կրնար դուրս մնալ անկիւններու միջձաւանջներէն : Զէր շարուեր արգելափակեալներուն հետ : Խենթի մը չէր վերածուեր :

Սակայն վախին ոտնաձայնը աստիճանաբար կը մաղցէր, կը մաղցէր : Այս ի՞նչ վախ է, հարց կու տար ինքն իրեն, ուրիկ՞ կու գայ, եւ այն ալ՝ այսպիսի ի՞նչ անշնչելի թանձրութեամբ :

Զայնը կը յամուէր հարցումին վերայ . «Լսեցի՞ր ինչ պատահեցաւ, հայրենիքը փախաւ : Բարձրացաւ հսկայ նաւ մը եւ մեկնեցաւ : Հայրենիքը դաղթեց : Պէտք է հասնինք ետեւէն, ձերակալենք ու ետ բերենք : Լսեցի՞ր...» :

Առևատ կը բանտարկէ շունչը, եղունգները կրծել կը սկսի, կուրծքին տակ կը քողարկէ հեւքը : «Ա՛լ յողմեցայ եւ հօգիտ կարօտցաւ մահուան : Ո՞րք է Մուլահին, որ զիս կ'առնէր իր ստոն ժպիտին մէջ : Իւրաքանչիւրը առանձին է : Այս է շլմեցուցիչ եզրակացութիւնը» :

Յիշեց Մայինը . «Սպաննեցէ՛ք զիս, սպաննեցէ՛ք զիս, զիս սպաննեցէ՛ք...» :

Զայնը զինք կը վերադարձնէր մըզձաւանջներուն, մըզձաւանջներու մթին անկիւններուն, ուր չորս տղամարդ կը կապանքուէին իրենց ոտքերէն, ճիշդ ա՛յնպէս՝ ինչպէս կովը իր մտուրին . «Պիտի չճգենք, որ փախչի, պիտի հետապնդենք

եւ ձերբակալելէ ետք, պիտի բերենք Հրապարակ, ուր պիտի դատուի գերադոյն դաւաճանութեան յանցանքով»:

— Ո՞վ է դաւաճանը, — Հարց կու տայ Առևտար:

— Հայրենիքը... Հայրենիքը, որ խոյս տուաւ եւ մեզ ձղեց հոս, առանձին, — ի՞նչ պատասխանէ ձայնը քրքջալով:

Ձայնը կ'արձագանդեն քրքիջին:

Եւ ձայները կը ծառանան. «Պիտի չթողարտենք զեզի կրկնել նոյն սխալը: Նոյնինքն ան պիտի չարտօնէ, որ փրկես զինք: Ան որոշեց հրաժարիլ ու փախուստ տալ: Հայրենիքը պահանջուած է արդարութեան կողմէ, հայրենիքը խաչուած է, պէտք է սուինահար ընենք անոր կողը, որպէսզի վստահ ըլլանք, որ վերջնականայտ ա'լ մեռած է ան»:

Յետոյ քրքիջը կանգ կ'առնէ եւ ձայները կը լռեն: Ներս կը մտնեն զինեալներ եւ կը սկսի «մշակելու» գործողութիւնը, կը սկսի չարչարանքը, եւ՝ քրքիջով ու հեկեկանքով խառնուած պողտուրը:

Այսպէս՝ ամէն օր:

Այսպէս՝ ամէն անգամ, երբ նկուղին դուրս կը բացուի եւ կը փակուի:

Յետոյ կը սկսի անձիլ սրտաճմլումը եւ նոյն յամառ հարցումը.

— Ո՞վ ես դուն, ի՞նչը քեզ հոս բերաւ: Քեզ մեր մէջ սարդեղուցին, որպէսզի մե՞զ լրտեսես: Ինչո՞ւ չես մօտենար մեզի, ինչու համար մեզի պէս քեզ ալ չեն շղթայած:

— Ես քեզի պէս մարդ մըն եմ եւ ճակատագիրն է, որ զիս հոս առաջնորդեց, — կը պատասխանէ Առևտար:

— Ես մարդ չե՛մ, իսկ դուն իմ նըման չես: Ես պարզապէս դիակ մըն եմ: Ձե՞ս հաւատար: Մօտեցիր, դիտէ եւ այն ատեն պիտի տեսնես, որ ես յաւիանութեան սահմաններէն խօսող մեռած մարդ մըն եմ:

«Ես ալ նոյն ճակատագիրին սահմանուած դիակի ծրագիր մըն եմ», կ'ըսէ Առևտար ինքն իրեն, զգաստացնելով, թէ պէտք է չարունակէ տոկալ, տոկալ եւ փուլ չլալ: Ձնտանը ձգելն ու Հայային երթալու կարօտը այլեւս զինք չեն հետաքրքրեր: Ձինք հետաքրքրող միակ բա-

նը չխենթանալն է: Ձինք տաղանպեցնող միակ կարօտը՝ հրապարակը, ուր կան անբեւ եւ օգ:

Դիակը չգողրեցաւ Առևտար գարպասելէ. «Տեսայ Հայրենիքը, որ հսկայ նաւ մը կը բարձրանար: Հեռուէն, ձեռքով նշան ըրի, կանչեցի, պողտացի՝ աղաչելով, որ սպասէ ինձի: Բայց չսպասեց: Վախցայ իր հաշուին: Որոշեցի ընթանալ իր հետքերէն: Մոլորեցայ ծովուն խորերը, յետոյ՝ ինքզինքս գտայ այս նկուղին մէջ, այս անկիւնին կապուած: Հոս կ'ուտենք, կը խմենք, կը միզենք, կը քնանանք: Լոյսը այլեւս անհրաժեշտ չէ: Խաւարին մէջ մտրակը չենք տեսներ, այլ կը զգանք, միայն կը զգանք եւ բանտապահին կօշիկն ու հացը իրարմէ չենք կրնար զանազանել:

Առևտար հարցուց.

— Ի՞նչ գործէիր, որ անոնք քեզի պիտի թողարտէին Հայրենիքը հրապարակ բերել:

Դիակը պատասխանեց.

— Նուազագոյն պարագային՝ իրեն հետ ծովամոյն պիտի ըլլայի: Երանի՜ խեղդուէի: Բայց դուն գիտե՞ս, թէ ո՞վ հոս բերաւ զիս: Ես չեմ գիտեր: Մակոյկի մը մէջն էի, ծովը այնկո՞ծ էր, կինս իր գիրկին մէջ պինդ սեղմած էր մեր փոքրիկը. դուն չես կրնար ճանչնալ դուրս գուրանքը... աղջնակ մը՝ երկու տարեկան, մեր մանչը կը խայտար գիրկիս մէջ, իսկ մենք բռնած էինք ոչ հեռաւոր կղզի մը տանող ճամբան: Բայց ծովը փոթորկոտ էր: Ո՛չ մէկ հետք՝ Հայրենիքէն: Յանկարծօրէն կորսուեցաւ իմ աչքերուս առջեւէն: Փախաւ: Պահուեցաւ, որպէսզի երեւի այլ շոգեհուտ մը: Գիշերուան ջողը ծածկեց բարձրադիր արեւը եւ եղաւ խաւար: Բացի աչքերս եւ ինքզինքս գտայ այս մուժ անկիւնին մէջ: Հարցուցի կնոջս եւ զաւակներուս մասին, ակոսաներս թռան իրենց տեղերէն եւ աջ ձեռքս անշարժութեան դատապարտուեցաւ: Ծովը դեռ այնկե՞ս է: Ձեմ գիտեր: Իմ մակոյկս, կինս, աղջիկս՝ Հանանը, եւ մանչս, մա՛նչս, որ կը թրվաւր դերկիս մէջ:

Առևտար կը խնդրէ վերջ տալ: Կ'ելլէ,

կ'երթայ զրան ուղղութեամբ եւ երկու ձեռքերով կը սկսի ծեծել դուռը, կը կանչէ պահակը, որ հարցաքննութեան տանի զինքը. «Հարիւրապետին գրասենեակը տար զիս, ըսելիքներ ունիմ: Ահաւոր բան մը կայ, որ պէտք է յայտնեմ իրեն: Պիտի խոստովանիմ, տար զիս: Դուքս հանէ զիս այս նկուղէն, պիտի խոստովանիմ: Ըսէ հարիւրապետին, թէ Աուատը շատ վտանգաւոր մարդ է, թէ՛ Աուատին խոստովանութիւնը պիտի յեղաշրջէ ե՛ւ պատերազմին, ե՛ւ պատմութեան, ե՛ւ աշխարհագրութեան պատկերը: Պիտի խոստովանի՛մ»:

Հարիւրապետը այն զինեակն է, որ անդադար կը տրտնջայ, ոտքը կը դնէ սեղանին, կօշիկները՝ Աուատի դէմքին դիմաց եւ որուն ձայնը կը պոսպոյայ փակ փեղկերով սենեակին մէջ, ուր առաստաղէն լոյս մը կ'օրորուի:

Հարիւրապետը կը թքնէ գետին, մինչ Աուատ կ'աղաչէ.

— Փորձէ բարեկամս ըլլալ, քանի մը վայրկեան միայն, լաւ լսէ զիս, ուշի ուշով հետեւէ ըսելիքներուս. գնդացիբիդ կամփնջտնները կա՛մ կը պարպես քանկիս մէջ, կամ ալ զիս ազատ կ'արձակես, վերջ կու տաս գերութեանն, եւ կը ձրգես, որ ես հասնիմ սիրուհիս: Երբորդ օրն ըլլալով՝ ես ճշմարտութիւնը կ'ըսեմ, առանց թարթիչներս վայրկեան մը փակելու, առանց պատառ մը հացի, առանց կաթիլ մը ջուրի, առանց նոյնիսկ սիկարէթի մը:

Զինեալը ոտքերը վար առաւ սեղանին վրայէն:

Առաւ թուղթ մը,

Առաւ սիկարէթ մը,

Առաւ համաշ լուսանկար մը թուղթերուն մէջէն,

Առաւ զրիչ մը եւ Աուատին ըսաւ.

«Առաքելութեանդ մասին ամէն մանրամասնութիւն զրէ հոս, ամէն բան, որ գլխուս նոր ներածուած գէնքերուն, զինամթերքի ապսպրանքներուն եւ վարձկան կուռողներուն մասին»:

Աուատ գրեց ամէն բան: Առաջին ծնունդէն մինչեւ առաջին մահը եւ մինչ-

չեւ յարութիւն: Անցաւ երկնամերձ գիւղէն, կզմխտրածածկ քարաշէն տունէն, կուսակցութենէն եւ ուսանողութեան ու պատերազմի օրերէն: Կանք առաւ Քամալին, Սարիսին, ցորեսագոյն վարսերով կնկան պատկերին եւ Սաֆիէին զիմաց. կանգ առաւ ա՛յն իրողութեան առջեւ, թէ ինչպէ՛ս ափ մը մարդիկ ի մի խմրուեցան՝ ապահովելու համար ափ մը թըզթոսկիներ, որոնց շնորհիւ բռնեց Լայպսին տանող ճամբան:

Զինեալը խորատուզուած է չորս ծայրերը մաշած լուսանկարի խոր ալքերուն եւ մեծ վերացումով կը դիտէ իր արտայայտիչ գիծերը կորսնցուցած այդ ազոտած դիմանկարը:

Եւ այնպէ՛ս՝ ինչպէս անձ մը կ'ուղէ յայտնագործել ա՛յն բառը, որ կը լուծէ անհասարակչիտ զրոյցի մը վրայ կուտակուած ժանդը, կը լուծէ ժանդը անմեղ ամբաստանեալի մը եւ յանցանքները մանրագին քննութեան ենթարկելու ժամանակ չունեցող հարցաքննիչին երկախօսութեան վրայէն, զոհին ու դահիճին միջեւ փոխանակուած նախադատութիւնները կը մաքրագոյն ծանրաբեռնող ժանդերէն, Աուատ հարց տուաւ.

— Իսկ սիրուհի՞դ...: Կարօտահար եւ գուրգուրանքով յորդուն դէմքդ այդ մէկը կ'ըսէ ինձի:

Զինեալը հայեացքը չբարձրացուց լուսանկարին վրայէն եւ շրթներուն ծայրովը սլառասխանեց. «Վաղը, հարցը դարձեալ կը քննենք: Թուղթերը հոս ձրգէ: Վաղը առտու»:

— Սակայն ինձի կը թուի, թէ դուն մարդ արարածը զնտան զրկող եւ անոր սրտակեղեք աղաղակները ունկնդրելով՝ հաճոյացող զինեալ մը չես: Այս պահուս, ես քու մէջը յայտնագործեցի ազնիւ տըղամարդ մը, — ըսելով՝ Աուատ կառչած մնաց ջարդուփշուր արթոնին:

— Նեղութիւն մի՛ պատճառեր ինձի, — սաստից զինեալը:

Եւ ան նեղութիւն չպատճառեց:

Հաւաքեց իր մարմինին կախ անդամները, հաւաքեց իր տխրութիւնները, հաւաքեց համբերութեամբ բեկորները եւ,

քանի մը աստիճան իջնելով՝ ուղղուեցաւ մզճաւանջներու եւ դիակներու կղզին :

— Մի՛ նեղացնէր զիս, — ըսաւ հարիւրապետը, մինչ անկէկանները մաշած լուսանկարը կը ծծէր աս'ն՝ որ ցանուած էր այս դաժան դէմքին վրայ: Դիմագիծերը փոփոխութեան ենթարկուեցան և դատն կնճիտներուն վրայ տեղացող թարմաշունչ ու նոր գիծերը բացայայտօրէն կը մատնէին զինեալին հոգին այնկոծող խոռվքը :

Պահ մը դանդաղեցաւ: Ուղեց պնդել. «Լազը ազատ պիտի արձախես զիս... խոտուումը խոտուում է, չէ՞: Օ՛ր, այս գիշեր հանդիստ ու խոր քուն մը պիտի քընանամ: Հաւատա՛մ ինձի, որ մենք բարեկամներ ենք, իսկական հարազատներ, նո՛յն կաւէն ենք մենք, ես կու գամ կըզմիտորածածկ տոհմիկ տունէ մը, նոյնպէս՝ դուն: Ինչպէս կ'ենթադրեմ, կու գաս թիթեղածածկ հիւլալէ մը: Մենք մէ՛կ զրկանքի, մէ՛կ աղքատութեան եւ մէ՛կ մտահոգութեան ծնունդներն ենք: Հալաուակը մի՛ ըսէր: Հիմա ճանչցայ թեպ, եւ այս վայրկեանէս սկսեալ, վախն ու սարսափը հետս չեն կրնար առանձնանալ»:

Զինեալը կը մերժէ վերջ տալ իրենց միջև եւ բարձրացած սառոյցէ արգելքին:

Կը մերժէ եւ կը յամառի կառչած մընալ ժայռերէն փրցուած յեղափոխականի իր պատկերին, կերպարին աս'ն մարդուն, որուն համար աւանդական կապերը ոչինչ կը նշանակեն եւ որուն էութենէն ներքո բարեկամութիւններն ու ուրիշներուն տառապանքները չեն կրնար սարդիլ:

Առաս նկատեց, որ իր զգացումները հեռու եւ ցուրտ պահելու համար, զինեալը մեծ ճիգ կը թափէ: Ան կը մերժէ ունկնդրել, կը մերժէ համեմատութիւններ կատարելու հրաւերները, կը մերժէ յիշողութեան ժապաւէնը, որուն պատկերներուն ջերմ հարցերով արգելափակեալը փորձեց անակնկալի բերել զինք: Եւ ոչինչ կ'ըսէ լուսանկարին մասին:

Երեք օրէ, երեք գիշերէ եւ... — կը յամառի Առուստ:

Զինեալը ցատումնացայտ ոտքի կը ցատկէ, լուսանկարը կը շարտէ սեղանին վրայ, ոտքերով կը հարուստ սաւաքաւը եւ փոթորկածայն կը հրամայէ պահակին. «Չնայն՝ վերադարձուր այս...»:

Եւ պահակը, որ կը սպասէ հրամանին՝ սերուհիին ասպետը քաշկուտլու, ծալելու եւ մէկ կողմ շարտելու համար, կը հասնի կայծակի արագութեամբ, կը ծայէ Առուստը, ոսկորները կը կոտորէ:

Երբ իր մարմինը սկսաւ ճոռթկուիլ պահակին ձեռքերուն մէջ եւ ողնածուծէն մինչեւ եղունջներուն ծայրը սուր ցաւեր արթնցան, զղջալով եւ զղջալով՝ Առուստին պահ մը թուեցաւ, որ զինք այս դէմքովէն փրկելու միակ յոյսը այն քանի մը բառերն են, որոնք քիչ առաջ ջարդուփշուր եղան:

Զղջաց եւ զղջաց: Հիմա, պահակը կը հրժշտէ զինք, ոտքերուն տակ առած՝ կը կոխկռտէ, զենքին կոթով կը տեղացնէ պողպատեայ հարուածներ եւ կը քաշկուտտէ: Մութ նկուղին հորեզոնները կ'երկարին մինչեւ ծով, մակոյղները կը դահալիթին ծովուն խորերը, իսկ անկէնը շղթայուած նաւաստին կը զոռայ: «Տէր իմ հարիւրապետ, ժամը հնչած է արդէն, զործարքէ որոշումդ: Տիրուհիս իմ մարքիզուհի, ամէն բան կարգին է: Տիկնայք եւ պարոնայք, մտեցաւ պահը արեան խրախճանքին, փութացէք, անպարեցէք եւ անխառնջով ու երկիւղածութեամբ բարձրացուցէք ձեր իմաստայորդ ճակատները: Ահաւասիկ, ասոնք են ծովածաւալ բազմութիւնները, այս է լեկի ու անմարդարնակ հողակտորը, ասոնք են մութ անկէնները: Սպաննեցէ՛ք մեզ: Գործադրեցէ՛ք մահաւճիռը: Անմիջապէս: Անպարեցէ՛ք»:

Զղջաց: Պղտորեց լուրը եւ վատաւողլ օդի հոսանքին դէմ պատուհան մը բացաւ, տղխտարար: Ի՞նչ ընէ հիմա, ի՞նչ ըսէ: Մարմինին անդամները կը կոտորուուին՝ անդամները ճմլող խիթերէն, որոնք ծոծրակէն մինչեւ ողնաշարին վերջին օղակը կ'երկարին:

Պահակները անգամ մը եւս կը հարցաքննեն ծովորու մոլորած մակոյղներ-

րուն նաւաստին: Հարցաքննութիւնը կը նշանակէ շարչարանք: Նաւաստին մտթ անկիւնը նետուած դիակն է, որ հարց կու տայ պահակներուն. «Ո՞ր է կիին, ո՛ր էն աղջնակս, անհշ...»: Եւ պատասխանը կու դայ խառն, տարօրի՜նակ, անհասկնալի, թուքի, կիցի եւ մտորակներու սուլոցներու խառնուրդ մը:

— Շո՛ւն քեզի, հրոսակախուժերուն համար զէնք կը փախցնէիր, շա՛ն ծընունդ...:

Նաւաստին դարձեալ կը հաստատէ, որ բեռը կը բազկանար միայն իր կնոջմէն ու զաւակներէն... «Քայց ես շուն եմ, ես քու հաւատարիմ շունդ եմ, տէր իմ»:

— Դուն միջատ մըն ես, — կ'ըսէ գինեալը

— Ներէ ինձի, ես միջատ մըն եմ, — կ'աղբերսէ նաւաստին երկիւղածութեամբ:

— Դարչանքի ծնունդ, — ի՛նչ գոռայ մէկը:

Նաւաստին չի հակաճառեր, չի վիճարանիր: Յուսարեկ ու լուռ կը յայտնէ իր համամտութիւնը եւ սենեակը կը լեցուի հարուանքներով. «Ձեւէ զիս այնպէս՝ ինչպէս կ'ուզես, ինչ կ'ուզես անուանէ, ես այնպէս եմ, ինչպէս դուն կ'ուզես»:

— Ձի՞ս կը ձողկես, — կը պոռթկայ գինեալը եւ դուրս ցցուած աչքերէն կը ցայտեն կայծեր ու շանթեր:

Առւատ ո՛չ կայծերը կը տեսնէ, ոչ ալ շանթերը: Կ'ամփոփուի մաս առ մաս եւ կը կառչի դրան: Պիտի չփոխէ իր տեղը, ինչ ալ ըլլայ պատիժը: Անկիւնը կը նշանակէ ամբողջովին անձնատուր ըլլալ ջղազարութեան լաւաներուն: Կը նշանակէ ոտք կոխել աւելի տանջալի լարիւրինթոսի մը սեմին: Իայց դարձեալ վերատեսութեան կ'ենթակէ ինքզինք: Թերեւս խնթութիւնը ըլլայ փրկարար միակ լուծումը, թերեւս անոր ընդմէջէն հասնի յաւիտենական երջանկութեան:

Ձինեալը կը հրամայէ նաւաստիին ոտքի կանգնիլ եւ Տէրը կը շարունակէ փորձութեան ենթարկել իր հաւատարիմ ծառան: Այդ պահուն, սարսափէն եւ

չարչարանքէն զատ ոչինչ կը դռնէ ան: Իր էութիւնը կը փորձէ փախուստ տալ դէպի հեռաւոր ու անկոխ վայրեր, պահակը կ'արդէիւ, հարցումները կը պաշարեն գինք, յետոյ՝ դիակը անկիւն մը կը չպրտեն:

Նաւաստին ոտքի կ'ելլէ: Դիակը ոտքի կ'ելլէ: Հանդէսած ջուրերը կը շարժին եւ կը տարածուին մժեղներն ու նեխածութեան հոտերը:

Առւատ չի հասկնար, թէ ինչ կ'անցնի—կը դառնայ անկիւնը: Ձի դիտեր, չի տեսներ: Խաւար է եւ աչքերը խեղդուած են այրող արցունքներու ալիքներու մէջ: Սակայն ժամեր առաջ լսեց դիակը, որ փախուստ կու տար դահճապետին հետ զրոյցի բռնուելէ, երբ կ'ըսէր. «Երկար ժամանակէ ի վեր ես կը դռնուիմ ձեռքերուդ մէջ, կանգնած՝ դիմացդ, հնազանդ ծառայի մը պէս»:

Երբ համազարկը լսուեցաւ, Առւատ ոչինչ կըրցաւ ըմբռնել: Դիակին շրթներուն վրայ մահացող «ա՛հ» մը չլսեց: Սաւլաքարին վրայ փուլ եկող դիակին աղմուկը չլսեց եւ չլսեց նաեւ դիակին վրայ պայթող թուքին ձայնը: Ան միայն լսեց ծովուն բացերը պայթած կնոջ մը պոռչըտուքը, աղջնակի մը հեկեկանքը եւ մանչու մը հարցումը՝ իր հօր սասին: Լըսեց զնտանին մէջ երթեւեկող սպաննացայտ եւ մահասարսուռ ոտնաձայներ, մինչ ոտքերու ջղադար դոփիւնը արագարագ վար կ'իջնէր ուրուականներու քարայրին աստիճաններէն: Լսեց դրան ճըռոխը եւ ձայն մը, որ կը հրամայէր իրեն անմիջապէս ոտքի ելլել: Վախցաւ, որ կարգը իրեն հասած է: Այն ատեն, իրեն այնպէս թուեցաւ, որ քանի մը ակընթարթ առաջ ներկայացուած տեսարանը դարձեալ պիտի կրկնուի, բայց այս անգամ՝ իրեն հետ: «Ուրեմն, ժամս հնչեց, սիրելի Սուպհի»:

Հայրենիքը կը շարունակէր մոլորած մնալ անորոշ նաւահանգիստի մը մէջ:

Պահակը մօտեցաւ եւ, ձեռքէն քաշելով՝ ըսաւ.

— Աճապարէ՛, հարիւրապետը քեզի կը սպասէ:

— Ժամը քանի՞ է, — հարցուց Աուուատ :

— Առաւօտեան չորսը, — եղաւ պատասխանը :

Արշալոյսն է : Մահը միշտ արեւածաղին կու դայ :

Եկած էր ի՞ր կարգը :

Եւ եկաւ իր մահուան ժամը :

Ձի կրնար շարժիլ : Անդամալուծութիւնը բոյն դրած էր մարմինին մէջ եւ բանականութեան բջիջները զրաւուած էին ապշանքին անակնկալ ներխուժումէն : Այդ պահուն, Աուատի համար հաստատ իրողութիւն դարձաւ, որ կորսնցուցած է ամէն ինչ, նո՛յնիսկ տենչը : Ինչ կը փրնտոէր իր գոյութեան համահաւասար տարողութեամբ մեծ վնաս մը եւ, ահաւասիկ, իրեն ներկայացած էր այս վերջին առիթը . «Արեմն, թող ըլլայ, ո՛չ մէկ արգելք» :

— Քալէ՛, — պոռթկաց ցասում դարձած պահակը :

Աուատ կը սրէ պանջները՝ լսելու համար համազարկին ձայնը, որ պիտի փշրուէր իր կուրծքին վրայ : Ան կը պատրաստէ իր դիակը, որպէսզի հանդարտօրէն փուլ գայ դետին եւ ընդունի պահակին թուքը : Պահակը կը քաշէ իր ձեռքէն, մինչ ոտքերը ո՛չ մէկ ուղղութեամբ շարժելու կարողութիւն կը մատենն : Տրամութիւն մը կ'անցնի իր էութենէն, մարմնը կը թուլնայ եւ անդամները վար կը կախուին : Կը խնդայ : Պահակը ցատում կը կարի : Կը խնդայ : Կը փորձէ հաւաքել ուժերը եւ զանոնք խմբել ոտքերուն մէջ : Սակայն դարձեալ կը խնդայ, թուրութեամբ : Արշալոյսն է եւ ամէն ինչ համահաւասար դարձած է արդէն : Մահն ու կեանքը ա՛լ նոյնացած են :

Ամէն ինչ վերջացաւ : Եւ լայն այլեւս պիտի չըլլայ թշուառութեան արզանդէն ծնած տղուն սիրուհին : Ամէն մարդ դաւածանեց իրեն, ամէն մարդ ուրացաւ (Հատուած համաձայն վկայէն)

զինք, բայց ինչ չիտխուցաւ, չայլասերեցաւ : Երկիրը իր շուրջ կը զառնայ մէկ ուղղութենէն միւս ուղղութեամբ, ան կը շարունակէ արթննալ եւ ըսել շուրջիններուն, թէ ինչ տխուր է եւ չ'ատեր ո՛չ մէկ անձ : Բայց շարժաւորը ուրացաւ զինք, աքաղաղին երեք անդամ կանչէն իսկ առաջ եւ հարիւրապետին ըսաւ, թէ ճամբու ընթացքին, Աուատը իրեն պատմած է մեծաքանակ զինամթերքի պայմանագրութեան մը մասին, զոր կնքելու համար ճամբայ էլած է... «Ես լծուած եմ խիստ դաղտին առաքելութեան մը, որ պիտի ունենայ իր արիւնալի հետեւանքները» : Եւ երբ հարց տրուեցաւ շարժաւորին, թէ երբէ՞ն ի վեր Աուատը կը ճանչնայ . ան ամենայն ճարպիկութեամբ հիւսեց երկար հեքիաթ մը, որմէ Ղայնացած՝ հարիւրապետը «Ժիթան»ը վառելէ առաջ նետեց զետին եւ, առ ի երախտագիտութիւն՝ ազատ արձակեց հաւատարիմ շարժաւորը : Մինչ Աուատ կ'ըսէր ինքն իրեն, թէ շարժաւորը թերեւս հիմա վերադարձաւ քաղաք եւ եղելութիւնը պատմեց Նաուասին, Սուպհիին կամ պանդուկի յաճախորդներուն :

Ամէն ինչ վերջացաւ : Սակայն ինչպէ՞ս կը վերջանայ ումէն ինչ :

Յետոյ, կան մարդիկ, որ երբ կը ծնին, անոնց ընտանիքներէն կը պահանջուի զոհել իրենց երեխաները, իսկ Աուատ կը պահանջէ խաչել զանոնք, երբ մեծնան : Եւ մի՞թէ ինչ այն տղան չէր, որուն մայրը իրմէ պահանջեց զառնալ սիրոյ ցաւին մատաղսը, պահանջեց, որ ան մնայ խաչուած՝ առաւօտէն մինչեւ դիշեր, չճանչնայ հանգիստ, չճանչնայ հողեկան խաղաղութիւն, չճանչնայ անդորրութիւն եւ մնայ խաչուած խաչափայտին վրայ՝ առաւօտէն մինչև գիշեր :

Ա Ն Դ Բ Ա Դ Ա Բ 2 ...

Երբ դուն լսեց
 Անապատի տաք շրթներուն քու անունդ աւազէ,
 Երբ իմանաս,
 Թէ արձանին մէջ տրոփող ժամանակը քու սիրտդ է,
 Գուցէ յանկարծ անդրադառնաս,
 Թէ անքթիթ աչքերուդ մէջ՝
 Տուներ կային դուռ-դրացի,
 Թէ քարացած շրթունքներուդ լուրթեան մէջ՝
 Սրտեր կային,
 Բամբասանքն իր կիներն ունէր՝
 Խօսքերու տաք թոնիրին շուրջ բոլորուած.
 Ու ձմեռը,
 Իր դողացող մատներուն մէջ սեղմած քամին,
 Պատուհանէ պատուհան՝
 Կու գար երգեր յօրինելու,
 Եւ յուզումի յորդ կաթիլներ անձրեւելէն
 Կը հեռանար:


Ու փողոցը դուռ-դրացի տուներն ի վեր
 Կը վազէր,
 Միջօրէի արեգակը բերելու...

Այն ատեն մենք
 Փոքր էինք՝ մեր անսահման ստուերներուն յանձնուած.
 Կեանքն իր երզը կը գրէր ափերուն մէջ փոջրերուն
 Ու տարագիրն իր ճանապարհը չուներ...

Օ՛, իմ անցեալ,
 Ըսէ՛,
 Ինչպէ՛ն վերադառնամ ես հիմա,
 Այն փողոցին մտերմութեանը եռուն,
 Երբ աչքերէս ապակիներ փշուր-փշուր կը թափին
 Քաղաքի մը չվերջացող մայթերուն...

Ե Բ Բ Ե Ս Զ Ը Լ Լ Ա Մ Ա Յ Լ Ե Ի Ս...

Երեկոյ մը, ես ու զիշերս առանձին,
 Երբ վերջապէս ա՛լ ապատինք մեր մութէն,
 Քուլայ մը խունկ թող մեր հայեացքը գգուէ...
 Ու առկայծի երբոր բոցը մոմերուն,
 Թող շշուկներ չարթննան ամայացած աչքերդ՝
 Այլ աչքերէս թող հոսի մազերուդ մութը ծփուն...



Լ. Մ Կ Ր Տ Ձ Ե Ա Ն

«ԱՅՈՒԹԵԱՆ» ՈՒ «ՄԱՐԴԱՅԻՆ»Ի ԱՈՐԵՆՉՈՒԹԻՒՆԸ ԿԵԱՆՔՈՒՄ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԵՋ

Առօրեայ կեանքում անպակաս են այն դէպքերը, երբ ունէ մէկը աւելի կամ պակաս հանդիսաւորութեամբ հարկ է համարում շնչտել, թէ ինքը հայ լինելուց առաջ մարդ է, եւ թէ՛ հայութեան չափանիշներից աւելի նախընտրում է մարդկութեան չափանիշները: Նման դէպքերը կարող են իրարից տարբեր հանգամանքների ու նկատառումների հետեւանք լինել, բայց միշտ էլ մատնում են պատկերացումների խախտւտ ու ճշմտամային մի վիճակ, «հայութեան» ու «մարդկութեան» միջեւ արհեստականօրէն անպայման անդունդ տեսնելու ակնյայտ նախատրամադրուածութիւն:

Մարդկային որեւէ կազմաւորուած հանրութիւն ինչ-ինչ նկատառումներով ինքնին թերարժէք համարելու եւ համայն մարդկութեան լրարժէքութիւնը հաստատող նշանախօսքերին կառչելու տրամադրութիւնը, ըստ երեւոյթին, առկայ է աշխարհի բոլոր հորիզոնների տակ: Իայց այդ տրամադրութիւնը առուել ուժգնութեամբ է դրսևորում մարդկային կենսական կապերի թուլացման ու խզման, հանրային կառոյցների իրական կամ թուացող արժէքային նեմութեան եւ նմանօրինակ այլեւայլ պայմաններում: Մինչդեռ, ընդհակառակն, բնականոն պայմաններում, երբ անհատի ու միջավայրի ներդաշնակութեան իրողութիւնն է տիրական, նոր ու անհատանելի կապեր որոնելու տրամադրութիւնը երկրորդական դժի վրայ է մնում, ըստ էութեան անհասկանալի ու նոյնիսկ անյայտ:

Այսպիսով, երբ յիշատակում է հայութիւնից խուսափելու եւ այսպէս կոչուած մարդկութեանը փարուելու տրամադրութիւնը, նոյն ժամանակ չի մոռացում, որ դա յատուկ հայկական երեւոյթ չէ, այլ՝ բոլոր հասարակութիւնների մէջ նկատուող որոշակի կենտրոնախոյս միտում: Կարելի է ստել՝ ուղղակի հիւանդագին միտում, որովհետեւ դա անհամեմատ քիչ է արտասայալուում առողջ հասարակութիւններում, իսկ, ընդհակառակն, անզուսպ ուժ է դառնում այս կամ այն պատճառով տկար վիճակի մատնուած հասար-

րակութիւններում : Գաղտնիք չէ , որ արիւնարբու թշնամիների ձեռքով հայ-րենիքից արմատախիլ արուած հայկական զանդուածներէց ամէնուրեք համարեա՛ դերամարդկային ճիգեր են պահանջուում՝ իրեն մարդկային ու ազգային հաւաքական միաւոր տեսելու եւ կեանքը ըստ այդմ վարելու համար : Եւ ահա նման անընականոն պայմաններում ինքնաբերաբար աւելանում է կենտրոնախոյս տրամադրութիւնների ծաւալն ու կշիռը : Երբ կայ տրամադրութիւն՝ կայ նաեւ այդ տրամադրութիւնը հիմնաւորելու բացայայտ կամ թաքուն ճիգ , ո՛չ միայն առօրեայ կեանքում , այլեւ՝ տպագիր հրատարակութիւնների էջերում :

Ազգային հանրութիւնը թերագնահատելու եւ «համամարդկային արժէքներին» սիրահարուելու տրամադրութիւնը կարող է բխել սեփական կազմախօսական առանձնայատկութիւններից կամ լինել «միջազգային» զանազան միարարական կազմակերպութիւնների , կայսերապետական ու դեր-կայսերապետական ուժերի քարոզչական ներդործութեան արգասիք : Առաջին դէպքում նախադրեալը անհատի մէջ է , իսկ երկրորդ դէպքում՝ միջավայրի ու միջոցորդի : Երբ շրջապատում գերիշխում են հեռաւոր պատկերների հրապուրչի իրաժծերը , աստիճանաբար նուազում է աւանդական կենսական կապերի ու հաւաքական կառոյցների նշանակութիւնը : Իսկ հասցնում է անշատուելու հակամբոտ անհատների հողբեանական խորթութեան եւ դոյութիւն ունեցող անմիջական կառոյցներին երեւակայական ու կամայատեղծ կառոյցներ հակադրելու մտայնութեան :

Իւրաքանչիւր կազմաւորուած ու ապրող հաւաքական միաւորի դոյութիւնը , ի հարկէ , հնարաւոր է միայն բաղկացուցիչ մարդ-անհատների մըշտական գործակցութեամբ , ինչ որ անհրաժեշտաբար պահանջում է կամաւոր կամ պարտադիր ջանքեր : Իսկ այդպիսի ջանքերի անխափան գործադրումը պայմանաւորուած է անհատների պատասխանատուութեան զգացումով ու դրանից բխող այլեւայլ յատկութիւններով : Բայց ահա , ինչ-ինչ նկատառումով , պատասխանատուութիւնից խուսափելու ու ջանքերը խնայելու տրամադրութիւնը գրգռում է որոնել առկայ կամ խոստումնալի ուրիշ ոլորտներ , որտեղ ուրիշների ճիգերով արդէն պատրաստուած միջավայրում թերեւս հնարաւոր լինի քիչ տայրով շատ ստանալ : Եւ իրականում՝ գերադրական «մարդկայինը» ըստ էութեան նոյնացուած է շատ սովորական , բայց շատ աւելի «բարձր» կարծուող մի որեւէ այլազգային իրականութեան հետ , որին փարուելն ու տուեալ պարագայում նուազ ձեռնտու իրականութիւնից հրաժարուելը ինքնաբերաբար թելադրում է համապատասխան փաստարկումներ , նոյնիսկ թանձրացեալ ազգայինը մարդկայինից տարբեր բան համարելու անսպացուցելի դրոյթներ : Բնականաբար , այստեղ խօսքը չի վերաբերում պայմանների հարկադրանքով տոհմիկ միջավայրից օտարուելու ճակատադրական դէպքերին , այլ՝ յատուկ միտումով եւ ազգայինը արժեզրկելու զնով մարդկային ինչ-որ անփոխարինելի գերադոյն արժէքներ հրամցնելու միտումներին :

Ինչպէ՞ս կարող է ազգայինը թանձրացեալ մարդկայինի մարմնացում չլինել , երբ ազգային իրականութիւնը ներկայացնող ազգերը միայն մարդկանցից են կազմուած : Իսկ մարդկայինն էլ , իր հերթին , որտե՞ղ կարող է դոյութիւն ունենալ , եթէ ոչ մարդկանց մէջ ու միջեւ : Սա նշանակուած է , որ միանգամայն անհիմն է ազգայինի , ընդամին նաեւ հայկականի ու մարդկայինի միջեւ ինչ-որ տարբերութիւն ու հակադրութիւն տեսնելը , ինչպէ՞ս եւ «հայութիւնը» «մարդկութեանը» ստորադասելը :

Ընդհանուր գծերով յայտնի է մարդկութեան պատմութիւնը եւ աշխարհի պատկերը: Ի հարկէ, այդ պատկերը դարերի ընթացքում փոխուել ու փոխուում է թէ՛ ջարդանների վրայ եւ թէ՛ մարդկանց մտքում: Փոխուել ու փոխուում են հասարական կազմակերպման ձեւերն ու մարդկային խմբերի առընթերթիւնները: Այն՛ ինչ որ մի պահ հասարական անրեկանելի սրբութիւն է համարուում, կարող է մի այլ ժամանակ աննրեկելի սրբապղծութիւն համարուել: Դրա օրինակներն անհաշիւ են: Եւ, ընդհակառակն, ուրացուածն ու լքուածը կարող է վերստին յայտնարեւոյնել ու իւրացուել: Ուստի, ազգային գոյութեան պայմաններն ու պատկերացումները եւս կարող են փերանայուել ու կատարելագործուել: Բայց ինչ էլ որ լինի, չի կարելի մի այնպիսի կացութիւն երեւակայնել, որ բոլոր մարդիկ ու մարդկային խմբերը երկրագնդի վրայ ապրեն իբրեւ հոծ ամբողջութիւն: Ինչպէս մինչեւ հիմա, այնպէս էլ այսուհետեւ՝ մարդիկ կոչուած են ապրելու կողք կողքի, հորիզոնական դասաւորութեամբ ու կազմակերպուած խմբերով: Իւրաքանչիւր խումբ հենց ինքը մարդկութիւնն է եւ իր անդամների աշքում փոխարինում է նրան, իսկ մարդկութիւնը չի կարող փոխարինել եւ ոչ մի խմբի, քանի որ ինքը գոյութիւն ունեցող խմբերի դուժարն է միայն, չի կարող ինքն իրենից անջատուել ու մի այլ դեր ստանձնել:

Եթէ այդպիսին է մարդկանց գոյութեան պայմանը, ինքնին հասկանալի է, որ նոյն կարգով էլ ներկայանում են մշակոյթները, այդ թւում եւ գրականութիւնը: Իւրաքանչիւր կազմակերպուած մարդկային խումբ, ազգային կամ այլ մակարդակով, իր իսկ ջանքերով իր մշակոյթն է ստեղծում, այսինքն՝ իր ստեղծագործական կարողութիւններն է մարմնաւորում: Մշակութային ընթացիկ փոխանակութիւնն ու փոխազդեցութիւնը չի հերքում այդ հիմնական իրողութիւնը: Ստեղծագործութեան տեսչը մարդկանց ներսից է բխում եւ ստեղծագործողի համար միեւնոյն է, թէ ուրիշները ինչ ու ինչքան են ստեղծում: Կարելի է ուրիշների ստեղծածը տեսնել ու հաշուի առնել, հաւանել կամ չհաւանել, բայց ո՛չ մի դէպքում՝ սեփական կոչումից հրաժարուելու գնով: Այդպէս է, որ մշակութային ու գրական յուշարձանները իրար վրայ դիզուելով բուրգեր են կազմում, բայց, զբանով հանդերձ, իւրաքանչիւր մարդկային սերունդ ու օժտուած անհատ շարունակում է իր հերթին իր սեփականն ստեղծել: Դրանով ինքնարերարար ապահովում է մարդկային ստեղծագործական հերթափոխութեան տեսականութիւնը:

Մրանից բխում է, որ մշակոյթն ու գրականութիւնը ե՛ւ «տեղական» ազգային միջավայրի ծնունդ է, այլ ոչ թէ «համամարդկային» հրաշք: Միեւնոյն միջավայրում ապրող օժտուած անձանց ջանքերի դուժարը ժամանակի ընթացքում ներկայանում է իբրեւ ազգային մշակոյթ ու գրականութիւն: Հանդամանքների բերումով, այդ մշակոյթն ու գրականութիւնը կարող են ազգային ուրուից դուրս լայն արձագանգ ունենալ՝ իրենց այս կամ այն բանմանութեան շնորհիւ, ուրիշ ազգերի պատկանող մարդկանց դնահաստակաին արժանանալ: Բայց կարող են եւ մնալ տեղական սպասարկման շրջանակում: Երկու դէպքում էլ հանդիսանում են ազգային մշակոյթ ու գրականութիւն եւ միայն մ'յո՛ւր ճանապարհով համամարդկային մշակոյթի ու գրականութեան մաս կազմում: Գոյութիւն ունենալու եւ արձագանգուելու այլ ապարէզ չկայ:

Ուրեմն, եթէ ոեւէ անհատ լիարժէք մարդկային կեանքով ապրելու ընդունակութիւն եւ ցանկութիւն ունի, նա իր նպատակին կարող է հասնել պար-

զայլէս ազգային շրջանակում եւ դրանից դուրս այլ հրաշագեղ ուրրոսներ ունենլու ճիգերը ապարզին կը մնան: Այսպէս կոչուած համամարդկայինը ո՛չ միայն բարձր չէ ազգայինից, այլեւ՝ նրանից դուրս ուղղակի գոյութիւն չունի. դա ներշնչուած կամ հնարովի պատրանք է միայն: Նոյն ձեւով էլ՝ խոսակէս ստեղծագործական խմոր ունեցողը ուղղակի ստեղծագործում է իւրեն վիճակուած ազգային միջավայրում, անկախ այդ միջավայրի նեղ կամ ընդարձակ լինելուց: Ի հարկէ, իւրաքանչիւր ստեղծագործող իրաւամբ շահագրգռուած է նաեւ իր ստեղծագործութեան արձագանգով եւ անուրանալի է ամէն մի արձագանգի բարերար նշանակութիւնը: Իայց դա միտամանակ կապուած է տուեալ ազգային հասարակութեան ճակատազրի հետ: Եթէ հասարակութիւնն ինքը նեղ վիճակում է՝ սահմանափակ է նրա արձագանգային զօրութիւնը: Իսկ եթէ նա բնականոն կացութեան մէջ է եւ արձագանգային կարողութեամբ օժտուած՝ դա լիուրի բաւական է բուն ստեղծագործական մթնոլորտը ապահովելու համար: Դրսի արձագանգը միայն յաւելեալ բարիք է ու, իր հերթին, կարող է լինել դարձեալ ներքին մթնոլորտի առողջութեան, ճառագայթային զօրութեան ու տուեալ հասարակութեան կազմակերպութեան շնորհիւ, այլ ոչ թէ համամարդկային ուժերի եւ հեղինակութիւնների մոգական գաւազանի ողորմածութեամբ:

Պատմական ու ստորեայ փորձը ցոյց է տալիս, մի կողմ գրած արթուն բանականութեան թելադրանքը, որ ազգային իրականութիւնն ու նրանով պայմանաւորուած արժէքներն ու շարժանիշները անտեսելու գնով համամարդկային «փրկարար» գաղափարներով հրապուրուելը չի նպաստում մարդկային կենքի ո՛չ բարոյական, ո՛չ մշակութային եւ ոչ էլ քաղաքական գործունեւրի բարելամանը: Հրապուրանքը միայն մարդկանց ուշադրութիւնը շեղում է կենանքի բարելաման բուն նպատակից ու այդ նպատակին տանող վաւերական ճանապարհներից: Ահա թէ ինչու վերագրաբան հողի վրայ շրթայագերծուած պայքարները շատ աւելի զոհեր են խլել ու խլում, առանց շօշափելի դրական արդիւնք տալու, քան ազգային հողի վրայ տեղի ունեցող պայքարները: Վերջիններս, նոյնիսկ ձախողուելու զէպգում, վառ են պահում մարդկայնութեան հաւատն ու զբօշը: Իսկ վերագրային շարժումները թողնում են միայն աւերակներ ու մոխիր:

Հակառակ այդ իրողութեան, տեղական համակարգերից վեր համաշխարհային ընդհանրական կարգուկանոն տեսնելու ցանկութիւնը ուղեկցում է մարդկանց հազարամեակներից ի վեր: Այդ ցանկութիւնը ինքնին բարի է, եթէ չի հիմնոււմ սխալ հաշիւների վրայ: Իսկ սխալ հաշիւ է կարծել, թէ կարճակերպուած ազգային հասարակութիւնները աւելորդ ու վնասակար են եւ եթէ նրանք չեն ուզում կամովին վերանալ՝ արդար է բռնութեամբ վերացնելն ու համաշխարհային ամբողջութեան մէջ ձուլելը: Դրան հակառակ՝ ճիշդ է, որ համաշխարհային խնկական կարգուկանոնի եւ ազգերի համերաշխ գործակցութեան հասնելը օգտակար է բոլոր բնականոն մարդկանց ու ինքնազոյ ազգերի համար: Այս պարզ ու այբբենական ճշմարտութիւնը, սակայն, միշտ չէ, որ ընդունոււմ է իր մերկութեամբ: Իրականում դրան խառնոււմ են այլեւայլ նկատառումներ, ոտնձգութիւններ, թիւրիմացութիւններ ու ենթակայական բաղձանքներ:

Այստեղ, ուղած-ուղած, հարկ է զղացոււմ խոսելու մի երեւոյթի մասին, որը կոչոււմ է աշխարհաքաղաքցիութիւն կամ յոսմալլախիզմ: Աշխարհաքաղաքցիական մտայնութիւնը գոյութիւն ունի այսօր եւ գոյութիւն

է ունեցել զարեր շարունակ: Տարբեր ժամանակ տարբեր բնոյթ է կրել եւ տարբեր շարժառիթներ է ունեցել: Ուստի, չի կարելի այդ բանն արտասանել եւ միանգամից կարճ ու կտրուկ ջատագովութիւն կամ դատաւճիռ հռչակել: Նայած հանգամանքներին, «աշխարհաքաղաքացիութիւնը» կարող է ներկայանալ իր թէ՛ անշահանդիւր եւ թէ՛ շահախնդրական դէմքով: Դրա համար պէտք է իւրաքանչիւր դարաշրջան ու նշանախօսք տեսնել իր անմիջական շրջանակում:

«Աշխարհաքաղաքացիութիւն» արտայայտութիւնն իր արդիական նշանակութեամբ շրջանառութեան մէջ է դրուել հիմնականում 18րդ դարում: Բայց դրա ակունքները հասնում են նախաքրիստոնէական դարեր եւ հելլէնիստական աշխարհ: Ծագում է յունարէն «կոսմոս» – տիեզերք (աշխարհ) եւ «պոլիտէս» – քաղաքացի բառերից: Այժմ դա նշանակում է ամբողջ աշխարհն ընդգրկող, վերպետական մարդկային հասարակութեան մի գաղափար եւ դրա վրայ յենուող աշխարհաշէնարարութիւնն ու քաղաքական վարքագիծ: Այդ գաղափարը դաւանողները ելնում են անհատականից, թէ՛ բոլոր մարդիկ «բարեկեցիկ» հաւասար են ու հետեւապէս նոյն մեծ աշխարհի քաղաքացիներն են, եւ թէ՛ նրանց նմանութիւններն ու միացնող ընդհանուր կապերն աւելի մեծ են նրանց կրօնական, մշակութային, լեզուական, ընկերային, ցեղային, ազգային եւ այլ ստորադաս տարբերութիւններից: Այս է առանցքային դրոյթը:

«Աշխարհաքաղաքացիութեան» գաղափարը, իբրեւ տեսական շարադրանք, առաջ է քաշուել հին Յունաստանում՝ նախ ցիմիկ (չնական), իսկ ապա աւելի լայնօրէն՝ ստոյիկեան փիլիսոփաների կողմից, հելլէնիստական դարաշրջանում: Ենթադրուում է, որ առաջին անգամ Դիոգենէս Սինուպցին է (մ.թ. ա. 412-323) դրադուել այդ նիւթով: Հետագայում քրիստոնէութիւնը անուղղակի ձեւով խթանեց այդ ըմբռնումը, ելնելով Աստծու առջեւ բոլոր մարդկային հոգիների հաւասարութեան դրոյթից: Աւելի ուշ՝ «աշխարհաքաղաքացիութեան» գաղափարը իւրացրին ու մշակեցին եւրոպական Հումանիստները (15-16րդ դարերում), Լուսաւորականները (18րդ դարում): Այդ հիմունքով է կառուցուած եւ ազատ-որմնադրական շարժումը: Նոյն ուղղութեամբ են գործել նաեւ ձախ-ազատամտական ու ընկերվարական հոսանքները, «պագիֆիստները» (խաղաղապաշտները): «Աշխարհաքաղաքացիութիւնը» կոմունիստական «ինտերնացիոնալիզմ» քարոզող իշխանութիւնների կամքը արտայայտողների մշտական յարձակումների թիրախ է, իբրեւ «բուրժուական գաղափար», ընդամին ոչ թէ իր համաշխարհային ամբողջական ընդգրկման, այլ դաւանած մարդապաշտպան սկզբունքների պատճառով: Ահա՛ «կոսմոպոլիտիզմի» գաղափարի անցած ճանապարհի ընդհանուր պատմա-ժամանակային համայնապատկերը:

Բայց այդ գաղափարի հանգամանակից մշակումը ամէնից շատ վերագրում է ստոյիկեան փիլիսոփաներին, որոնց եռանդուն գործունէութիւնը ընթացել է մօտ 500 տարի ընդգրկող մի ժամանակաշրջանում՝ մ. թ. ա. 4րդ դարի վերջից մինչեւ մ. թ. 2րդ դարի վերջը: Ահա թէ ինչու արժէ մի քիչ աւելի կանգ առնել «աշխարհաքաղաքացիութեան» ստոյիկեան ըմբռնման վրայ:

Ստոյիկեան փիլիսոփայութիւնը մի շարք փիլիսոփայական ուղղութիւնների (սոկրատէսեան, չնական, արիստոտելեան) եւ մերձաւոր-արեւելեան կրօնական տարրերի իւրայատուկ հիւտուածք է, որի մէջ կենտրոնական տեղ

է բռնում բարոյագիտութիւնը՝ իր ընդհանրական դրոյթներով: Այդ բարոյագիտութիւնը հիմնաւորուած է ոչ այնքան աստուածաբանական ու զուտ բանալաչտական, որքան որ տիեզերաբանական դրոյթներով: Ըստ այդ ըմբռնման, տիեզերքն իր գեղեցիկ ու բանական կարգով բարձրագոյն իմաստն է, նոյնինքն աստուածութիւնը: Տիեզերքը մեծագոյն աշխարհապետութիւնն է, որտեղ բոլոր իրերն ու էակները նուիրապետական աստիճաններով են դասաւորուած: Մարդը կարող է եւ պէտք է լինի այդ «պետութեան» ազատ քաղաքացի, եթէ գիտակցի նրա օրինաչափութիւնները եւ կամենայ ենթարկուել նրանց: Այստեղից է բխում եւ «աշխարհաքաղաքացի» արտայայտութիւնը՝ իր առանձնայատկութիւններով:

Բայց ստոյիկեան ըմբռնումով «աշխարհաքաղաքացիութիւնը» իրականութիւնից խոյս տալու կամ կրաւորական ու հայեցողական վարքի կոչ չէ, այլ՝ գործուն կեանք վարելու թելադրանք: «Պարտականութեան» ըմբռնումը առաւելապէս մշակուել է ստոյիկների կողմից: Թէեւ հիմնական նպատակադրումը անհատի կատարելագործումն էր համարուում, այդ բանը պայմանաւորուում էր հասարակական գործունէութեամբ՝ տարբեր մարդկանց գործակցութեամբ: Թէ ինչ ոգով էր առաջնորդուում ստոյիկեան բարոյագիտութիւնը, կարելի է դատել նրանից, որ ընտանեկան կեանքում դաւանուում էր տղամարդու եւ կնոջ իրաւահասարակութիւն, երեխաների յատուկ իրաւունք, տէրերի ու ստրուկների հաւասարութիւն՝ իբրեւ մարդ, իսկ հանրային կեանքում ունեւորներին կոչ էր արւում սիրել մերձաւորներին, բարձր էր գնահատուում աշխատանքը, քաղաքացիներին յանձնարարուում գործուն մասնակցութիւն ցուցաբերել հանրային ասպարէզում, եւայլն:

Ինչպէս երեւում է, ստոյիկեան բարոյագիտութեամբ ձեւակերպուած «աշխարհաքաղաքացիութիւնը» իր ընդհանրականութեան հետ միաժամանակ նշանակում է նաեւ մարդկանց անմիջական պարտականութիւնների կատարում, անընդհատ կապ շրջապատի հետ: Մարդ անհատը, ի հարկէ, ուղղակի կապուած է տիեզերական ամբողջութեան հետ, ենթարկւում է նրան, այլ ոչ թէ աշխարհային որեւէ գերագոյն հեղինակութեան: Բայց դրա իմաստն այն է, որ մարդու ճնշումը մարդու կողմից անբնական է ու անթոյլատրելի, ամէնուրեք եւ միշտ:

«Աշխարհաքաղաքացիութեան» ստոյիկեան ըմբռնման հետ սերտ կապ ունի «հումանիզմը» (մարդկայնականութիւնը), թէեւ դրանց ելակէտները առաջին հայեացքից կարծես թէ նոյնիսկ հակադիր են: Այսպէս, եթէ «աշխարհաքաղաքացիութեան» դէպքում ելակէտը ամբողջ տիեզերքն է, որից եւ բխում են մարդկային յանձնարարելի անելիքները, հումանիզմի պարագայում, ընդհակառակն, ելակէտ են ընդունուում մարդու հենց ճիշդ երկրային գոյութիւնը, սահմաններն ու հնարաւորութիւնները, առանց արտաերկրային օրինաչափութիւնների ու հեղինակութիւնների դիմելու: Բայց ի վերջոյ, դրանք ըստ էութեան միանում են, քանի որ յանգում են համամարդկային անխորական եզրակացութեան: Եւ հենց միայն այն իրողութիւնը, որ երկար ու խառնակ դարերի ընդմիջումից յետոյ հրապարակ եկած «հումանիստները» տնամիջապէս շրջանաւորութեան մէջ դրին «աշխարհաքաղաքացիութեան» գաղափարը, ինքնին շատ բան է վկայում:

Հումանիզմի գաղափարը ձեւակերպուել է դեռեւս Հռոմում, մա՛նաւանդ Կիկերոնի կողմից՝ իբրեւ մարդկային ուժերի բարոյական-մշակութային առաւելագոյն զարգացում, գեղագիտական կատարեալ ձեւով եւ մեզմ ու

մարդասիրական ոգով: Ծատ աւելի ուշ հումանիզմ կոչուեց եկեղեցու եւ սխոլաստիկայի տիրապետութեանը հակադրող շարժումը, նախորդելով Վերածնութեանը եւ այլնին: Այդ շարժումը ձեւաորուեց յատկապէս 14րդ դարում Բիզանդիայից Իտալիա սպաստանած յոյները ու նրանց համախոհները ջանքերով, ո՛չ միայն Իտալիայում, այլեւ՝ Սպանիայում, Ֆրանսիայում, Անգլիայում, Հոլանդիայում, Գերմանիայում, Շուէյցարիայում եւ այլուր: Հումանիստական շարժումը, փաստօրէն, համարեա՛ չընդհատուեց, եւ հետագայ բոլոր դարերում, մինչեւ հիմա, շատերն են իրենց հումանիստ հռչակում: Տուեալ դէպքում կարելուք է յիշել, որ հումանիստական շարժումները շատ յաճախ ներկայանում են «աշխարհաքաղաքացիական» նշանախօսքերով:

Եթէ աչքի առջեւ բերենք մանուսնդ 18 եւ 19րդ դարերը, կը տեսնենք, որ շատ անուանի գիտնականներ, գրողներ ու արուեստագէտներ իրենց առանց այլեւայլութեան «աշխարհաքաղաքացի» են անուանել: Դա կարող է լինել ներքին համոզման արդասիք, օրուայ հովիբրին տուրք տալու տրամադրութիւն, հանրային վարքագիծ փաստարկելու միջոց, եւ այլն: Իայց իրականութիւնն արեւիսին է: Ծատերի համար «աշխարհաքաղաքացիութիւնը» հանդիսացել ու հանդիսանում է դաւանանք, հպարտութեան աղբիւր, դործունէութեան ուղեցոյց:

Կարելի՞ է արդեօք այդ իրողութիւնը հիմք ընդունելով՝ կարծել, թէ «աշխարհաքաղաքացիութիւնը» դրական գաղափար է անխտիր բոլոր դէպքերում: Կորակաւապէս պէտք է պատասխանել, որ ոչ: Որովհետեւ իրական կեանքում այդ որոշ առումով անմեղ գաղափարին անհրաժեշտ են անհամար ենթակայական նկատառումներ, շահախնդրութիւններ, դասալըութիւններ, քաղաքական ամպարբուրութիւններ ու խարէութիւններ, եւ այլն: Հետեւապէս, իւրաքանչիւր երեւոյթ ու վարքագիծ պէտք է գիտել իր իսկութեան մէջ, գընահատել ըստ այնմ, չհրապուրուելով այս կամ այն հնչոււն նշանախօսքով:

«Աշխարհաքաղաքացիութիւնը» մէկ կողմից անպայման դրական երեւոյթ է, հասունութեան ու նաեւ բարութեան նշան: Երբ այն համոզումն է գոյանում, թէ մարդկային արժանիքներն ու մոլութիւնները այս կամ այն յարաբերակցութեամբ առկայ են ամէնուրեք, անպայման չեն բեւեռացում ոեւէ ժողովրդի մօտ, հետեւապէս անտեղի են եսամոլական յաւկնութիւններն ու նախապաշարեալ խտրութիւնները: Երբ գիտակցում է, որ տեղական նեղմտութիւններն ու գժտութիւնները փակում են մարդու ճանապարհը, յետամնացութեան ու լճացման դատապարտում նրան, դրանով իսկ բորբոքելով շարութեան, թշնամութիւնները եւ աւերածութիւնների ոգին: Երբ անհրաժեշտ է համարուում աշխարհի բոլոր մարդկանց ու մարդկային խմբերի համերաշխութիւնը, դործակցութիւնը եւ շահերի ընդհանրութիւն որոնելու ջանքերը:

«Աշխարհաքաղաքացիութիւնը», յիշեալ դրական դիմադժից բացի, կարող է ունենալ եւ այլ միջանկեալ դիմադժեր: Իսկ իբրեւ բացասական երեւոյթ՝ կարող է ներկայանալ այն դէպքում, երբ պատրուակ է ծառայում կազմակերպուած հասարակութիւնները քայքայելու կամ կազմակերպման փուլում գտնուող հասարակութիւնների ճանապարհը փակելու համար, որպէսզի թոյլերի հաշուին օգտուեն հզօրները, «փոքրերը» պատուանդան դառնան «մեծերի» համար, քանի որ իբր վերջիններս աւելի մօտ են համաշխարհային ամբողջութեանը, քան առաջինները: Այդ ասպարէզում կան այլեւայլ գործնական ու «գաղափարական» հնարաւորութիւններ, որոնցից օգտուողները մե-

ծաղոյն վրաս ևն հասցնում առաջին հերթին հենց ապրող մարդկանց ու «աշխարհի բաղաբաց» լինելու նրանց ձգտմանը, և թէ այդ ձգտումը առաջնորդում է աղատ մարդկանց կամաւոր դործակցութեան առաջատար զապախարով, այլ ոչ թէ մերձաւորին հարուածելու զնով «մեծապիւր» հովանաւորներին ծառայելու սարճաւորութեամբ :

Այսպէս է ներկայանում հարցը իւրաքանչիւր աղօլային հասարականութեան եւ համայն մարդկութեան փոխյարարելութեան աստարկչոյս : Նոյն աեսանկիւնից պէտք է բացատրել և «Հայութեան» ու «մարդկութեան» առնչութիւնը իրական կեանքում : Դրանից զժտուր չէ եզրակացնել, թէ յիշեալ առնչութիւնը ինչպիսի վարքագիծ է թելադրում, ասեմք, մշակոյթի ու զրահանութեան մէջ :

Թելադրանքը վաւերական է ամբողջ հայութեան համար : Դա նշանակում է, որ սեփական կեանքով ապրելու ճանապարհին պէտք է ունենալ սեփական մշակոյթի ու զրահանութիւն : Բայց մի անգամ ունենալը բաւական չէ, այն պէտք է անընդհատ խնամել ու մշակել՝ նորանոր արժէքներ ստեղծելով : Այդ ձևով ապահովուած մշակոյթն ու զրահանութիւնը կազմակերպուած հասարականութեան կեանքը աւականացնելու անփոխարինելի պայման են : Հեանեապէս, պէտք է տրամադրելի միջոցներով պայքարել այն բոլոր ոտնձգութիւնները դէմ, որոնց նպատակն է վարկարեկել ու խափանել նման մշակոյթի ու զրահանութեան զոյութիւնը :

Այդ թելադրանքից անբժան է միւս թելադրանքը, որ հայութիւնն ապրում է աշխարհի վրայ, իր նման ուրիշ ժողովուրդները շարքում : Այդ ժողովուրդները հետ հողերու եւ այլ ճանապարհներով հաղորդակցուելը եւս կեանքի ու զարգացման աղբիւր է : Հետեապէս՝ այն բոլոր միջոցները, որոնք նպատակ են նման հաղորդակցութիւն հաստատելուն, ողջունելի են : Հաղորդակցութիւնը կրկնակի իմաստ ունի. մէկ կողմից տեսնել ուրիշների ըստեղծագործական ջանքերի արդիւնքները, իսկ միւս կողմից էլ՝ ուրիշների տրամադրութեան տակ զինչ դարերի ընթացքում կուտակուած, բայց իրերի բերմամբ աշխարհին անյայտ մնացած սեփական ստեղծագործութեան զանձերը : Կեանքը աներկբայորէն ցոյց է տալիս, թէ ինչպիսի՞ ջերմազին տրամադրութիւններ է յարուցում օտար արժանաւոր անձանց մօտ՝ հայ մշակութային զանձերի միջազգային շրջանառութեան մէջ դրուելը :

Այս ալբրենական թելադրանքները վաւերական լինելով հանդերձ՝ ամբողջ հայութեան համար, անկտրելի է իրագործել ամէնուրեք նոյն ժրողով ու հետեւողականութեամբ : Կայ հայրենական ու սփիւռքային իրականութիւնը : Հայրենական իր հերթին զօտիւնրի է բաժանուած ու ենթակայ իւրայայտուելի վարչակարգի : Սփիւռքայինն աւելի՛ մեծ զօտիւնրից է կազմուած եւ աչքի է ընկնում իր յայտարդէտութեամբ : Սրանք կենսական իրողութիւններ են, որոնք անտեսանելի չեն : Թէև ըստ այդմ կողմնորոշուելու հնարաւորութիւններն ու զործնական մօտեցումները տարբեր են, սկզբունքը նոյնն է՝ ազգային ու համամարդկային արժէքների առնչութիւնը ճշդելու հարցում : Բոլոր դէպքերում, անիմաստ է մտածել ազգային արժէքները այսպէս կուտած համամարդկային արժէքներին զոհելու օրինաւորութեան մասին : Հզօրները կարող են ճնշել ազգերին ու ոչնչացնել նրանց մշակութային արժէքները, բայց զրանով չի լուծուի մշակոյթի հարցը : Քանի կան ազգեր՝ կան նաեւ ազգային մշակոյթիներ ու զրահանութիւններ : Իսկ ազգերն ինքնին չեն կարող չլինել ինչպէս էլ որ կուտուելու լինեն :

Այս կապակցութեամբ ուելորդ չէ յիշատակել մի պարագայ, որը վերաբերում է խորհրդային ու, առաջին հերթին, հայաստանեան իրականութեանը: 1978 թուի Նոյեմբերի 22ից 25ը Երևանում տեղի ունեցաւ համամիութենական մակարդակի մի դիտական համաժողով, միւս հանրապետութիւններէջ Եկած գրականագէտներէ մասնակցութեամբ: Համաժողովի նիւթն էր՝ «Անհատի կոնցեպցիան գարգացած սոցիալիզմի գրականութեան մէջ»: Տուեալ դէպքում կարելորդ ամբողջ համաժողովը կամ նրա նիւթը չէ, այլ՝ դրականութեան մէջ ազգային իրականութիւնը ներկայացնելու հարցի նկատմամբ արտայայտուած վկայութիւնը:

Համաժողովի նախօրեակին՝ Նոյեմբերի 17ին, «Գլխական քերթ»ում տպուած էդուարդ Ջրաշէանի «Ժամանակը եւ անհատը» յօդուածում, մեզ հետաքրքրող հարցի շուրջ ասուած է հետեւեալը. «Շատ խնդիրներ եւ կապուած նաեւ ազգային բնաւորութեան մարմնաւորման հետ: Ինչհետեւ էլ մեր դարաշրջանում տեղի ունենայ ազգային խիստ պատուարներէ վերացման եւ ազգերի հոգեւոր մերձեցման պրոցես, այնուամենայնիւ, դա չի նշանակուի ազգային իւրայատկութիւնների, հետեւաբար նաեւ գրական կերպարի ազգային բովանդակութեան վերացում: Ամբողջ դժուարութիւնն այն է, որ այժմ ազգային բնաւորութիւնը հանդէս է գալիս աւելի բարդ խաչաւորումների համակարգում, որոնք յանախ ձեւափոխում են նրա անուղական գծերը, բայց չեն վերացնում այն: Ահա թէ ինչու անհատի կոնցեպցիայի ֆնուիթիւնը ներառում է նաեւ նոր հասարակութեան մարդու ազգային դրսեւորումների բազմազանութեան հարցը: Երեւանեան կոնֆերանսի գեկուցումների մի զգալի մասը նուիրուած է հենց այդ հարցին, եւ մենք հնարաւորութիւն կ'ունենանք համոզուելու, թէ ինչպիսի՞ հարուստ ազգային երանգներ ունի ժամանակակից մարդու գեղարուեստական պատկերը»:

Իսկ համաժողովի ասարտից յետոյ նոյն «Գրական Թերթ»ի Դեկտեմբերի 1ի համարում տպուած ամփոփազրում ասուած է, թէ՛ «Սոցիալիստական հասարակարգում ժողովուրդների փոխադարձ մերձեցման, ազգային մշակոյթների փոխհարստացման ընդհանուր պրոցեսում էական նշանակութիւն է ստանում ազգային առանձնայատկութիւնների բացայայտման պրոբլէմը»:

Այնուհետեւ, ասուած է հետեւեալը. «Բազմազգ սոցիալիստական մշակոյթի գարգացման ներկայ փուլում, — իր էլոյթում ասաց Գ. Լոմիճէն, — չափազանց կարեւոր է ճկուն մտեցումը: Վերջին ժամանակներս որոշ գիտական աշխատութիւններում արտայայտուած է այն տեսակէտը, թէ բոլոր ժողովուրդների ազգային-հասարակական գարգացման ընթացքը տանում է դէպի համամարդկային մէկ մշակոյթի եւ մէկ լեզուի ստեղծում, թէ՛ սոցիալիստական երկրների ազգային մշակոյթների գարգացումը ներկայ փուլում յետ է մնում նրանց սոցիալ-տնտեսական գարգացումից: Այսպիսի հայեացքը ժողովուրդների պատմական գարգացման վերաբերեալ լիովին սխալ է, — նշեց գրականագէտը, — եւ հակասում է ժողովուրդների ու նրանց ազգային մշակոյթների ազատ-ստեղծագործական գարգացման տրամաբանութեանը»:

Հայաստանեան գրականագէտ Ջ. Աւետիսեանի զեկուցման կապակցութեամբ, ամփոփազրում նշուած է. «Ժամանակակից գրականութեան մէջ ազգային կեցութեան, խառնուածքի եւ հոգեբանութեան խնդիրը դեռեւս կարօտ

է խորքային լուսաբանման: ...Որպէս հայ մարդու կերպարի ազգային առանձնատեսակ կողմեր՝ քննադատը նշեց անցեալի սուր զգացողութիւնը, յիշողութեան մեծ դերը գիտակցութեան հասփի մէջ, ընդհանուր ազգային միասնութեան հոգեբանական զգացողութիւնը»:

Այս կցկտուր արտայայտութիւնները վկայում են, որ նոյնիսկ խորհրդայինի նման մի երկրում, որանց իշխանութիւնը իր տրամադրութեան ասկզմանուղ բոլոր միջոցներով անխնայ պայքարում է ապրող ազգերի ու նրանց մշակութային ինքնավարութեան դէմ, չգիտես ինչ ստեղծելու նպատակով, — ազգային իրականութիւնից բխող հրամայականները օրակարգից չեն հանում: Շարունակում է ճնշումը: Շարունակում է հակազդեցութիւնը՝ ժողովրդական կեանքի ինքնարուխ միջոցներով, յամառութեամբ, հնարքներով, եւայլնով:

Եթէ այգպէս է կացութիւնը պետական անողոք ճնշման պայմաններում, աւելորդ կը լինի տարակուսել, թէ ի՞նչ տեղ ու հեռանկար ունի ազգային իրականութիւնը ազատութեան եւ անկաշկանդ ազգային գոյութեան պայմաններում: Ազգային իրականութիւնը անվաւեր չի դառնում նրանից, երբ այլեւայլ «յառաջադէմ» ուժեր կամ անհող երազողներ զբան հակադրում են «համամարդկային» իրականութիւնը, զբանից բխող ժխտական հետեւութիւններով: Բայց այդ իրականութիւնը այս կամ այն չափով վտանգւում է, երբ որոշ կարգի պետական կոպիտ ուժի կռթնած այլեւայլ բարբարոս տարրեր ջանում են խափանել ազգային գոյութեան կռուանները, առհասարակ, առաջ քաշելով նաեւ կարծեցեալ «համամարդկային» նպատակներ: Այդ գէպքում, ազգերը գտնուում են արտաքին ու ներքին միաժամանակեայ ճնշման ներքոյ, դրսից ճգմուելու եւ սահմանափակուելու, իսկ ներսից էլ քայքայուելու վիճակում: Դրանով հանդերձ, ինչպէս վկայում է կեանքի փորձը, նոյնիսկ նրման օրհասական պայմաններում ազգերը սովորաբար նախընտրում են ազգմնալ, քան «համամարդկային» փետուրներով ներկայացող բարբարոս իշխանութիւնների կեր դառնալ:

ԼԵՒՈՆ ՄԿՐՏՉԵԱՆ

Հ. Ս Ա Հ Ե Ա Ն

Տ Ո Ղ Ը, Բ Ա Ռ Ը, Տ Ա Ռ Ը

Քանի մը էջ անդին, ընթերցողը պիտի դանձ վահան Թէքէեանի հայաստանեան հրատարակութիւններուն սպա- դրական անփութութեանց անդրադարձող դրութիւն մը, որմէ առաջ, ջերմօրէն պիտի յանձնարարէինք կարգաւ Հա- մօ Սահեանի սոյն խորհրդածութիւնը, ուր դրսեւորուած պատասխանատուութեան ողին լաւապէս կը բացայայտէ մեր նշմարին շարժառիթը:

Օժտեալներուն համար դաժան լուծ է ստեղծադործա- կան արարքը եւ մարդիկ արդար չեն ըլլար, եթէ սրբազին նոյն պատասխանատուութեամբ չմտնենան տանջալից եր- կունքներու դին անոնց աողին, բարին ու աստին:

Համօ Սահեանի դրութիւնը լոյս անսաւ աստեամեակ մը առաջ, «Ֆրակամ քերթ» (1969, Թիւ 13) մէջ: Մեր ար- տադրածը ամբողջին ատալին մասն է:

Ստեղծադործական տառապանքը մարդու մեծագոյն երջանկութիւնն է: Մարդը բնութեան ստեղծադործութիւններից միակն է, որին տրուած է ստեղ- ծադործելու յատկութիւնն ու հրճուանքը:

Ստեղծադործական պրոցեսն աւելի բարդ երեւոյթ է, քան պատկերա- ցընում է ընթերցողներին մի մասը:

Ընթերցողները եւ պարբերականների խմբագրութիւնները յաճախ են հետաքրքրուում, թէ է՞նչ են անում, ինչո՞վ կարող են իրենց ուրախացնել դրողները:

«Դ՞նչի վրայ էք աշխատում»: Ամէն անգամ, երբ այս հարցով դիմում են ինձ, քիչ է մնում վերցնեմ ու ասեմ՝ իմ եւ աշխարհի փոխյարաբերու- թեան, իմ եւ ժամանակի կռուի ու հաշտութեան, իմ եւ բնութեան կապի, վաղանցաւորի ու յաւիտենութեան աղբրի վրայ... Յուշն ու երազանքը ծանր ու թեթեւ անելու, ուրիշներին՝ իմ եւ ինձ ուրիշների մէջ փնտռելու, սիրտս ու միտքս մի յարկի ասկ դրանցելու, կորցրածս դտնելու եւ դտածս բաժանե- լու, անհնարինը յաղթահարելու, ինձ իրագործելու եւ իմ գոյութիւնն ար- դարանալու վրայ...»

Այնքա՛ն բան կայ անելու, որ մարդ չի իմանում որն անի, որը թող- նի: Տարիքս բաւականաչափ ծանրացել է, բայց պոեզիան օձիքս բաց չի թող- նում: Երեւի դա իմ վերջին մեղքն է, որ պիտի քաշեմ մինչեւ օրերիս վախ- ճանը:

Պատահում է, ամիսներով չեմ գրում, եւ դարձեալ նա ինձանից ձեռ չի քաշում: Հետապնդում է ամէն քայլափոխիս: Միշտ էլ մի յղացում, մի պատկեր, մի տող, մի բառ, երբեմն մինչեւ անգամ մի տառ մտնում է գը-

լուրիս ու ինձ հանգիստ չի տալիս: Երբ կարողանում եմ չզրեւ, չեմ գրում: Եւ ցաւում, որ այդպէս է: Սիրում եմ տողի ինքնեկութիւնը:

Հնարաւոր է, ի հարկէ, վերամարմնաւորել, գաննել ներշնչումը եւ մտածումները արուեստի ձեւ տալ: Բայց դա գերասաններին է յատուկ: Բանաստեղծին ներշնչանքը պիտի գտնի: Առանց ներշնչման (որ ուրիշ բան չէ, քան աշխատանքային տարմադրութիւն), առանց մտասեւեմման ու քնարական շրկացման, միայն փորձառութեան ուժով գրածը կարող է լաւ երեւալ, բայց, միեւնոյնն է, դա խարուսիկ կը լինի: Տարբալուծելիս, միտքը մի կողմ կը թռչի, զգացումը մի ուրիշ կողմ, յղացումը կը դնայ երրորդ ուղղութեամբ, պատկերը՝ շորքորդ, դադափարը՝ հինդերորդ, ձեւը՝ վեցերորդ, վարպետութիւնը՝ եօթերորդ...

Բայց խակական քանաստեղծութիւնը չի տարբալուծուում, նա միակը-տուր է, միակուտ, ներդաշնակ: Տեղին է ասել նաեւ, որ բանաստեղծութիւնն ինքը զեղեցկութիւնն է, եւ աւելորդ զեղեցկարանութիւնը միայն խախտում է նրա ներդաշնակութիւնը, այլանդակում է նրան: Բանաստեղծութիւնն ինքը մի ամբողջական պատկեր է, եւ աւելորդ պատկերները միայն ծաղկաւոր կարկատաններն ասպարոտութիւն են թողնում:

Երբ առկայ են ներշնչումն ու քնարական շրկացումը, հասնում եմ առաւելագոյն մտասեւեմման, որից յետոյ դալիս է այն երջանիկ սահմանափակութիւնը, երբ մոռանում եմ աշխարհի բոլոր բանաստեղծներին ու բանաստեղծութիւնները, մոռանում եմ, որ բանաստեղծութիւն եմ գրում, վըստահելով իմ ներբմբռնողութեանը, չեմ վախենում նոյնիսկ ամենահասարակ եւ ամենաղործածական դարձուածքներից, թւում է, թէ՛ դրանք նորութիւններ են, եւ առաջինը են եմ ստեղծում...

Բայց բանաստեղծութեան մէջ կայ մի ծայրայեղ պարզութիւն, որից յետոյ դալիս է պարզունակութիւնը, այսինքն՝ արուեստի մահը: Այստեղ է, որ արթուն պիտի լինի բանաստեղծի սահմանապահ ճարտարութիւնը: Այդ ճարտարութիւնը պիտի որոշի սահմանը եւ վտանգը կանխի:

Ռոլորովին դադանապահ չլինելով, ստեղծագործական ծրագրերիս զաղտնիքը մատնելու սովորութիւն չունեմ, որովհետեւ ես էլ գլուխ չեմ հանում նրանցից: Լինում են սպասուած եւ անակնկալ յղացումներ, թերեւս երկրորդներն աւելի շատ են լինում: Աւելի հեշտ չէ՞ խօսել արդէն իրագործւած ծրագրերի մասին...

«Քարափնրի» երգը յետոյ գրել եմ այնքան քանաստեղծութիւններ, որ կարող եմ կազմել մի նոր գիրք: Բայց այդ գիրքը հրատարակելու մասին տակաւին չաղ է մտածել, որովհետեւ նախ՝ ինձ թւում է, թէ՛ էլքարէն չեմ ձեւադատուել «Քարափնրի» ձողական ուժից, եւ երկրորդ՝ պատահում է, որ ամիսներ յետոյ կարդում ես ձեռագրերը եւ ինքը քեզինց ամաչում: Պատահում է, փոխում ես մի տող, մի բառ, մի տառ, եւ հիմնովին փոխում է բանաստեղծութեան շէնքն ու շնորհքը, յաճախ նաեւ՝ ամբողջ բովանդակութիւնը: Օրինակները շատ են, բայց ես կը բերեմ երեքը:

Տարիներ առաջ մի բանաստեղծութեան մէջ գրել էի այսպիսի տող.
— Դու իմձ մերել չես կարող մեղքերիս համար:

Հետագայում, երբ գիրք էի կազմում, կարդացի այդ տողը եւ զարմացայ... Աստուած իմ, ինչպիսի տախկութիւն, ինչպիսի պարզունակութիւն: Արձանագրութիւն սովորական մի փաստի, որի համար ո՛չ միայն բողոքելու հիմք չկայ, այլեւ յիշատակելն անգամ աւելորդ է: Բուրբ ներկայացնողն այստեղ ներկայանում է բաւական թոյլ ու միամիտ քնաւորութեամբ: Հար-

կաւոր էր ոտանակորը թողնել մի կողմ: Բայց յանկարծ յայսնուեց ինքը՝ նորին մեծութիւն յատնադործութիւնը... Վերցրի դրիչը եւ ոչ աւել, ոչ պակաս «ս» առաւ դարձրի «ք»: Տողն ստացաւ այսպիսի կերպարանք:

— Դու իմն մերել չես կարող մեղքերիդ համար...

Բարբոտիկն փոխուեց ամբողջ բանաստեղծութեան բովանդակութիւնը, փոխուեցին բնակորութիւնները: Մեղադրուածը թօթափեց իր չգործած մեղքերը եւ միանդամայն արդարացի կերպով մեղադրեց դիմացինին կրկնակի յանցանքի մէջ: Դիմացինը դարձաւ թոյլ ու չար բնակորութիւն, իսկ ինքը՝ նախկին թոյլը, որ իր վրայ էր վերցնում ինչ-որ մեղքեր եւ ներում էր խընդրում ըուն մեղակորից, չիմա ուժեղ բնակորութիւն է: Այստեղ արդէն փաստի արձանագրութիւնն չէ, այլ մի սուր եւ արտակարգ վիճակից ելք փնտռելու փորձ: Այսպիսով մի տառը լուսաւորեց, սրեց, խորացրեց, տպաւորիչ դարձրեց ամբողջ բանաստեղծութեան դաղափարը...

Երկրորդ օրինակը. դարձեալ գրեթէ էի կազմում, կարդում էի ձեռագրերս: Եւ յանկարծ.

— Ծովն էր, գիշերն էր, ես էի եւ դու,

Եւ չորս բալարը լուսիւն էր քար...

Մարմնովս սարսուռ է անցնում: Երեւի հենց այդպիսի սարսուռ է ըզգում ձին, երբ նրա կաշուին նստում է աներես ճանճը: Առաջին տողում արդէն ամէն ինչ ասուած է: Երկրորդ տողը կամ պիտի չլինի, կամ աւելի կռնկրտացնի տուեալ պահի զգացումը: Ի՞նչ գործ ունի այստեղ քար լուսիւնը, մա՛նաւանդ քար մակդիրը, որ իրեն բուսական մաշել է լուսիւնն հարեւանութեամբ: Եւ կարող է, արդեօք, «չորս բալար» ունենալ անսահման դիւշերը, որը մեր քառեակի երկրորդ անձն է... Եւ յանկարծ իրեն-իրեն գալիս է այս տողը.

Չարս հոգով էիմք, էլ ոչ ոք չկար:

«Քար լուսիւնը» չբացաւ: Ծովն ու գիշերը դարձան հողիներ, այսինքն՝ լրիւ մարդկայնացան:

Ծովն էր, գիշերն էր, ես էի եւ դու,

Չարս հոգով էիմք, էլ ոչ ոք չկար...

Ձգացմունքը դարձաւ կերպար, կերպարների միասնութիւն, համատարած մտերմութիւն...

Եւ երրորդ օրինակը.

Ես գրել եմ.

Արդէն բամ չի մնում

Երագներին հարուստ պաշարներից, —

Մէկն էլ դա է վշտին

Պատճառներից...

Գրաչարը երրորդ տողը շարել է այսպէս.

Մէկն էլ դա է վշտին պատճառներից...

Երջանիկ պատահականութեամբ դուրս թուած «ն» թարմացրել է բոլոր բառերը եւ նոր իմաստ է տուել նրանց: Կարիք կա՞յ մեկնաբանութեան: Ուրեմն, նախ քան գիրք կազմելը, ես պիտի հեռանամ գրուած բանաստեղծութեանս ընդհանրից, որպէսզի, ինչպէս ասում են, «գամն առնելուց յետոյ նորից մօտենամ, ծանրութեթեւ անեմ ամէն մի տողը, բառը, տառը...»:

ՎԻՐԱԻՈՐԱԿԱՆ ՎԵՐՉՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ...

Եւ քերթուածները, որոնց մէն մի բառին ու վանկին վրայ ես սիրտ հասցուցի՝ գուցէ անկիւն մը պակնիմ Առանց որ մէկը դռնէ իրենց բուն շեշտն անոնց վրայ...

Վ. Թէֆէեան

«Մէն մի բառին ու վանկին» վրայ սիրտ հասցնելու Թէֆէեանի խոստովանութիւնը բանաստեղծական քմահաճ արտայայտութիւն մը չէ, այլ՝ առ այդ ապրուած խոր տառապանքի մը գրսեւորումը:

Բանաստեղծին մօտիկ անձերը, կենսազիրներն ու քննադատները յաճախ նիւթ դարձուցած են անոր ծայրագոյն բժականգրութիւնը, զոր սովոր էր կիրարկել իւրաքանչիւր բանաստեղծութեան առիթով, ասպարէզին վրայ ոտք դրած օրէն մինչեւ վերջին շունչը:

Վերի բանաստեղծութիւնը ուղղուած է յայտնապէս սփեւաբանական, անո՛ր՝ որ պայմաններու բերումով սկսած էր հեռանալ մեր արժէքներէն եւ, նոյլին բանիւ, խոցուած հոգիներուն կը պատճառէր նոր ցաւ մը, «ցաւերէն ետք անհամար»:

Այն ատեն, բանաստեղծութեան զրուման օրերուն, 1942ին, Վահան Թէֆէեան կրնա՞ր մաքէն անցընել միթէ, որ օր մը հայրենիքի մէջ եւս կըրնայ նոյնը պատահիլ իրեն, եւ այն զերթուածները, որոնց «մէն մի բառին ու վանկին» վրայ սիրտ հասցուցած էր ինք, հրապարակ հանուին, առանց որ մարդիկ փոյթ ընեն զնեւ «իրենց բուն շեշտն անոնց վրայ»:

Ամփոփենք պատմութիւնը.—

Վահան Թէֆէեան երրորդ անգամն է, որ կը տպագրուի հայրենիքի մէջ, էջերու եւ զերթուածներու տարրեր գումարներով:

Առաջին անգամ 1958ին, 498 էջ, 373 ինքնագիր զերթուած, 45 թարգմանութիւն, խմբագիրներ՝ Վաղարշակ Նորենց եւ Սողոմոն Տարօնցի, վերըստուգող սրբագրիչ՝ Շ. Գրիգորեան, տպաքանակ՝ 10.000:

Երկրորդ անգամ 1970ին, 180 էջ, 242 ինքնագիր զերթուած, կազմող՝ Լ. Վ. Միրիջանեան, խմբագիր՝ Վ. Տ. Տաքեսեան, վերստուգող սրբագրիչ՝ Վ. Ա. Աւագեան, տպաքանակ՝ 10.000:

Երրորդ անգամ 1978ին, 214 էջ, 148 ինքնագիր զերթուած, կազմեցին եւ խմբագրեցին՝ Վաղդէն Գաբրիէլեան եւ Ռազմիկ Տօնեան, վերստուգող սրբագրիչ՝ Բ. Վ. Բարսեղեան, տպաքանակ՝ 10.000:

Նորենց եւ Տարօնցի առաջին հատորին կցած են յառաջարան մը եւ վերջաւորութեան տեղաւորած են մատենագիտական տեղեկութիւններ եւ բառարան:

Երկրորդ հատորը ո՛չ յառաջարան ունի եւ ոչ ալ մատենագիտական բաժին:

Իսկ երրորդը կազմուած է համարեա՛ ստալինին օրինակով, ունի յա-

նաջարան մը, Վահանգն Դաւթեանի ստորագրութեամբ եւ մէկ էջնոց մատու- նագիրտական ծանօթութիւն մը:

Երբորդը՝ ամէնէն խնամուածը:

Իսկ երկրորդը ամէնէն անխղճամիտը, չհաշուած անճաշակութեան փաստ մը ըլլալու տպագրական իր երեսը, անհեթեթ ձեւաւորումն ու ան- յարգալիւր խնդումը:

Բայց Թէքէեանի բանաստեղծութեանց բառերու քանակին, բառերուն իմաստին ու հոլովներուն հաւատարիմ մնալու իմաստով՝ երեքն ալ, ցաւօք, անխոցելի չեն: Հարկենիքին մէջ Թէքէեան հրատարակելու փաստը ըստ հա- մարեցին մարդիկ ու լռեցին առաջինին առիթով, երկրորդով ոչ ոք սիրտ ու- նեցաւ զբաղելու, եւ որովհետեւ տպագրական խնամքի տեսակէտէն երրորդն ալ շատ փայլուն պատկեր մը չի ներկայացներ, զբական խղճմտանքը կը ստի- պէ, որ միաթամանակ ուշադրութեան յանձնենք անփութութեան նոյն մեղքով երեք հատորներուն մէջ առաջացած բոլոր վրէպները: Այս ապերախտ պար- տակախութիւնը անոր համար մանաւանդ, որ կը վախնանք, սարսափեցի՛ր՝ օրէն կը վախնանք, որ մարդիկ, հոս թէ հոն, դարձեալ նոյն անփութութեամբ, Լ. Միրիջանեանի եւ Վ. Տաքեսեանի պէս կը մօտենան Թէքէեանին կամ նը- լիրագործուած ալ անուններու նուիրական բերքին, առանց սրբազին երկիւ- դածութեան, առանց կասկածելու, ստուգելու, վերստուգելու մեծ պատաս- խանատուութեանց:

Առանց չափազանցութեան մէջ մտնելու վախին, կրնանք ըսել, որ դա- սական հեղինակի մը վերհրատարակութեան առիթով ցուցաբերած Միլի- ջանեանի եւ Տաքեսեանի վերաբերումը աննախընթաց է մեր զբականութեան մէջ: Նորենցի եւ Տարօնցիի հատորէն զեղջուած շուրջ հարիւր յիսուն քեր- թըւածներուն փոխարէն, անոնք, երկրորդ հրատարակութեան խմբադրնե- ըը, ներս առած են հանրայայտ երկու քերթուած՝ «Եկեղեցիին հայկական» եւ «Բարձրացում»: Այս երկու քերթուածներուն էջ տրամադրելու արժանիքն զատ հատորը ո՛չ միայն աւելորդ հրատարակութեան մը տպաւորութիւնը կը ձգէ, այլեւ վիրաւորական է եւ Վահան Թէքէեանի համար, եւ Հայաստա- նի հրատարակչական հնարաւորութիւններուն հաշտոյն: Կրնար, թերեւ, հանդուրժելի ըլլար, եթէ ունենար Նորենցի եւ Տարօնցիի խմբագրութեամբ լոյս տեսած առաջին հատորին լեզուական վրէպները սրբազան ըլլալու չըք- մեղանքը: Կազմողն ու խմբագիրը մինչեւ իսկ բանաստեղծին լոյս ընծայած գործերը անգամ մը աչքէ անցընելու ձանձրոյթը յանձն չեն առած, այլ բա- ւարարուած են հայաստանեան առաջին հրատարակութեամբ, արտագրելով հոն թոյլ տրուած բոլոր անճշդութիւնները, աչք ու ականջ ծակող խորթու- թիւններուն մօտէն անխռով անցնելու ապշեցուցիչ խաղաղութեամբ:

Թէեւ ոչ նոյն համեմատութեամբ, անփութութեան նոյն մեղքը գոր- ծած են նաեւ երրորդ հատորին խմբագիրներ Վազգէն Գարբիէլեան եւ Ռազ- միկ Տօնեան:

Մատնանչենք նախ եւ հարկ եղած պարագային ջանանք սրբագրել ա- ռաջին եւ երկրորդ հրատարակութիւններուն ականբախ սխալները: Առանց է- ջերը նշելու, բաւարարուելով խորագիրներուն յիշատակութեամբ եւ վրէպ- ներուն ընդգծումով, պահելով, ի հարկէ, երկու հրատարակութիւններուն թուական կարգը՝ Ա. Բ.:

Արեւելահայերէնի մէջ, ի շարս շատ մը բառերու՝ նաեւ բուն բայար- մատը կ'ենթարկուի սղման եւ անանցման յատուկ ձեւերու, որոնք ի զօրու

չեն արեւմտահայերէնի պարագային : Թէ՛քէեանի խմբագիրները, սակայն, նկատի չեն առած այդ հանգամանքը ու բոլոր պատեհութիւններուն խոռոված են բանաստեղծին «քունը», տասնէ աւելի քերթուածներու մէջ : Մտոնանը-չենք բոլորը, որպէսզի պարզ ըլլայ, որ եղածը ընթացիկ վրեպակ չէ, այլ կամայականութեան հետեանք :

ԱՍՈՒՊՆԵՐ

Ա.— Ինչպէս քնի մէջ՝ լոյս աչքե՛ր անհող :

Բ.— Ինչպէս քնի մէջ՝ լոյս աչքեր անհող :

ԱՆՅԵԱԼՍ ԱՆՁԱՓ ՀԵՌԱՅԱԻ

Ա.— Մոմք մարէ, դժբախտ մարդ, եւ նետուէ վիհը քընիմ... .

Բ.— Մոմք, մարէ, դժբախտ մարդ, եւ նետուէ վիհը քնիմ... .

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՄԱՀՈՒԱՆ

Ա.— Ես կը սպասեմ քեզ ինչպէս քընիմ, ամէն երեկոյ... .

Բ.— Ես կը սպասեմ քեզ ինչպէս քնիմ, ամէն երեկոյ... .

ԿՈՒՒԻ ԵՐԹ

Ա.— Եւ խոր քընի մէջ նիրհող ուժերուս պարն այս իրիկուն

Բ.— Եւ խոր քնի մէջ նիրհող ուժերուս պարն այս իրիկուն

ՔԱՌԱՍՆԱՄ ԵԱԿ — Գ.

Ա.— Մեզ կը սպասէ՛, կը խորհինք, քընի հանդիսար երկար :

Բ.— Մեզ կը սպասէ՛, կը խորհինք, քնի հանդիսար երկար :

ՔԱՌԱՍՆԱՄ ԵԱԿ — Գ.

Ա.— Քառասունէն վերջ՝ այսօր, մերթ կը սոսկանք այդ քնեմ,

Բ.— Քառասունէն վերջ՝ այսօր, մերթ կը սոսկանք այդ քնեմ,

ՁԻՒՆԸ

Ա.— Արթնութեան մէջ ու քընի քեզմէ եկած էր ինծի... .

Բ.— Արթնութեան մէջ ու քնի քեզմէ եկած էր ինծի... .

Եթէ կազմող Լ. Միրիվանեան եւ խմբագիր Վ. Տաքեան շարունակէին Թէ՛քէեանի հայրենական առաջին հրատարակութենէն քաղուած քներ կատարել, անպայման պիտի հանդիպէին ու նաեւ արտադրէին հետեւեալ քնիները .

ԵՐԱԶՆԵՐ

Ա.— Որ քընիս մէջ իսկ կու դայ իր սփոփանքն ինձ տալու... .

ԿՐՆԱՅԻ

Ա.— Հեշտավաստակ քընիդ վրայ անխոռով... .

ԵՐԱՋԻՆ ԾՆՈՒՆԴԸ

Ա.— Կատարգորէն կը մղուէր ընդմէջ քըմին, արթնութեան :

ՊԱՏԻԺԸ

Ա.— Երէկ դիշեր ես այսպէ՛ս մեղքը առի քըմիս մէջ

Հիմա քունէն դուրս դանք եւ փորձենք արթնութեան մէջ քալել պահ
մը.—

ՎԵՐՋԱՐԱՆ

Ա.— Ամէնէն ուշ արթնացող, ամէնէն շուտ քնացող,

Բ.— Ամէնէն ուշ արթնացող, ամէնէն շուտ քնացող,

Ու արթնալէ ետք, տեսնենք, թէ մարդիկ ինչպէս կը քալեն ու կ'երթան.

ՎԵՐԱԴԱՐՁ

Ա.— Օ՛, մինչեւ ո՞ւր... եւ յողնութիւնը կրկին է

Աննպատակ քայլողին,

Բ.— Օ՛, մինչեւ ո՞ւր... եւ յողնութիւնը կրկին է

Աննպատակ քայլողին,

ՓԱՌՔԸ

Ա.— Եւ քայլեցիր երկար, երկար,

Բ.— Եւ քայլեցիր երկար, երկար,

Այս նոյն «Փառք»ը ունի նաև երկրորդ շուք մը.

Ա.— Ու նայեցիք պահ մ'իրարու...

Բ.— Ու նայեցիք պահ մ'իրարու...

ՔՈՒ ԵԻՇԱՏԱԿԻ ԱՅՍ ԳԻՇԵՐ

Ա.— Ես կը դառնայ, ու հին տեղն ու հին դպրուանքը կ'ուզէ,

Բ.— Ես կը դառնայ, ու հին տեղն ու հին դպրուանքը կ'ուզէ,

Որքան մենք դիտենք, ու շաղկապ շունի հոս բանաստեղծութիւնը, այլ
ունի իր ստացական ածականը.

Ես կը դառնայ, իր հին տեղն ու հին դպրուանքը կ'ուզէ,

ԽԱԻԱՐԻ ՏԱՂԵՐ — Ե.

Ա.— Անըջախոհ կը նայիմ ու կ'ընկղմիմ թովանքին

Բ.— Անըջախոհ կը նայիմ ու կ'ընկղմիմ թովանքին

«Թովանքի՞ն» : Թէքէեանի՞ լեզուին վրայ :

ԽԱԻԱՐԻ ՏԱՂԵՐ — Ը.

- Ա.— Եւ ամէնուն մէջ անոնց՝ կտորտուանքնե՛ր հայելու ,
Անցելաշող կը տեսնեմ նախ ինքզինքս ու յետոյ՝
- Բ.— Եւ ամէնուն մէջ անոնց՝ կտորտուանքնե՛ր հայելու ,
Անցելաշող կը տեսնեմ նախ ինքզինքս ու յետոյ՝

Մենք մեր տրամադրութեան տակ չունինք թէ՛քէեանի ամրողական գործերը, բայց կը կարծենք, որ ընդդժուած բառը չի կրնար հայելու ըլլալ, տրամաբանութիւնն ու բանաստեղծութեան յանգային համակարգը կ'ըսեն, որ պէտք է հայելւոյ ըլլայ անիկա .

Եւ ամէնուն մէջ անոնց կտորտուանքնե՛ր հայելւոյ ,

ՀԱՆԸՄԸ

- Ա.— Ժանեկագարդ թեւէն դուրս կը բխի ձեռքը պզտիկ ,
- Բ.— Ժանեկագարդ թեւէն դուրս կը բխի ձեռքը պզտիկ ,

Ասկէ առաջ, ընթերցողին մտքին մէջ Հանըմին թեւը զարդարուած էր ժանեկաշորով մակդիրով : Վազգէն Գարրիէլեան եւ Ռազմիկ Տօնեան իրենք եւս պահած են ժանեկաշորը : Յայտնի չէ, թէ Նորենց եւ Տարօնցի ո՞ր հրատարակութեանն առած են ժանեկագարդը, գոր միւսնեբը, միւս թիւրիմացութեանց կարգին՝ կրկնած են առանց այլեւայլի :

ԱՅՍ ԻՐԻԿՈՒՆ ՎԵՐՍՏԻՆ

- Ա.— Որ քո շունչէդ ան շունչ առնէ եւ ապրի...
- Բ.— Որ քո շունչէդ ան շունչ առնէ եւ ապրի...

ՀԱՅ ԱԶԳԻՆ

- Ա.— Այս մասնիկներն ալ սրտի, որ ամէն օր հիւծուեցաւ
- Բ.— Այս մասնիկներն ալ սրտի, որ ամէն օր հիւծուեցաւ

Տողը կը բովանդակէ երկու խորթութիւն : Պէտք է ըլլայ՝
Այս մասնիկներն ալ սրտի մ'որ ամէն օր հիւծեցաւ

ԱՂՕԹՔ՝ ՎԱՂՈՒԱՆ ՍԵՄԻՆ

- Ա.— Եւ դրոհի, որ հեռո՛ւն կը վարանի տակաւին :
- Բ.— Եւ դրոհի, որ հեռո՛ւն կը վարանի տակաւին :

ՃԻՂԸ՝

Եւ դրոհի մ'որ հեռո՛ւն կը վարանի տակաւին...

ՊԻՏԻ ԸՍԵՆՔ ԱՍՏՈՒԾՈՅ

- Ա.— Եւ թուրքերուն յատկացո՛ւր արքայութիւնը անբաւ...» :
- Բ.— Եւ թուրքերուն յատկացո՛ւր արքայութիւնը անբաւ...» :

Թէ՛քէեանի դործածած արքայութիւնը անորոշ չէ, դիմորոշ է, Աստուծոյ կը պատկանի եւ այդ պատկանելութիւնն է պատճառը, որ անր անար-

դար յանձանձուձին ուղղուած հեգնանքը կը սասանայ մասնաւոր ուժգնութիւն :
Եւ թորքերուն յատկացո՛ւր արքայութիւնդ անբաւ... » :

ԸՄՐՈՍՏՈՒԹԻՒՆ ՍՐԲԱԶԱՆ

Ա.— Զանոնք տաքցուր, բորբոքէ,
Ըրէ՛ հնոց, որուն մէջ

Բ.— Զանոնք տաքցուր, բորբոքէ
Ըրէ՛ հնոց, որուն մէջ

Կարգալ՝

Ըրէ՛ հնոց մ՛որուն մէջ

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Ա.— Բայց նորարուխ, իբր աղբիւր, որ կ'որոնէ իր ճամբան՝

Բ.— Բայց նորարուխ, իբր աղբիւր, որ կ'որոնէ իր ճամբան՝

Կարգալ կամ օր մը դրե՛լ ճիշդը՝

Բայց նորարուխ իբր աղբիւր մ՛որ կ'որոնէ իր ճամբան՝

ԽՕՄՔ ՄԵՌԵԼՈՑ

Ա.— Դձճն, ամէն երկնից տակ

Բ.— Ամէն ամէն երկնից տակ

Ամենեւին, ամենեւին երկնից, այլ՝ երկնի :

ԽԱՂԻ ՀԱՄԱՐ

Ա.— Խաղի համար թող բլլար, բայց անգամ մը գոնէ

Բ.— Խաղի համար թող բլլար, բայց անգամ մը գոնէ

Նախնական ակա՛նջն անգամ կը ղզայ, որ հնչական կաղութիւն մը կայ
տողին մէջ, պակաս բան մը, վանկ մը, ըղձական «Քոռո» մը, որ պիտի վերա-
կանդնէր խախտուած կառոյցը :

Խաղի համար թող ըլլար, բայց Ք՝ո՛ւ անգամ մը գոնէ

ՍԵՐԸ

Ա.— Թուլութեան՝ յաջորդող իմ եռանդիս խօլական,

Բ.— Թուլութեան՝ յաջորդող իմ եռանդիս խօլական,

Վ. Թէճէեանի ամբողջական երկերու Գ. հատորին մէջ այս բանաստեղ-
ծութեան թուլութիւնը տարբեր ձեւ մը ունի .

Թուլութեան՝ յաջորդող իմ եռանդիս խօլական :

ԳԻՏԵՄ ԳԱՂՏՆԻՔ Մ՛ԱՀԱԻՈՐ

Ա.— Ուրիշ ոչինչ, այս միայն . եւ դրաման այս երկար,

Բ.— Ուրիշ ոչինչ, այս միայն . եւ դրաման այս երկար,

Այս դրաման Թէճէեանի տրոսմը չէ՛ դարձեալ : Մէկը սխալ արտագրած

է բառը եւ միւսը պարզօրէն սխալը կրկնած է դարձեալ:

Թէքէեանի տողը՝

Ուրիշ ոչինչ, այս միայն. եւ այս տրուամբ՝ երկար,

Աւելի մեծ է ողբերգութիւնը շատ աւելի հանրամանօթ քերթուածի մը՝ «Ահաւոր բան մը այնտեղ» անուն բանաստեղծութեան դրամային:

ԱՀԱՒՈՐ ԲԱՆ ՄԸ ԱՅՆՏԵՆԿ...

Ա.— Դժոխային դրաման այս ինչպէ՞ս կրնայ պատմուիլ...

Բ.— Դժոխային դրաման այս ինչպէ՞ս կրնայ պատմուիլ...

Բանաստեղծութիւնը, ինչպէս կը տեսնէք, ահաւոր բանի մը մասին բան մը պատմելէ առաջ, ի՛նք դարձած է ահաւոր բան մը, ընդամէնը մէկ բառի այլասերումով, անգամ մը խախտուած եւ երկրորդ անգամ խախտուածը նոյնութեամբ արտադրող խմբադիրներուն անբարեխղճութեամբ:

Ահա Թէքէեանի տողին ճշգրիտ կառույցը.

Դրժոխային այս տրուամբ ի՛նչպէս կրնայ պատմուիլ...

Ասիկա երկրորդ տողն է «Ահաւոր բան մը այնտեղ» անուն բանաստեղծութեան, որուն առաջին տողը եւս տեղ մը հանդիսւած է նոյնանման ահաւոր վերաբերումի մը, դա՛րձեալ հայրենի երկինքին տակ, «Սովետական գրականութիւն» ամսադիրի անցեալ տարուան Նոյեմբերի համարին մէջ (135), Թէքէեանի մասին լոյս ընծայած Սուրէն Աղաբաբեանի գրութեան էջերուն: Հետաքրքրական է քննադատին զնահատանքը, Թէքէեանի կարգ մը բանաստեղծութիւններուն մասին.

... Որոնց մէջ են նաեւ հայ բանաստեղծութեան դարաւոր մատնանիմ արժանի «Ահաւոր բան մը այնտեղ...» եւ «Սնդակնք, եղբայրներ» մեղադրական քղթերը:

«Կարծես ի մի հաւաքելով հոգեվարքի մէջ գտնուող բովանդակ հայութեան ցասման վերջին պայարները, բանաստեղծը աշխարհի երեսին է նետում հետունայ վկայութիւնը.

«Ահաւոր բան մը կը կատարուի այնտեղ մութին մէջ...»

Ասիկա եղա՞ւ հիմա:

Պօրհուրդ ու համ մնա՞ց այս տողերուն ետին:

Նման կառույցով տողեր բովանդակող բանաստեղծութիւն մը, ի հարկէ, ո՛չ «հայ բանաստեղծութեան դարաւոր մատնանին արժանի» կրնայ համարուիլ եւ ոչ ալ վկայութիւն դառնալ: Վստահաբար, քննադատը տակնուվրայ եղած մէջբերումին վրայ չէ կազմած իր կարծիքը, այլ՝ ճիշդին վրայ, զոր, հաւանաբար, խախտած են ամսադիրին խմբադիրները:

Ճիշդը՝

Ահաւոր բան մը այնտեղ կը կատարուի մութին մէջ...

Մէկ բառի տեղափոխութեամբ խեղճուկրակ յօդուածագիրի մը լեզուն յիշեցնող բանի մը վերածուած է տողը, որուն կառույցին խախտման հետ չըքացած է ամէն բան, պարզապէս բառերով հանդիսադրած վայելչութիւնն ու նախօք խոսքուցած բովանդակ յուզումը:

Բայց իբրպէս ահաւոր բան է նման խախտմաներով բանաստեղծութեան մեծարեւու անփութութիւնը:

ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Այս բանաստեղծութեան մէջ շատ են բառերու փոփոխութիւնները, բայց ուշադրաւ է վերջին տունին պարզած պատկերը.

Կը սիրեմք քեզ արդ, Հայրենի՛ք, Շղթա՛յ,
Որ ըմբաստացման կը մղես գեղ...
Մեր միսերուն մէջ, մեր վզին շուրջն ես,
Եւ ամէն շարժում, գոր կ'ընենք հիմա՝
Մեզ կը գալարէ ցաւերով անգութ...
Բայց պիտի սիրեմք հետքն ալ վերքերով,
Նրբ պիտի ըլլաս մանակ մի ծաղկեայ...
Կը սիրեմք քեզ արդ, հայրենի՛ք, Շղթա՛յ...

Հայ գրականութեան դասագիրքերուն եւ թէքէեանի հատընտիրներէն կազմուած հաւաքածոներուն մէջ ինչորոշ առարկայ բանաստեղծութեան այս վերջին տունին առաջին տողը եւ վերջին երկու տողերը կազմուած են դադափարական տարբեր հէնքի մը վրայ եւ տարբեր լեզուով: Թէքէեանի հաստատանեան երկրորդ հրատարակութիւնը կազմողին եւ խմբագրողին կարելի չէ հարցումներ ընել այս ուղղութեամբ: Անոնք, դոնէ այս պարագային, պատասխանատուութեամբ գործի ձեռնարկող մարզեր չեն: Բայց Նորենց եւ Տարօնցի իրե՛նք ո՞ր աղբիւրէն առած են արգեսք այս տարբերակը:

Վազգէն Գարբեէլեան եւ Ռազմիկ Տօնեան իրենց խմբագրած հատորին մէջ յիշեալ տողերը սպազրած են մեզի ծանօթ դադափարներով ու պատկերներով.

Կը սիրեմք քեզ արդ, գերութեան շղթայ,
.....
Այն օրն ուր ըլլաս դուն կապ մը ծաղկեայ...
Կը սիրեմք քեզ արդ, գերութեան շղթայ...

Տարբերութիւնը պատիկ չէ:

Երկրորդ հրատարակութիւնը կազմող Լ. Միրիջանեան եւ խմբագրող Վ. Տաքեանեան երբեմն սխալ արտագրած են Նորենցի եւ Տարօնցի խմբագրած հատորին նաեւ ճիշդ բառերը: Քանի մը օրինակները—

ԽԱԻԱՐԻ ՏԱՂԵՐ — Է.

- Ա.— Տէ՛ս, թէ ինչպէս անցած դացած քայլերուդ,
- Բ.— Տէ՛ս, թէ ինչպէս անցած—գնացած քայլերուդ,

ԱՌԻԹՆԵՐ — Ա.

- Ա.— Եթերային ու մաքուր մերթ համրոյր մը ներելի,
- Բ.— Նրքային ու մաքուր մերթ համրոյր մը ներելի,

ՋՈՒԱՐԹՆՈՅ ՏԱՀԱՐԻՆ ՄԻՋ

- Ա.— Եւ հաւատքով մը ամուր ու շրթներով ալ աննենք՝
- Բ.— Եւ հաւատքով մը ամուր շրթներով ալ աննենք՝

Ինչպէս կը տեսնէք, շողկապին (աւ) անկուժը ո՛չ միայն կը կաղացնէ տողը, այլեւ՝ չփոթահար կը դարձնէ ամուր մակդերը:

Օ՛ր, եթէ ՍԵՐԸ ԶԸԼԼԱՐ

- Ա.— ... Կը շարժի դէզը անոնց հիմա հովէն կարօտին,
- Բ.— ... Կը շարժի դէզը անոնց հիմա հովին կարօտին,

ՍԵՐԸ

- Ա.— Աստուածութեանը ներքոյ ընդերքներէն կը ծծեն
Եւ որով դուն, ո՛վ վատնում, ծիծաղաձայն կը լեցուիս :
- Բ.— Աստուածութեանը ներքոյ ընդերքներէն կը ծծեն
Եւ որով դուն, ո՛վ վատնում, ծիծաղաձայն կը լցուիս :

Առաջին տողին ընկերքներէնը ընթացիկ վրիպակ է հարկաւ, բայց կը լցուիսը կ'իյնայ ոչ բծախնդիր վերաբերումի նոյն ծիրին մէջ :

ՅՈՅՍԵՐ, ՄԵՄ ՅՈՅՍԵՐ...

- Ա.— Մերին նոր լուսող աշխարհը ձեզմով,
- Բ.— Մերին նոր լուսացազ աշխարհը ձեզմով,

Լ. Միրիջանեան եւ Վ. Տաքեսեան իրենց խմբագրած հատորէն ներս առած են առաջին հրատարակութենէն «Եկեղեցիւն հայկապահայը, եւ անոր մէջ եւս չեն մուցած գինովցնել բառ մը.

Հաղորդուե՛լ անցեալին հաց ու գինով կենսառողջ :

Գինովը կարդալ՝ գինով :

Հոս կը վերջանայ երկրորդ հրատարակութեան մէջ մեր նկատած վըրէպներուն եւ թիւրիմացութիւններուն շարքը, եւ որովհետեւ կրնան թէքէեանի հայաստանեան առաջին հրատարակութիւնը միայն ձեռք ձգած ընթացողներ գտնուիլ, եւ անհաւանական չէ անկէ հատընտիրներ կազմելու տրամադրութենէն բնուող ուրիշ Միրիջանեաններու եւ ուրիշ Տաքեսեաններու գոյութիւնը, արագ մը կազմենք նաեւ առաջին հրատարակութեան մէջ նըկատուած միւս վրէպները եւս :

ԱԻԱԶԻՆ ՄԷՁ

Եւ որչափ վար իջնեմ, այնչափ մտիս մէջ
Միսիս :

ԺԱՄԱԿՐՈՒԹԻՒՆ

Կը տեսնի մէկն, որ կու դայ դէպ իրեն :
Կը տեսնէ :

ՄՏԱԾՈՒՄՍ

Լուս սէրերին ճակատադի՛րը դժնէ,
Սէրերուն :

ԿՐՆԱՅԻ

Հէտտալատակ քննիչ վրայ անխուով...
Բուննի :

ԵՐԱԶՆԵՐ

*Կատարգորէն կը մղուէր ընդմէջ քընիմ, արթնութեան...
Քուռիմ:*

ԽՈՍՏՈՒՄ

*Քո թարմութիւնդ ինծի խոստացուեցաւ լուելեայն,
Քու:*

ՀՐԱԺԵՇՏ

*Բացուի՛ր պիտի մեր միջեւ եւ սկսուի պիտի, օ՛հ,
Սկսի:*

ՄԵՆՈՒԹԻՒՆ

*Քիչ մը սփոփ, նեցուկ կամ յոյս ըլլալու...
Քիչ մը սփոփ:*

Ի՞ՆՉՊԷՍ ՏՂԱՅ ՄԸ ԿՐՆԱՑ

*Ձի դուն հասնող գիտութիւնն ու գիտութիւնն ես վսեմ:
Գթութիւնն:*

ՄԱՐԴ ԵՒ ԵՔԿԻՆՔ

*Ըսել կարծես ուղեւով՝ ունիմ ճիշդ քո քըմայքներդ:
Քու:*

ՇՈՃԻՆ

*Բայց երբեք չես ներշնչուեր, ո՛վ լեռնային կանաչ ծառ,
Այդքան զոհի յուշերով ոչ մէկ սուգի գաղափար.
Միշտ նոր ծիլեր կը ծընիս ու կ'օրրիս մէջն երկնքին...
Ներշնչեր:
Կ'օրրես:*

ՊԱՏԱՍԽԱՆ ՏՂՈՒ ՄԸ

*Քու քանսից քիչ մը լոյս կը մաղթէ միշտ, ո՛վ տղաս...:
Քանսիք:*

ՈՒՐԵՄՆ ԱՅՍՊԷՍ

*— Ոչ ոք ինձ չափ կրեց անգթութիւնը երկնի:
Ինծի:*

ՍԱՓՓՈՎ ԿՆՐԳԷ

*Ո՛վ իմ Տենչանքս, եղար տակաւ երդերուս
Ներշնչարանը Միակ:
Ներշնչարանը:*

ՍԱՓՓՈՎ Կ'ԵՐԳԷ

Օղակառոյց դղեակներու յաջորդել
Տուր խրճիթ մը, — անուշ
Ըլլայ սիրել...

Երկրորդ տողին մէջ պակաս բառ կայ նորէ՛ն, տեղական մակբայ մը՝
ուր. կարգալ՝
Տուր խրճիթ մը՝ ուր անուշ
Ըլլայ սիրել...

Հիմա դառնանք հայաստանեան երկրորդ հրատարակութեան եւ դարձ-
եալ սկսինք քունէն:

Արդարեւ,

Վահան Թէքէեանի հայաստանեան առաջին հրատարակութիւնը խմ-
բագրած Նորենցի եւ Տարօնցիի պէս, ու անոնց թոյլ տուած վրէպները երկ-
րորդ հրատարակութեան մէջ եղածին պէս կրկնած Միրիջնեանի եւ Տաքես-
եանի նման, կը թուի, թէ քան բայրամատին հոլովումներուն ու ածանցնե-
րուն հանդէպ մասնաւոր հակակրանք մը ունին նոյնպէս երրորդ հրատարա-
կութեան խմբագիրներ Վազգէն Գարբիէլեան եւ Ռազմիկ Տօնեան: Այս վեր-
ջիններն ալ, ու ամէնուրեք, Թէքէեանի քունին փակցուցած են արեւելահա-
յերէնին յատուկ մասնիկներ, կրկնելով բանաստեղծին լեզուին մէջ նախորդ
խմբագիրներուն մուծած անհաճոյ խրթութիւնները:

ՁԻԻՆԸ

Արթնութեան մէջ ու քնի քեզմէ եկած էր ինծի...:

ԵՐԱԶՆԵՐ

Որ քնիս մէջ իսկ կու դայ իր սիրտին քնն տալու...:

ԿՈՌԻԻ ԵՐԹ

Եւ խոր քնի մէջ ներհող ուժերուս պարն այս իրիկուն

ՊԱՏԻԺԸ

— Երէկ գիշեր ես այսպէս մեղքը առի քնի մէջ
Երրորդ հրատարակութեան մէջ, բարբախտաբար, չորս հաս են միայն,
չատ չեն քնի — քնիաները...

Արեւելահայերէնէ ներմուծուած ուրիշ ձեւեր.—

ՆՈՐԷՆ, Ո՛Վ ՍԷՐ

Դանդաղեցի, բայց ինչպէս կոյրերը, որ կը տեսնեն
Դանդաղեցայ:

ԵՐԱԶՆԵՐ

*Հասակ մը վեհ, գէմք մը նուրբ, աչքեր ունէր լուսով լի՝
Լոյսով :*

ԵՐԵՄՆԱՄԵԱԿ

*Շնամուկի սեւ կլափներ լայնարաց... :
Շնամուկի :*

ԻՄ ԳԻՒՂՍ

*Իր տղոցով գիւղս կ'աճէր ու կ'երգէր,
Տղոցմով :*

ԱՅՍ ԻՐԻԿՈՒՆ ՎԵՐՍՏԻՆ

*Որ քն շունչէդ ան շունչ առնէ ու ապրի...
Քու :*

ԼՈՒՍԱԻՈՐՁԻ ԿԱՆԹԵՂԸ

*Անկէ լցուած, անոր ջինջ արտասուքէն՝ իւզի տեղ,
Լեցուած :*

ՀՐԱԶԴԱՆ

*Գիշերուան մէջ կը մնաս պատշգամբին վրայ անոր...
Պատշգամբին :*

ԸՄԲՈՍՏՈՒԹԻՒՆ ՍՐԲԱԶԱՆ

*Աիրաբ սնունդ քեզ գտնելով վառուէիր,
Վառէիր :*

ՍՓԻՒՌՔ

*Անվերջօրէն կը բաժանուին, կը մեկնին...
Կը բաժանուին :*

*Արեւելահայ բառերով ու բառաձեւերով միայն վերաւորուած չէ թէքէ-
եանի լեզուն, խանդարիչ ուրիշ այլանդակութիւններ եւս թոյլ տրուած են
քերթուածներուն մէջ :*

ԽԵՂՃ ՄԱՐԳԸ

*Կ'երկարէ ձեռքն անոր, ան, ժպտալով մը տխուր
Պարզ է, որ պէտք է ըլլայ ժպիտով մը տխուր :*

ՀԱՅՐԵՆԻ ԳԱՐՆԱՆ ՅԻՇԱՏԱԿԸ

*Եթէ լուր վայրկեան մը սրտիս ազմուկը անկարգ,
Եթէ պահիկ մը դադրէ կիրքիդ խուճապը քանդիչ,
Եղած անպայման ընթացիկ վրիպակ է : Կէս մնացած դադրէ բառը կար-
դալ՝ դադրէր :*

Նոյն ձեւի ուրիշ վերլուարկ մը-

ՈՐՐԵՐՈՒՆ ՁԵՌՔԵՐԸ

Անոնց երբեմն յանկարծ կը խլրախն գաղտնապէս :
Անոնք :

ԴՈՒՆ ԶԳԻՏՑԱՐ

Մտածումներըս ամէն, գէթ ասարակներ սպիտակ,
Գիշեր, ցերեկ, անվճատ, հեշտաթուղչ, անմոլոր,
Գէթը, ի հարկէ, անհեթեթ ներկայութիւն է տողին մէջը : Պէտք է ըլլայ՝
գերթ :

ԻՆՁ ԿԸ ԹՈՒԻ ԹԷ ԱՊՐԱԾ ԵՄ

Ի՞նչ փոյթ, թէ ղիս չհասկընան, ղատապարտեն այլ ուրիշներ,
Ո՛չ թէ այլ, այլ՝ ա՛լ :

ԻՆՁ ԿԸ ԹՈՒԻ ԹԷ ԱՊՐԱԾ ԵՄ

Իր հուսկ փպլտն ալ իմ հոգիս ահա վրադ բեռ կը բանայ,
Անհեթեթ բառ՝ բեռը : Ժպիտք բեռ թեթեւցնո՛ղ շնորհ է եւ ոչ թէ բեռ
բարդող : Ոտխտումը մէկ դիրին տարբերութեանէն առաջացած է նորէն : Բա-
ուր կարգաւ՝ դեռ :

Մեր լեզուն ունի անձնական դերանուն մը՝ ես, որուն սեռական-տրա-
կան հոլովը արեւմտահայերէնի մէջ կ'ուղղագրուի ինձի, ծ-ով, իսկ արե-
ւելահայերէնի մէջ՝ ինձի, ձ-ով : Ո՛չ արեւմտահայերէնի մէջ երկու ձեւերը
միաժամանակ կը գործածուին եւ ոչ ալ արեւելահայերէնի : Բայց թէ քէեանի
հայաստանեան երրորդ հրատարակութեան էջերուն թէ՛ մէկը գործածուած է,
թէ՛ միւրը : Աւելի՛ գարմանալին, — երբեմն նոյն բանաստեղծութեան մէջ կի-
րարկուած են երկու ձեւերն ալ :

Երկար պիտի ըլլար բոլոր օրինակները մէջըրերի : Բաւարարուինք հե-
տեւարար, նոյն բանաստեղծութեան մէջ թոյլ տրուած աններդաշնակութեանց
մասնանշումով :

ՈՂՔ

Հին սէրերու ողբն ինձի միշտ կը հասնի :

ՈՂՔ

Յիշեցընէ պիտի ինձի մահն անոնց :

ՀԱՇՈՒԵՑԱՐԳԱՐ

Հաշուեյարգար . ի՞նչ մնաց, կեանքէն ինձի ի՞նչ մնաց .

ՀԱՇՈՒԵՑԱՐԳԱՐ

Տուաւ ինձի ետ ու ըրաւ կեանքըս անով միշտ բուրեան . . .
Ու մտածել տակաւին, որ այս վերջին ինձին ինձի չէ, ինձ է, մէկ վանկ

պակաս հաշուող միաւոր մը, որ մասնաւոր նշանակութիւն մը ունի ի՛ մասնաւորի թէճէեանի բանաստեղծութեանց մէջ:

Եւ այսպէս, նոյն բանաստեղծին նոյն դիրքին մէջ եւ նոյն խմբադիրներուն աչքին առջեւ տասնեակներով ինծի եւ ինձիներ:

Ինծի եւ ինձի դերանունին պէս, երրորդ հատորին մէջ երկու ձեւերով կը թափառի ուրիշ բառ մը եւս, թէճէեանի մօտ՝ Ետեւ, առանց Յ նախդիրին, իսկ արեւելահայերէնի մէջ՝ նախդիրով՝ յետեւ, Արեղեան ուղղադրութեամբ՝ հետեւ:

Այս հետեւին դրեթէ հետեւող չկայ այսօր Հայաստանի մէջ, վաթսունական թուականներէն ասդին դրեթէ ամէն ոք կը դէք Ետեւ, Ետեւէն: Թէճէեանի պարադային, չես դիտեր ինչպէս, խմբադիրներու միտքը ինկած է չին ձեւը եւ պատճառ դարձած տհաճելի յաճախակութեան մը:

Ետեւ – հետեւ այդ շարանէն տանք միայն երկու նմոյշ:

ՀԱՆՐԱՊ

Կ'երթայ՝ հանըմն՝ յուզելով մուշկի ալիք մ'իր Ետեւ:

ՏԱՐԻՔԸ

Եւ մտածումս այն հետքն էր, որ կը թողուր իր հետեւ:

Ասոնք տեսնելի բաներ են եւ մեր լեզուին ծանօթ ու բանաստեղծական քիչ թէ շատ մշակոյթ ունեցող ոեւէ անձ կրնայ դիւրութեամբ կատարել ուղղումը եւ այնպէս կարողալ տուեալ քերթուածը:

Վահան թէճէեանին առաջին անգամ ծանօթացող ընթերցողը ինչպէ՞ս կրնայ սակայն դարմանել պակաս բառերով դիտողացած տողերը կամ այն խորթ բառերը, որոնք զրաւած են հարադատներուն տեղը:

ԵՐԲ ՕՐԸ ԳԱՅ ՎԵՐՋԱՊԷՍ

Երբ հիմա մօտ, մօտացա՛ծ այս Արշալոյսը ծագի՛
Մօտեցա՛ծ:

ԵՐԲ ՕՐԸ ԳԱՅ ՎԵՐՋԱՊԷՍ

Ուղղէ միայն բընութեան դոնութիւն կամ դառնութիւն,
Նըմանին ո՛չ, յաղուրդին կամ նորութիւնն իր համար...

Յաղուրդին հակադիր վիճակը, որուն պիտի ուղղուէր դառնութիւնը, չի կրնար նորութիւնը ըլլալ: Ինչո՞ւ նորութեան դէմ դառնանալու կոչ պիտի ուղղուէ մարդուն:

Որհնդածութիւնը աւելորդ է սակայն հոս:

Նորութիւնը պէտք է ըլլայ նօթութիւն:

Ո՛չ իսկ նօթութիւն, այլ՝ նօթութեանն, տրական հօրով:

Հարազատ նոյն բառին աեղ՝ երկու սխալ, մէկը՝ իմաստային, միւսը՝ հօրովական: Զարմանալի է մասնաւոր վերջինին խորթութիւնը չկարենալ կընահելու փաստը:

ՀՈՒՄՆԻ ԳԻՇԵՐ

Գիշերն հանդարտ էր ու լուռ
Զոր մարդն այդպէս կը յուզէր...
Ես, սենեակիս մէջ մուք

Եօթվանկեան կառոյց մը ունի բանաստեղծութիւնը, որմէ մէջըբերուած երրորդ տողը կը կաղայ՝ վանկի մը կորուստով: Պէտք է ըլլայ՝

Ես, սենեակիս մէջը մութ

ԵՐԱԶՆԵՐ

Ահաւասիկ... ալ չեմ լար եւ ալ ոչինչ չեմ խնդրեր

Կեանքէն, որ այնչափ եղաւ ինձ խոժոռ ու ազահ:

Նոյնը պատահած է այս երկրորդ տողին: Հաւանարար ինձ դերանունը գրաւած է իրեն համապատասխանող «ինծի»ին տեղը:

Նկատեցիք հարկաւ, որ Թէքէեանի այս «Երազներ»ը երրորդ անգամ է, որ կը խոցուին: Երրորդ անգամ...

ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ

Որ կը յառնէ հեթանոս խնճոյքներուն տարփաւէտ,

Ինչպէս յարկէն Աստուած՝ ուր կ'ընծայուի պաշտամունք...:

Ի՞նչ երաժշտութիւն, եւ մա՛նաւանդ՝ երաժշտական ի՛նչ ուշադրութիւն՝ «յարկէն Աստուած»...: Ո՞ր յարկէն, ի՛նչ Աստուած, եւ վերջապէս, այս ի՛նչ անաստուած լեզու է, ինչ անաստուած վերաբերում՝ Թէքէեանի հանգէպ, ընթերցողին հանգէպ: Աստուծոյ մասին մշակուած միւս անորոշութիւնները չէին բաւեր կարծես Հայաստանի մարդուն: Կարճ կապենք սակայն: Թէքէեանի տողին հարազատ պատկերը՝

Ինչպէս յարկէն Աստուծոյ՝ ուր կ'ընծայուի պաշտամունք...:

ԶՈՒԱՐԹՆՈՅ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ

Հիմա այստեղ ծածկուած են դարերու փոշիով

Անոնք, որոնք հայերնու եղան հայերը ազատ,

Հարազարը հայերնու է եւ ոչ թէ հայերնու: Գաղափարականօրէն շատ հեռու չեն երկու բառերը իրարմէ, բայց հայերնու բառին ոճական նրբութիւնը յայտնապէս կը հեռացնէ բանաստեղծութիւնը միւսին ստեղծած քաղաքական ծանրութենէն: Ի վերջոյ պէտք չէ անտես առնել նրբերանգներուն բախտորոշ գերը: Յիշել Համօ Յահեանի «Տողը, քաղը, տաղը»:

ՅԱՐՈՒԹԵԱՆ ՇՈՒՆՁՆ Է ԱՀԱ

Մինչ, կառչելով դուն անոնց, յամբ սակայն ապահով

Շարժմամբ ոտքի պիտ ելլես՝ թափած պատրանքը հողին...:

Տրամաբանութիւնը կ'ըսէ, որ պատրանք բառը անյարիր է այս տողին մէջ: Զմոռնանք, որ յարութեան մը մասին է խօսքը ու յարուցեալները պատրանքէն աւելի պատանք կը պատեն ու կը թափեն: Մէկ տառին տարբերութիւնը, յաւելումը, յապաւումը, իրապէ՛ս, ինչպէս գլխիկայր կը շըջէ կամ վեր կը սլացնէ բանաստեղծութեան մը գաղափարական շէնքը:

Երկրորդ տողը, իր ամբողջական սրբագրութեամբ՝

Շարժմամբ մ'ոտքի պիտ՝ ելլես՝ թափած պատանքը հողին...:

ՅԱՐՈՒԹԵԱՆ ՇՈՒՆՁՆ Է ԱՀԱ

Որ արտին մէջ կը նիրհեն, ահա աստղերը բոլոր,

Ո՛ր յարուցեալ, գլուխդ շուրջ կ'ըլլան պսակ մը պայծառ...:

Հոս տառ չէ աւելցած կամ պակաս, այլ տեղափոխուած է պարզապէս...:

Խ տառը ինկած է ու երկրաբբառէն ետք ու խախտած բանաստեղծութեան պատկը կազմող վերջին տողին ողջ տրամադրութիւնը :

Ի՛նչ յարուցեալ, գլխուդ շուրջ կ'ըլլան պատ՛կ մը պայծառ...

Այս կամ այն չափով խոցուած բանաստեղծութիւններուն զոմարը այս չէ միայն, բայց կանդ առնենք հոս, անզամ մը եւս յիշելով հայաստանեան երեք հրատարակութիւններուն մէջ վերաւորուած Թէքէեանի շուրջ ութ-տուն քերթուածներուն տասնութին խորագիրները, կանխող էջերուն մէջ խնդրոյ առարկայ դարձած իրենց յաջորդականութեամբ.—

- 1.— «Անցեալս այնչափ հեռացաւ», 2.— «Կուռի երթ», 3.— «Վերջաբան», 4.— «Ի՛նչ յիշատակդ այս գիշեր», 5.— «Հանըմը», 6.— «Աղօթք վաղան սեմին», 7.— «Պիտի բեմք Աստուծոյ», 8.— «Ըմբոստութիւն սրբազան», 9.— «Գիտեմ գաղտնիք մ'ահաւոր», 10.— «Ահաւոր բան մը այնտեղ», 11.— «Հայաստանին», 12.— «Ձուարքնոց տամարին մէջ», 13.— «Նկեղեցիք հայկական», 14.— «Հաշուեյարդար», 15.— «Լուսաւորչի կանթեղը», 16.— «Որքերուն ձեռքերը», 17.— «Նրբ օրը գայ վերջապէս», 18.— «Յարութեան շունչն է անա»:

Ասոնք կը համարուին Վահան Թէքէեանի ամէնէն հանդամանաւոր ստեղծումները, զուրկ-զործոցները, որոնք, ինչպէս տեսաք, ծայրագոյն խնամքով ու զուրգուրանքով մատուցուելու փոխարէն՝ հայրենի ընթերցողին ներկայացուած են ապշեցուցիչ անպատասխանատուութեամբ, այնպէս՝ որ կարծես ի միջի այլոց բաներ ըլլային անոնք, սովորական գործեր, աօր-եայ ապրանք:

Գլուխ գլխի խօսակցութեան մը ընթացքին, Նարեկացիի Փրանսերէն Թարգմանիչը՝ Լիււք-Անտրէ Մարսէլ կ'ըսէր, Թէ Վիթթոր Հիւլիօ, իր ծովածաւալ դրականութեան մէջ՝ զործած է միայն մէկ սխալ, իսկ այդ մէկ սխալին նկատմամբ Յրանսայի մէջ կը տիրէ արմատական երկու կարծիք: Ակադեմականներուն մէկ մասը կը պնդէ, Թէ սխալ չէ Հիւլիոյի սխալը, իսկ միւս մասը կը հաստատէ սխալը:

Ընդամէնը մէկ սխալ:

Ու այդքան մեծ հարց:

Կայ եւ աւելի ուշադրաւը:

Յրանսայի հրատարակչատուններէն եւ ոչ մէկը թոյլ կու տայ ինքն իրեն, որ այդ մէկ հատիկ սխալէն զատ սխալներ սպրդին Հիւլիոյի գործերուն վերհրատարակութեանց մէջ:

Ա՛յս:

Իսկ մենք Երեւանի սրտին դեռ կը շարունակենք սիրտ խոցող վերաբերումով մը հրատարակել անզամ մեր դասական հեղինակները:

Մե՛նք...

Տեղի անձկութեան պատճառով՝ Վահան Թէքէեանի «սովետական կողմնորոշումին» եւ յարակից հարցերու մասին այս թիւին համար մեր պատրաստած թղթածրարը յետաձգեցինք Սեպտեմբերի համարին:



ԱՐԴԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՔԱՌՈՒՂԻՒՆ ԴԻՄԱԾ

Անցեալ տարուայ ընթացքին Հայաստանի մէջ լրջ տեսած Ռազմիկ Դաւոյանի «Տափ սայեր»-ն ու Արմէն Մարտիրոսեանի «Քոչուկները» բաւական լաւ ձեւով կը ներկայացնեն այն հիմնական դժուարութիւններն ու հարցերը, որոնք կը բարձրանան Հայաստանեան արդի բանաստեղծութեան դիմաց:

Որակի կամ դնահատման հարց չի յուշուիր հոս, ոչ ալ երկու բանաստեղծներուն արժէքը բաղդատութեան կը դրուի: Պարզապէս երկուքը, արդի ցնահաղատութեան մէջ կիրարկուած վարժութեամբ մը՝ յալորդաբար կը ցնահարկին եւ իւրաքանչիւրին որդեգրած ուղին կը ցոլացնէ այն ընտրութիւնը, որ կը դրուի փորձառական վաստակ ունեցող իւրաքանչիւր արդի դրողի դիմաց: Երոջ հանդրուանէ ետք՝ չարուհակե՛լ նորարարական փորձը, թէ հասկացողութեան մը գտլ ընկալելու արժեքափերուն հետ:

Ռազմիկ Դաւոյանն արդէն կարեւոր նուաճումներ կատարած է արդի բանաստեղծութեան կարուածէն ներս: Ժամանակը՝ Հայաստանեան չափանիւններով: Իր «Ռեֆլիքս»-ը իրազորում մըն էր այս մարդէն ներս եւ, եթէ հոս որոշ խտութիւն մը կը ցուցարբերուի իրեն հանդէպ, ասիկա կու դայ իր սաղանդին հանդէպ մեր տածած յարաբեզէն ու իր կարեւորութիւններուն ու կարողութիւններուն մասին մեր ունեցած ծանօթութենէն:

Պատահական չէր «Ռեֆլիքս»ի յիշտակուածը վերորդեալ տողերուն մէջ: Ընդհանուր աշխարհահայեացքի մը մէջ՝ հոն կը համադրուէին արդի մարդուն անհատական ու հաւաքական մտադնայներն ու ձգտումները, կը բացուէր անոր բազմերես եւ բազմամակարդակ առօրեան: Հատորին մէջ կիրարկուող գերիբապառ պատկերային համակարգը եւ, հատուածներու ներքին զարգացման սկզբունքին վրայ հիմնադրուած կառուցը՝ իրենց տիրական ներկայութեամբ այն վստահութիւնը կը ներշնչէին, թէ ժամանակի ընթացքին պիտի շրջանցուէին միւս դժուարութիւնները: այրինքն՝ Երեմի գնարականութենէն անդին դացող շեշտուած զգացականութիւնը, խտութեան (կամ գուսպ ըլլալու) պակասը եւ երբեմն

ալ յանդերու կամ պատկերներու ջրապտոյտին մէջ կորսուելու վտանգը, ուր զգայնութիւնը իր որոշակիութիւնն ու թելադրականութիւնը կը կորսնցնէր:

Հիմա ատենն է հարցնելու, թէ ի՞նչ մնացած է այդ բոլորէն «Տափ սայեր»-ուն մէջ, ի՞նչ աշխատանք տարուած է վերոյիշեալ դեպիներուն վրայ, կամ՝ ի՞նչ էին այն պատճառները, որոնք առիթ տուին ներկայ շրջումին:

Հայաստանեան բանաստեղծութեան ընդհանուր շրջապատը՝ իր աւուջ գրողներով, մամուլով, խմբագիրներով ու վարժամեքենային հետ ունեցած յարաբերութիւններով՝ պահպանողական եւ ճնշելի նկարագիր մը ունէր, որմէ դուրս գալով ինքնայատուկ դիմագիծ կը լալողին կազմել զէշներ միայն, ինչպիսին էր Պարոյր Սեւակ, իսկ մնացեալը ընդհանրապէս կ'ազդուէին երէցներու կեցուածքներէն եւ կը խուսափին ընդհարումներ ունենալէ անոնց հետ: Տակաւին թարմ է մեր մտքերուն մէջ այն հակազդեցութիւնը, որ այս տասնամեակին սկիզբը դրսեւորուեցաւ Հ. Իլոյլեանի, Յովհ. Գրիգորեանի եւ իրենց սերնդակիցներուն հանդէպ, երբ կը փորձէին նոր դետին մը բանալ բանաստեղծութենէն ներս, ուր զրական արժեքափերով «մտահոգ» դրական դասը անգանդ կը հնչեցնէր եւ յորդորներ կու տար բանաստեղծութիւն դրելու մասին:

Դաւոյանն ընդունուած բանաստեղծ կը թուի ըլլալ ներկայիս:

«Տափ սայերը անկասկած տեղատուութիւն մը կ'արձանագրէ «Ռեֆլիքս»էն եւ Դաւոյանի ստաշին շրջանի ստեղծագործական առաջադրանքներէն:

Բաղդատութիւն մը կատարելով «Խաչերի ջարդ»-ով սկսող եւ սոյն դիրքին մէջ տեղ գտած «Էպոս պատմութեան» խորագրիով պոեմներուն եւ «Ռեֆլիքս»ին միջեւ, յտակօրէն կը տեսնենք այն դիմափոխութիւնը, որ երեսուն եկած է բանաստեղծին ծօնեցման եղանակին մէջ: «Ռեֆլիքս»ի ներքին զարգացման հոլովութիւն տեղ ունինք պատմողական-նկարագրական աւանդութիւններով զարգացող «Էպոս»ը, որ նման բաւական լայն ժառանգութիւն ունի արեւելահայ բանաստեղծու-

թե՛նէն ներս: Գերիրապատ պատկերակերտման ու յանդուդն երևակայութեան տեղ՝ յանդաւոր քառատողերն ու աւանդական «գործիք»ները, իսկ փնտռող մտքին տեղ՝ ծանօթ զգայնութիւններն ու կրկնուող հոգեվիճակները:

«Տա՛մ սայիք»ը բաժնուած է երեք բաժիններու:— «Ճեֆիաթի գորգ», «Շշուլիի նման» եւ «Էպոս պատմութեան»: Ամէնէն շահեկանը առաջին մասն է, ուր աեղ դտած են նաեւ «Ճարտարդոսքիւն» եւ «Մ'դճաւանց» շարքերը: «Շշուլիի նման» բաժինին մէջ աւելի տիրական է անձնական-քննարկան շնչոտ մը, ուր աւելի ենթակայական ու զղացական նկարագիրով բանաստեղծութեան մը կը հանդիպինք:

Երրորդ բաժինին մասին՝ խոսեցանք արդէն: Ժիշդ է, որ բերեղացած ապրումները, շատ աւելի յստակ դրսեւորումներով բացուող լեզուն եւ բանաստեղծին հակաշիւրք քերթողական տարրերուն վրայ պերճախօս են Դաւոյեանի կարողութիւններուն մասին, սակայն անոնք անհասկընալիտն կը կիրարկուին յաջգեթ մը մէջ, որ աւելի ծօտ է աւանդական զվրցոցին, քան ի՛ր իսկ ստեղծագործութիւններուն նուաճած փորձին:

Ինականաբար, որեւէ անպատեհութիւն չկայ մարդու, տեղեւորի, սիրոյ, տոտապոնքի եւ այլ ծանօթ նիւթերու մասին զրկուին մէջ: Վերջ ի վերջոյ, ամբողջ հարեւրատեակներ անոնք եղած են բանաստեղծութեան «թեմայ»ները: Սակայն երբ անոնց մէջ կան հետեւեւլ մատուածներուն պէս մասեր՝

Եւ երբ անցնեն տարիներ,
Եւ ամէն բան դառնայ յուշ,
յուշի վրայ էլ իջնի
մոռացութեան բանձր մուծ,
Եւ նրանց հետ Բաւսիմ,
անցած սիրոյ քեւեռով,
կ'իցնեմ երկիրն այս չքնաղ՝
նրանց քաւիշ քեւերով:

այլեւս կը սկսինք հարց տալ, թէ յուշի, մուծի, Թաւիշ Թեւերու, չքնաղ երկրին եւ այլ մշուշներու մէջը ենք դեռ: Դաւոյեան, գէթ իրրեւ որոշ ժամանակաշրջանի մը համար յառաջապահը Հայաստանի բանաստեղծութեան, պէտք է ի՛նք զուրս զար նման մթնոլորտէ մը եւ ոչ թէ հոն վերադառնար:

«Մ'դճաւանց» շարքը կը կատարէ այս փորձը, սակայն կեդրոնական պատկերը կարծէք չէ դտնուած եւ հարկ եղած դիւրութիւնները չի տար իրեն:

Որքեթն մէջ, աւանդական իմաստով խոստովանական ու զգացական բանաստեղծութեան մէջ անցած է Դաւոյեան, առանց որ Համապատասխան թարմութիւն բերէ: Անշուշտ, երբեմն-երբ

րման, անակնկալ ու թխաղբական պատկերներու կը հանդիպինք, ինչպէ՛ս՝

Եւ մի քաշում անյայտից
միխուսմ է պարզ օդի մէջ՝
ասես գիշերն օրուայ դէմ
իր սեւ նետն է արձակում:

Այլուր, ինչպէս «Շշուլիի նման» բանաստեղծութեան մէջ, նախկին գործերուն արձագանքը եւ ուժական ներկայութիւնը կը տեսնենք, իսկ երբ որոշ անշատում մը կը ցուցարբէր ստեղծագործութեանէ եւ աւարկապականութիւն ցոյց կու տայ՝ կ'ունենանք «Մարդը» բանաստեղծութեան պէս առանձին գործեր: Մէր համեստ կարծիքով, ստեղծագործական այս երակն է, որ պէտք է զարգացուի Ռազմիկ Դաւոյեանի կողմէ:

Լեզուի ճամբով եկող յստակ հակա-հետադարձանութիւն մը եւ քնարականութիւն մը կը յատկանէ Ամսէն Մարտիրոսեանի երկրորդ գործը՝ «Թռչումները»:

Պատկերային ու թեմայի երկու հիմնական ստացեցներու շուրջ կը դառնայ գործը՝ մանկութեան եւ թռչուններու, որոնցմէ առաջինը իմաստային զիծերով ու նրբերանգներով կը հարստանայ շարունակ, իսկ երկրորդը՝ պատկերային նրբերանգներով, զուգորդումներով եւ «տեղափոխութիւններով»:

Քանի որ յաջցային փնտռուներն ու հարցերը ընդհանուր ձեւով մը մատնանշուեցան յողւածին մէջ, քիչ մը աւելի առաջ երթանք, որովհետեւ բաւական ըսելիք կայ Մարտիրոսեանի առթիւ:

Յաջողական երկու էջերու մէջ, «Նրանց կարմիր քեւերի տակ» եւ «Փայտփորիկը» բանաստեղծութիւններով, ընկալեալ ձեւերու մէջ Մարտիրոսեան իր «Թռչումները» շարքին ամենայաջող կտորներէն երկուքը կ'արտագրէ: Եւ հակառակ անոր, որ դիւրութեամբ կը յաջողի նման աւանդական յղացեցներու մէջ, չ'ուզեր մընալ այդ շրջադիժէն ներս եւ այդ սահմաններէն անդին կ'երթայ, մինչեւ իսկ եթէ տակաւին չի յաջողի նոյն տարողութեամբ իրականացնել բանաստեղծութիւնները եւ նոր ձեւի իրագործում մը ամբողջացնել կամ բերեղացանել:

Հոս սեղին է նշել, որ այսպէսով Մարտիրոսեան իր կարգ մը սերտակիցներուն հետ կը կերբէ այն աժան արքայատեութիւնը, թէ՛ արդէ կամ աղտո բանաստեղծութիւնը էականն է կամ հիմնականն փախուստ տուր ձեւ մըն է: Ընդ-

Հակառակն, «ձեռային ծածոթ ըմբռնումները» իրենց կրկնուող լիզուական, պատկերային ու յանդային Համակարգով եւ «էլիշէ»ներով, երբեմն այդպիսի՝ զիւրուժիւններ կ'ընծայեն, որոնց մէջ յաճախ կը սիրեն ծուլանալ փնտառուքներէ խուսափող բանաստեղծները: Գժուարը՝ անձնական յղացքին ու փորձին ճամբան է:

Տուր իձձ մանկութիւնը որպէս տարածութիւն, որտեղ կարելի է տեղադրուել, որտեղ բզեմա տեղերը դողացող, որպէս վարագոյր իր մէջ թափցնում է անտեսման մերկութիւնը եւ ազնուութիւնը անասնամ:

Վերջորեալ տողերով բուական յստակ կը դառնան սահմանները «Մանկութեան քաղաք»ին, ուր կը շարժի բանաստեղծը: Պէտք է ըսել, որ զերբին երկրորդ բաժինին Հետ բաղադատած, Հեղինակը ինքնիրեն տուած է թե՛մաթիք իմաստով բուական լայն ազատութիւն, ուր կը դրսեւորին զինք յուզող բոլոր Հարցերը:

Եարբին սկիզբը կը կատարուի Հայրենիք-մանկութիւն միութիւնը, ուր, Մարտիրոսեանի բառերով՝ միշտ լուսարաց է: Պերբին մէջ, Հայրենիքը արդէն այն վայրն է, ուր կան մարդն ու շրջապատը եւ մարդուն սնուցիչ տարրերը: Մանկութիւնը միշտ մաքուրութեան Հետ կապուած է, իսկ մանկութենէն մինչեւ ներկան այն վայրն է, ուր զուգահեռաբար ներկայ են բոլոր փորձառութիւններն ու զգայնութիւնները: Գրութեան մէջ է, որ ասոնք կը միաձուլուին եւ կը պարզեն մարդուն ամբողջական Հշմարտութիւնը: «Յնայլիս խոսմիը կ'այրէ երկինգը» (էջ 44) տողով սկսած բանաստեղծութեան եւ անոր յաջորդող Հատուածներուն մէջ այս բոլորը կ'արթննան... արթնցողը ներքին աշխարհն է, զոր ինքն իրեն Համար կազմած է անՀարու: Հոն կայ իր ազատութիւնն ու առանձնութիւնը: Այս երկուքը կենսական կը թուին ենթակային կամ Հեղինակին Համար: Մենութիւնը առիթ կու տայ բիւրեղացնելու ներքին պատկերը եւ ամբողջացնելու ժամանակի եւ տարածութեան բերած տարրերը: Ազատութիւնը նախ եւ անաշ առիթ կու տայ ժամանակի թռիչքին եւ ապա թոյլ չի տար, որ մենութիւնը խանգարուի:

Եւ որտեղ կարող է՛ ամբողջանալ, ինչպէս ծագիլը համապիւր, եւ միութիւնը սկզբի, վերջի:

Իսկ «իմ երակներում միւղերը յոյսի» տողով սկսող բանաստեղծութեան (էջ 63) մէջ, մանկութիւնը շատ աւելի լայն տարողութիւն կը

ստանայ: Դէպի մանկութիւն դառող երթը կը վերածուի նախնիներու կանչին ընդառաջող Հարթումի: Այս քայլը շուտով Համամարդկային նշկարագիր կը ստանայ, կը վերածուի ընդհանուր Համարողութեան մը «Քրոյութեան դետին մէջ», որ սկսած է Ազատով եւ կը Հարուակուի ընդմէջէն: Մարտիրոսեանի ըմբռնումով՝ գերեզմանը կայարան է այլեւս եւ մենք յոյսի մակուղին վերայ կ'ընթանանք զէպի ապագայի կղզին:

Այս բաժինին ամենատառայայտիչ կտորներէն մէկուն մէջ՝ «կամայ եղինցների Հարբերի միջով», կը տեսնենք, թէ Մայրը կը փնտռէ Իմաստը իր ծնունդին եւ ինչ որ մանկութեան Հետ առընչուած անցեալ է՝ կը վերածուի բանաստեղծութեան:

Որովհետեւ այն, ինչը հետանում է, քա մէջ դառնում է բանաստեղծութիւն, որ զերմացնում է քնած հատիկը օրոյս:

Այսինքն՝ ինչ որ մանկութիւն է եւ յուշ, ընկանաբար բանաստեղծութեան վերածուած է եւ մանկութեան քաղաքը կ'ըլլայ բանաստեղծութեան քաղաքը (Իբրեւ տարածութիւն եւ վայր): Այսպէսով, պատկերը կ'ամբողջանայ եւ բանաստեղծը, իր զուգորդումները եւ առընչութիւնները Հաստատած՝ կարծէք երկրորդ բաժինին անցումը պատրաստուած է:

Մարտիրոսեանի «Քոյունմներ» Հարբը մտածել կու տայ երկու ուղղութեամբ: Չարային ու ձեւական (figurative) խաղեր են անոնք, թէ կեդրոնական պատկերին կերպարանափոխումն է եւ նոր տարրերով աստիճանական Հարտացումը: Հաւանաբար երկու մտածումներն ալ ճիշդ կը Հայլոջի, նոր զգայնութիւններ արթնցուցած կ'ըլլայ եւ նոր երանգներ կը բերէ թույլունքու կեդրոնական պատկերին, իսկ երբ «ձախող» է, կը մնայ ձեւական խաղերու սահմաններուն մէջ:

Նման Հարբերու պարագային, ընկանաբար, առանձին Հատուածներ կամ բանաստեղծութիւններ չեն զննարկուիլու եւ, Հետեւաբար, յաշող կամ ձախող որակումները կը դառնան անիմաստ, կը դիտուին պարզապէս սահմանումներու ծիւրին մէջ: Եարբը, իբրեւ ամբողջութիւն, առիթ կու տայ, որ իւրաքանչիւր օղակ ընդհանուր պատարհի մը ընդմէջէն դիտուի, ուր իւրաքանչիւր պատկեր կամ իւրաքանչիւր բառ՝ տարբեր արձանագններով կը Հարտանայ, տարբեր թելադրականութիւն կը ստանայ եւ, իր կարգին, կ'արձագանգէ:

Եարբ-չղթային առաջին օղակէն թռիչք-բառ-մահ եռանկիւն մը կը դնուի:

Տուր իձձ, Աստուած իմ, սուր իձձ քեւերս՝ իմ մահուան զեղիմ սարսափների տակ բաւերի քաղած տարածութիւնը ինքս իձձանով լցնելու համար:

Մարտիրոսեանի նախորդ կամ առաջին դիրքին մէջ կար արդէն թռիչքի եւ քայքայման հակադրութիւնը, paradoxը: Իսկ «Մանկութեան քաղաք» շարքը բերած էր անցեալն ու ներկան միաձուլող ժամանակի զգայնութիւնը: Տարբեր տեղեր յաճախ կը կրկնուին, թէ ճանապարհը դէպի մայրամուտ կը թփռուի, իսկ դէմքը ներկային մէջ է (էջ 94): Այսինքն՝ ապագայի սերմը մէջը է արդէն: Նման այլ արձագանդ մը.

Նրանք մտնեցնում են իրենց անցեալը իրենց ստուերներին.
 նրանք կառքի մէջ տեսնում են յուշը նայիկին պատկերի,
 երբ քոչուցն էին եւ ոչ թէ ստուեր,
 երբ ձկնիկ էին եւ ոչ թէ ստուեր,
 եւ տանում են յուշերը նայիկին երկիրների
 եւ կարքերի ստաբ սարսափի մասին
 նրանք մտնեցնում են երկնային արքայութեանը:

Ասոր կը յաջորդէ պատկերային «խաղը» կամ տեղաշարժը: Ճախրող թռչունները ձայնի ալիքներ կ'ըլլան (էջ 78), իսկ թռչուն-նաւակով շուտով նոր զուգորդում մը կը ստեղծուի.

Ձիւնը առաջինը իջնում է միայն
 նրանց քեւերին,
 եւ կապերի վրայ քաթիկներ են ձիւնէ,
 որ ձգուել են երկինք մտազատի նման.
 Գրանց քեւերը թիակներ են ձիւնէ,
 եւ մարմինները նաւակներ են...

Նոյն կտորին մէջ, նաւակները տերեւներ կ'ըլլան եւ ծառերուն վրայ կ'իջնեն՝ զարնան յիշողութիւնները արթնցնելով, իսկ ձիւնը առաջին անգամ իրենց թեւերուն վրայ կը հայլ...


«Ձմեռ» բանաստեղծութեան մէջ, նոյն ձիւն-թռչուն պատկերը խիտ սողերու մէջ դաժան ու զեղեցիկ ճշմարտութիւն մը կը դրսեւորէ.

իջնում են փաթիլները,
 փաթիլները մաքուր-մաքուր,
 քնէշափրան մաքուր,
 քնէշափրան մէջ ազանաքեւ
 քառեցնելու իրենց ժամիկները:

Այս յարտուե փոփոխութիւնները թոյլ չեն տար, որ թռչունի կեդրոնական պատկերը անշարժ խորհրդանիշի վերածուի, ընդհակառակն, իւրաքանչիւր նոր զուգորդումի հետ նոր առնչութիւն մը կը գտնուի — թռչունը նաւակ կը դառնայ, անոր էութիւնը կը փոխակերպուի ձուկի, կամ աւելի ուշ՝ տերեւի եւ, այսպէս շարունակ՝ ան կը հարստանայ:

Կը կարծենք, թէ բանաստեղծութեան մէջ էականը ճիշդ այս է: Մնացեալը աշխատանքով ու ժամանակի ընթացքին աւելի կը բերեղանայ: Մարտիրոսեան էականը ունի, զտած է, եւ իր հիմնական առաքելութեան մէջ է արդէն:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՊԵՐԵԱՆ



Արևիկա ԼՍԵՐԵՐ

ՖԻՐԱՆՍԱՑԻՆԵՐՈՒՆ
50 ԱՌ ՀԱՐԻԻՐԸ
ԴԵՌ ԿԸ ԿԱՐԳԱՅ...



ԿԱՐՊԻՍ ՔՈՐԹԵԱՆԻ «ՄԵԹԱՔՐԻԹԻՔ»Ը

Այս տարուան սեփար, Փարիզի Les Editions de Minuit հաստատութիւնը լոյս բնծայած է Կարպիս Քորթեանի «Մեթաքրիթիք» փիլիսոփայական հատորը:

Մանթրէշալի համալսարանի փիլիսոփայութեան դասախօս Կ. Քորթեան արդէն ծանօթ անուն է ներկայ մտաւորական աշխարհին մէջ:

Քորթեանի յօդուածները լոյս կը տեսնեն «Critique», «Etudes philosophique» եւ «Dialogue»-ի նման լուրջ եւ հանրածանօթ ամսաթերթներու մէջ:

«Metacritique»ը արդէն թարգմանուած է անգլերէնի եւ ռուսով լոյս կը տեսնէ Քէմպրիճ համալսարանի հրատարակչատունէն: Պատրաստութեան մէջ է նաեւ զործին զերմանեթէն հրատարակութիւնը:

Յիշեալ գործը երեք հատորոնց շարքի մը առաջինն է. մնացեալ երկուքը լոյս պիտի տեսնեն յառաջիկայ տարիներուն:

Յունիս ամսոյն վերջատրութեան կազմուած Հարցախոյզի մը համաձայն, Փրանսայիներուն 50 առ հարիւր դէռ կը կարդայ, հակառակ ձայնափութին, պատկերասփիւռին, ձայնօղակներուն եւ ձայնըրիզներուն մրցակցութեան:

Տախտակը կազմելու համար Հարցախոյզուած են հազար անձներ, ընտելութեան ներկայացուցչական խաւերէն, տարբերով ստանուի եւ ստանութիւն վեր:

Ընթերցողներուն նախընտրութիւնը, ստալին չերթին, կ'երթայ պատմական զբոբերու եւ յուշագրութիւններու: Այս հակումը ունեցողները կը ներկայացնեն Փրանսայի ընթերցողներուն 44 առ հարիւրը: Պատմութեան կը յաջորդէ վեպը, 42 առ հարիւր, որուն 30 առ հարիւրը կը ներկայացնեն ոստիկանական վէպերու ընթերցողները, իսկ քաղաքական զբոբերու ընթերցողները կը զրուան կրթորդ տեղը՝ 23 առ հարիւր համեմատութեամբ:

ՍԵՐԺ ԿԻՆԶՊՈՒՐԿԻ «ՄԱՐՍԷՅԷՉ»Ը

Հրեայ երիշ Վինպուրի, Ֆրանսայի աղաչին քայլերդին բառերն ու եղանակը խնդրութիւնով՝ վերջներս յօրինեց նոր շէրք մը, որ մեծ գայթակղութիւն առաջացուց պատկան երկրին մէջ:

Առ այդ դրուեցան բազմաթիւ յօդուածներ, որոնցմէ մէկը՝ «Ճիկարօ մակագին» մէջ, ստորագրուած՝ Նչնաւոր յօդուածդեր Միշէլ Տրուայի կողմէ, կորովի յօդուած մը, ուր կը նկարագրուի երգիչին թափփած կերպարանքը, անխնամ մօրուքը, ճմթիկուած հազուան ու արեւտական բոյր անխնամութիւնները:

Յիշեալ յօդուածէն ստորեւ երկու պարբերութիւններ, որոնք բաւարար զազգայն մը կուտան ազգային քայլերգ մը սրբապղծելու մղըր՝ չութիւնը զործած անձին եւ ստեղծուած հակադէզութեան մասին:—

«Այս կիցպարմեով ուրիշ մարդիկ ալ կը գտնուեն այս քայլերգը, հարազատ մարդիկ, ու»



րոնց հագածը իրական ցնցոտիներ էին, եւ որոնց մօրուէր անխնամ էր անո՛ր համար, որ ուրիշ միջոց չունէին: Անոճք, այդ մարդերը, «Մարտէ՜՜՜» կ'երգէին, երբ կ'երթային կտուելու եւ քերես՝ մեռնելու. կամ՝ գնդակահարւելի առաջ: Արգեօք Սեթօ կինգպուրկ բնա՞ւ քան չէ սորված անոնց մասին, յարգելու չափ ա՛յն երգը, որ կը հրահերք գիւրեմք մտաւում վրայ կամ ընդառաջ փայլու:

«Կինգպուրկ, յանախ, եւ ոչ առանց որոշ յաջողութեան, փնտռած է մտաշակամ գայրակողութիւններու գանգամ միջոցներ: Բայց այս գործելակերպը ուրիշ բանի չ'առաջնորդեր, եթէ ոչ անցադար ընդարձակել անպարկեշտութեան եւ ցուցամուտութեան ստիմանները, այնպէս որ, ըստիպուեցաւ փնտռել ուրիշ բան մը, եւ այս անգամ դիմեց «Մարտէ՜՜՜» ինդաքիւրիւու պարզ ու յստակ սրբապղծութեան, ա՛յն «Մարտէ՜՜՜»-ը, որ երկու հարիւր տարիներէ ի վեր կը նկատուի մեր ամենէն նուիրական արժէքներէն մէկը»:

ԵՐԻՏԱՍԱՐԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐՈՒ ՀՐԱՏԱՐԱԿԶԱՏՈՒՆԸ

Կրիաննցի խումբ մը Երիտասարդ բանաստեղծներ, չուրջ երեք ամիսներէ ի վեր, կը զուժարեն Հեթմական Հանդիպումներ՝ հրատարակչական մարզէն ներս իրենց դիմաց բարձրացող խոշորոտները հարթելու համար:

Նկատի ունենալով, որ մշակութային նպատակներէ աւելի՛ հրատարակչատունները կ'առաջնորդուին աւելարական մտահողութիւններէ եւ իրենց միջոցները լայնօրէն կը յատկացնեն միայն վըտէր բանաստեղծներու հասութարեր գործն-

րուն, Երիտասարդ բանաստեղծներու այս խումբը սրւած է հիմնել նոր հրատարակչատուն մը՝ իրենց սեփական միջոցներով:

Երիտասարդ բանաստեղծներու հրատարակչատունը սկիզբ առնելու իր բանաստեղծական հանդէսը, որուն կէնտան սեղ պիտի գտնեն լրբանանցի, աշտր եւ ստոր ա՛յն Երիտասարդ բանաստեղծներուն զորքերը միտքն, սրտք կը յառկանչուին փոյճատակուն ու ներարարական բարեմասնութիւններով:

ԷԻԱ ԱՐՄ ՄՐՅԱՆԱԿԱԿԻՐ


Մարտէ՜՜՜ նկարչական միջազգային մրցանակը այս տարի չնորհուած է Էւա Արսի:

Էւա Արս կամ Նու Արսունեան՝ Մարտէ՜՜՜ ծրնած է իր դեղարուեստական նախնական ուսումը Հայաստանի մէջ ստացած հայուհի մըն է, որ իր զարգացումը շարունակած է Մարտէ՜՜՜ի դեղարուեստական դպրոցի մէջ:

Երազային աշխարհի մը մէջ կ'ենէր, երաժշտական գործիքներ, նարիւր-մարքեր, ևւայն, կողք կողքի կը վկայեն կեանքի ձգտումներուն եւ ուժականութեան մասին:

Հայաստանեան եւ Փրանսական աշխարհներու ու գորշերու համադրութիւնն է, որ կը բերէ Ե. Արսունեան:





ԷԴՈՒԱՐԴԱՍ ՄԵԺԵԼԱՅՏԻՍ Ե Ի

«ՄԱՏԵԱՆ ՈՂՔԵՐԳՈՒԹԵԱՆ»Ը

Ընթացիկ տարուան Ապրիլին, Հայաստան այցելեց լուսավարացի բանաստեղծ Էդուարդաս Մեթելայտիս, կրկնապատկերով էր ծանոթութիւններն ու ողբերութիւնները մեր երկրին ու մշակոյթին մասին:

Ասիկա Հայաստանին տուած Մեթելայտիսի երկերոց այցելութիւնն է, առաջինը՝ 1969ին, Յովհ. Թումանեանի ծննդեան 100ամեակին առիթով:

Վերջին քստորդ դարուն Հայաստանի եւ օտար մեծանուն գէմբերուն միջև ստեղծուած բարեկամութեան մէջ, Մեթելայտիս կը գրաւէ առաջին տեղերէն մէկը, նախ՝ ստեղծագործական էր արժէքով, եւ ապա՝ այն խոր Հեռաբերութեան համար, որ արտաւանի այս բանաստեղծը Հեռուողականօրէն ցուցաբերեց Հայ գրականութեան հանդէպ:

Հայաստանի մէջ կատարուած թարգմանական աշխատանքներուն հետևող ընթերցողները կը յիշեն հարկաւ Պարոյր Սեւակի թարգմանութեամբ հրատարակ հանուած Մեթելայտիսի գրութիւն-գործոցներէն համարուող «Մարդը», որ այնքան չէր սրբունելութեան տրամանցաւ գրասէր հասարակութեան կողմէ, իսկ Ա. Իսահակ-

եանի, Յովհ. Թումանեանի, Մ. Ասրեանի ու Պարոյր Սեւակի մասին գրած յօդուածները եւ Հայ բանաստեղծութեան կատարած էր ինտելեալ թարգմանութիւնները, բայց Հայրենի թերթերէն մէկուն, «Երեսոյք» եւս հայ մշակութային կապերի պատմութեան մէջ:

Կ'իմանանք, որ Մեթելայտիս ներկայիս կ'աշխատի Եւրոպայի «Մատնան ողբերգութեան» գործին թարգմանութեան վրայ եւ այդ եղան է երկրորդ անգամ Հայաստան տոյնելու իր գրելատար նպատակը:

Նարեկացիի հետ Մեթելայտիսի ծանոթութիւնը սկսած է շնորհիւ Պ. Սեւակի եւ ուրիշ տանամեայ անցեալ մը: Այդ մասին, Ալեքանդր Թովչեանի հետ ունեցած էր զրոյցին («Գրական Քերթ», 1974, քիւ 18) մէջ, Մեթելայտիս կ'ըսէ.

«Ժամերով զրոյցեցինք եւ չիմացանք, քէ երբ բացուեց լոյսը: Պատմում էր Գրիգոր Նարեկացու մասին: Դա մի արձակ ու չափածոյ խօսք էր՝ լի գիտութեամբ, գիտակցանութեամբ եւ իմանալու ցանկութեամբ: Լսելով Պարոյրի «դասախօսութիւնը» Նարեկացու մասին, ցանկացայ խորութեամբ նանայի ձեր հանճարեղ պոետին: Ես կարգացի գանգաւան միւրեր, առանձին կտորներ «Մատնան ողբերգութեան» պոետին, գրեցի նրա մասին, որպէսզի կիսովս եւս նանայի հայ հանճարին»:

Ահա եւ Մեթելայտիս կարծիքներէն մէկը Նարեկացիի մասին:

«Եւ որքան շատ էի կարդում, այնքան բռնում էր շունչս: Վրայ էր հասել կիսմօխ այն երջանակի պահերից մէկը, երբ կայտարարում մտնու կարտանում մարդկային հանճարով: ... Ժամանակաշրջանի նշաններ են... Ատաւելապետ կարեւոր է ճանաչած գարդանաշրջերի հետեւում բաճակած մարդկային բովանդակութիւն. ես գզացի նշանուոր անհատին եւ նրա տանջուած, տառապալով ու պայքարող ոգին: Զգացի դրամատիկական տագնապ, որ հասանելի է միայն նրա՛ն, որ ցանկանում է ընդգրկել ու ըմբռնել կիսմօխի, ցանկանալով, տիեզերքի բոլոր գաղտնիքները»:

«Բագին»ի Անտոնովսկիի թիւով ընթերցողին սկիտի ներկայացնենք Մեթելայտիսի հետ հայրենի մամուլին մէջ երևցած կարգ զրոյց մը եւ կարճ բանաստեղծութեան մը՝ «Հայաստանի քերթ»:

Բազմը

200

Մեր յաջորդ թիւը կը հանդիսանայ «Բա-
զմ»ի 200րդ համարը, որ պիտի ունենայ բա-
ցառիկ բովանդակութիւն մը:

Այդ թիւին համար յատուկ գրութիւններ
պատրաստած են ասարեց, միջին եւ նոր սե-
րունդէն շուրջ քսան գրողներ:

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻԲԱՆԱՆ 50 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 27 ՏՈՂԱՐ
ՀԱՏԱՎԱՃԱՌ 5 Լ. ՈՍԿԻ

پاكين

مجلة شهرية ، ادبية وفنية علمية
مدير المسؤول
السيد ارتين كارنيك فزانجيان

•
PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE
Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

•
Բ Ա Գ Ի Ն

ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

•
ԽՐԱԳԻՐ
Գ. ՄՆԱԳԵԱՆ

Հեռագայմ՝ 296898